Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

20-21(558-559)
23.07.2019
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

# ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԵՐԲԵՎԻՑԵ ԵՍ ԻՄ ԽՂՃԻՆ ԴԵՄ ՉԵՄ ԳՆԱՑԵԼ



*Հուլիսի 17-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Մաքսիմ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին նվիրված հոբելյանական երեկո: Նա ճանաչված անուն է Արցախում և նրա սահմաններից դուրս: Նա Լեռնային Ղարաբաղը Մայր Հայաստանին միավորելու պահանջով 1965թ. հայտնի «13-ի նամակ»-ի հեղինակն ու ստորագրողներից է, ցավոք, այդ շարքից վերջին մոհիկանը: Պատասխանատու պաշտոններ է վարել Արցախի լրատվական դաշտում: Արցախյան շարժման տարիներին գլխավորել է Արցախի մայր թերթը՝ «Խորհրդային Ղարաբաղ»-ը, որը եղել է ազգային գաղափարախոսության հզոր ամբիոն և հայությանը միավորող զորեղ միջոց: Եղել է Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն: Տասնյակից ավելի գեղարվեստական գրքերի, հրապարակախոսական բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Նրան շատ գեղեցիկ ու դիպուկ բնութագրել է Հրանտ Մաթևոսյանը. «Զուսադրված գեներալ, որն այսօր էլ մարտական պոստում է, այսօր էլ շարունակում է ազգանվեր իր առաքելությունը»:*

*ԼՂՀ վաստակավոր ժուռնալիստ է: Արժանացել է Հայաստանի գրողների միության Դ.Դեմիրճյանի անվան մրցանակի, ԼՂՀ Եղիշեի անվան պետական մրցանակի, «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի:*

*Հոբելյանական երեկոյին ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Աժ խոսնակ Աշոտ Ղուլյանը, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, պաշտոնատար այլ անձինք, պատգամավորներ, կառավարության անդամներ, գրողներ, գրասերներ, արվեստասեր հասարակայնությունը: Հանդիսությանը Հայաստանից ներկայացել էր ՀԳՄ նախագահ Էդուարդ Միլիտոնյանը:*

*Երեկոն վարում էր լրագրող Ծովինար Բարխուդարյանը:*

*Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, որի բնութագրմամբ՝ Մաքսիմ Հովհաննիսյանն արցախահայ արձակի ռահվիրաներից է, որը գեղարվեստական խոսքը բարձրացրեց մի նոր աստիճանի՝ իր արձակով «ստեղծելով» Արցախը, ինչպես Հրանտ Մաթևոսյանը՝ Լոռին: Հովհաննիսյանն իր մեծ ավանդը բերեց նաև լրագրության մեջ՝ դժվարին տարիներին ղեկավարելով մայր թերթը, մամուլում և իր արձակում արծարծելով Ղարաբաղյան շարժումը:*

*Հոբելյարի մասին հնչեց ինչպես պաշտոնական, այնպես էլ գրչընկերների խոսքը՝ բոլորն էլ անկեղծ, ջերմագին: Ստորև ներկայացնում ենք դրանք:*

**Աշոտ ՂՈՒԼՅԱՆ,** *ԱՀ Ազգային ժողովի նախագահ.*

- Ինձ համար մեծ պատիվ է շնորհավորանքի խոսք ասել Արցախում վաղուց ճանաչված, սիրված գրողի և հասարակական գործչի հոբելյանական երեկոյին: Մաքսիմ Երվանդին իր հոբելյաններով մեզ պահում է ազատագրական պայքարի վերջին տասնամյակների բոլոր դրվագները ճիշտ իմաստավորելու զգացողության մեջ: Նա, իր բոլոր արժանիքներով հանդերձ, նաև կենդանի կամուրջն է 1965թ. Արցախի ազատության համար առաջին հավաքական պահանջի, 1988թ. համաժողովրդական շարժման պահանջատիրության և անկախ պետություն կերտելու ճանապարհի բոլոր կետերի միջև: Կյանքի բոլոր փուլերում հայրենի Արցախում անգնահատելի ներդրում եք ունեցել մշակույթի, գրականության, լրագրության զարգացման մեջ: Այն պատասխանատու պաշտոնները, որ Դուք եք ղեկավարել, շահել են Ձեր գործունեությունից: Ղարաբաղյան շարժման առաջին փուլում, երբ պայքարը հիմնականում ընթանում էր գաղափարական ասպարեզում, այդ պայքարի խոսափողն էր Արցախի մայր թերթը, որն այն տարիներին լույս էր տեսնում 100 հազար տպաքանակով: Թերթը հանդես էր գալիս ադրբեջանական հայահալած քաղաքականության դեմ, հանուն ազատության և անկախության, հանուն «Միացում» գաղափարի: Սա կարևոր առաքելություն էր, որին թերթը ծառայեց մեր պահանջատիրությունը ճիշտ ձևակերպելու և համայն հայությանը համախմբելու այդ գաղափարի շուրջ: Անկախության տարիներին Դուք լծվել եք Արցախի Հանրապետության պետականաշինության սուրբ գործին՝ Ձեր ավանդը բերելով պետական կառավարման օղակում և լրատվության ինստիտուցիոնալացմանը ու հետագայում հանրային հեռուստատեսության գործունեության կատարելագործմանը: Ձեզ նաև վարպետորեն հաջողվում է համադրել լրագրողի սուր գրիչը արձակագրի խոր, նրբանկատ, զգայական խոհերի հետ: Ձեր ստեղծագործություններում հայրենիքն է իր ողջ հմայքով, արցախցին է իր առօրյա կյանքով, հոգսերով, հույզերով և հույսերով:

Դուք մեր ավագ սերնդի այն մեծ մտավորականն եք, որի նվիրական գործունեությունն ուղեցույց է լինելու գալիք սերունդների համար: Հիշում ենք՝ 80-ամյա Ձեր հոբելյանին ասացիք՝ «Չբռնե՞մ էլի ապրեմ»… Մաղթում եմ, որ այդ խոսքը հիմա էլ կրկնեք, բռնեք ու երկա՜ր-երկար ապրեք: Եռանդ, ծաղկուն գրիչ…

**Էդուարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ,** *ՀՀ ԳՄ նախագահ.*

- Մաքսիմ Հովհաննիսյանն իր գրականությամբ ընթերցողներ է «ստեղծել»: Սերունդներն իրար են փոխանցում նրա գրվածքները, քանզի Մ.Հովհաննիսյանի ստեղծագործություններն Արցախի պատմությունն են, արցախցու, հայ մարդու մաքուր հոգու արտահայտությունը՝ առօրյայից մինչև բարձր խոհեր և ընդհանրապես հայ մարդու ոգորումները, որ ժամանակ ու տարածություն չեն ճանաչում: Այսօր ամբողջ հայության ուշադրության առանցքում Արցախն է, արցախյան հիմնախնդիրը, և Արցախի գրողների ստեղծագործությունն է հիմնականում սերում այդ մեծ գաղափարը, հատկապես Մաքսիմ Հովհաննիսյանի ստեղծագործությունները: Նրա գործերը մշտապես սպասելի են եղել, հատկապես 88-ից հետո, երբ խոսքն այրող կրակի, անձողի պես հմայում էր և այրում: Այդպիսին է ճշմարիտ գրականությունը. ինքը և՛ սփոփում է, և՛ այրում, որովհետև նրա մեծ ոգին պատմության եռքով է ապրում: Այդպիսին է Արցախն այսօր, այդպիսին է մեր ժողովուրդը, ամբողջ հայությունը, այդպիսին է Հովհաննիսյանի ստեղծագործությունը՝ լինի հոդված, պատմվածք, թե որևէ գրական երևույթ: Այսօր հատուկենտ ունենք գրողներ, որոնց նահապետ կարելի է կոչել: Այդպիսին է մեր շատ սիրելի Մաքսիմը: (ՀԳՄ նախագահը գրական վաստակի համար գրողների միության մեդալ հանձնեց հոբելյարին):

**Նարինե ԱՂԱԲԱԼՅԱՆ,** *ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար.*

- Ուրախ եմ, որ առիթ և հնարավորություն ունեմ այսօր սեղմել ձեր ձեռքը և շնորհավորանքի ու բարեմաղթանքի հետ միասին նաև Ձեր հանդեպ իմ խորին հարգանքն ու ակնածանքն արտահայտել: Պիտի խոստովանեմ, որ չնայած ուշ-ուշ ենք հանդիպում, բայց հիշում եմ Ձեզ հաճախակի, որովհետև ինձ համար, և կարծում եմ՝ շատերի համար, Դուք եք արցախական նահապետը Ձեր ապրած կյանքով, Ձեր ստեղծած ժառանգությամբ, Ձեր ավանդով և իմաստությամբ: Ձեր անցած ճանապարհի հետագիծը լավագույնս բնութագրում է հայրենիքի ազատության, արդարության, արցախցու ինքնության համար պայքարը: Ձեր ներքին կռիվը, խռովքը ժամանակ առ ժամանակ վերաճում է ըմբոստության և ապա, մտքի մեջ թանձրանալով ու խտանալով ժայթքում՝ ծնունդ տալով նոր տողերի ու երկերի: Արցախի հանդեպ սիրուց են ծնվել ցավը, անհանգստությունը, հպարտությունը, որ կան և ապրում են Ձեր ստեղծագործություններում: Քանի՜-քանի սերունդ Ձեր տողերում պիտի գտնի և ճանաչի ինքն իրեն, քանի՜-քանիսին Ձեր խոսքը կստիպի ինքնամաքրվել և վերադառնալ հարազատ ակունքներին: Եվ քանի՜-քանիսը Ձեր գրչակից ընկերներից շնորհակալ են Ձեզ, որ տեր եք կանգնել իրենց անտիպ տողերին: Շնորհակալ եմ ես էլ, որ հնարավորություն եք տվել մասնակիցը դառնալու «Արցախապատում» մատենաշարի Ձեր նախաձեռնության ստեղծման: Ձեր գրիչը բեղուն է, Ձեր բառը կշիռ ունի, Ձեր խոսքն արժեքավոր է և միշտ պահանջված նաև այսօր, հատկապես այսօր, երբ չսխալվելու միակ երաշխիքը իմաստնությունն է, իսկ իմաստնությունը շնորհ է, որ տրվում է ընտրյալներին ի վերուստ, և իրականանում է տարիների փորձառությամբ: Շարունակեք Ձեր իմաստությամբ ծառայել մեր հայրենիքին, շարունակեք ապրել և արարել, քանի որ Ձեր ներկայությունը մեր կողքին զգաստացնող է:

**Վահրամ ԱԹԱՆԵՍՅԱՆ,** *լրագրող, քաղաքական գործիչ.*

- Իմ և ինձանից հետո եկած լրագրողական սերնդի անունից երախտագիտություն եմ հայտնում Մաքսիմ Հովհաննիսյանին, որ ստեղծել է իր լրագրողական դպրոցը: Շատ-շատերը լրագրության ասպարեզ ոտք են դրել նրա գորովալի, հոգատար հայացքի ներքո, և բոլորս պետք է արժանին մատուցենք Ձեզ՝ որպես խոսքի նահապետի, որպես քաղաքական և հանրային գործչի: Չափազանցություն թույլ տված չեմ լինի, եթե ասեմ, որ արցախյան պատմության վերջին տարիների ամենաքաջ տղաներից մեկը Մաքսիմ Հովհաննիսյանն է: Ինձ թույլ եմ տալիս օգտագործել «տղա» արտահայտությունը, քանի որ այդ արտահայտությունը թույլ է տվել Մեծն Հրանտ Մաթևոսյանը Մաքսիմ Հովհաննիսյանի հասցեին: Նա քաղաքական պայքարի ասպարեզ է մտել, երբ 32 տարեկան էր և հեղինակում էր «13-ի նամակ»-ը: Այնուհետև նա ենթարկվել է բարոյական և հոգեբանական ամենակոպիտ հալածանքների, բայց երբեք չի լքել իր Արցախը, չի լքել իր գրչակից ընկերներին և միշտ սպասել է իր աստեղային ժամին: Եվ այդ աստեղային ժամը Մաքսիմ Հովհաննիսյանի ու բոլորի համար 1988-ի փետրվարյան պոռթկումն էր և հետագա բոլոր տարիները, որոնք առանց բացառության անցել են նրա գրչի տակով: Եվ ամենակարևորը՝ պահպանել ու պահպանում է մտավորականի իր կեցվածքը: Նա միշտ ընդդիմադիր է, որովհետև գրականությունը, մշակույթը, արվեստը, լրագրությունը միշտ պետք է լինեն ընդդիմախոս: Եվ այդ ընդդիմախոսությամբ Մաքսիմ Հովհաննիսյանը կերտել է Արցախի ընդհանուր կերպարը: Շնորհակալություն Ձեր վաստակի, Ձեր բեղմնավոր գործունեության, Ձեր հասարակական, քաղաքական շնչի համար, որի ազդեցությունը բոլորս զգում ենք:

**Նորեկ ԳԱՍՊԱՐՅԱՆ,** *գրող, «Ազատ Արցախ» հանրապետական թերթի գլխավոր խմբագիր.*

- Մտածում եմ, որ Մաքսիմ Հովհաննիսյանի դեպքում, իսկապես, հրաշալի է երկար ապրելը, թեպետ հարյուր տարին էլ մի բան չէ: Մտածում եմ նաև, որ մեր, այսպես ասած, երկար ապրելն ամենևին էլ մեր պինդ լինելուց չէ, ոչ էլ, բնականաբար, մեր ցանկությունից: Եվ ես ինձ թույլ եմ տալիս ասել, որ մեր հոբելյարը հաստատ ինչ-որ գործարքի մեջ է երկնային տիրոջ հետ, որ նրան հաջողվել է ձեռք բերել Աստծո վստահությունն ու հովանավորությունը: Դա բոլորին չէ, որ հաջողվում է, հատկապես երբ գործդ գրչի հետ է, և ամեն օր՝ ուրիշներին թողած, ինքդ քեզ հետ ես կռիվ տալիս:

Չեմ կարող չասել՝ երանի՜ Ձեզ:

Գրականությունը վախկոտների, միամիտների, թույլերի, ինքնահրկիզումից փախչողի տեղ չէ, և Դուք տարածքներ եք նվաճել, տեսել եք այդ անմշակ տարածքները ու չեք կասկածել, որ դրանք Ձերն են: Իհարկե, հեշտ չի եղել, իհարկե, Ձեզ մեղադրել էլ են, միշտ չէ, որ հաղթել եք, բայց չեք զարկվել, չեք հրաժարվել Ձեր ունեցածից: Դուք Ձեզ չեք հանձնել սուտ քարոզիչներին...

Էլի՛ երանի Ձեզ:

Մի բան էլ ասեմ: Որտեղ էլ եղել եք, Ձեզանից մի բան մնացել է: Ուզում եմ ասել՝ Ձեզանից հնարավոր չէ հրաժարվել: Ով էլ փորձի հրաժարվել Ձեզնից, չի ստացվի, հնարավոր բան չէ: Խոստովանեմ՝ հրաժարվելն իմաստ չունի, քանի որ Դուք մեզ չեք խանգարում, Դուք մեզ օգնում եք: Ով էլ ասի՝ Ձեզնից բան չի սովորել, չհավատաք: Ես, օրինակ, չեմ հավատում:

Իսկ Ձեր տողը երբեք չի մոլորվել, ինքն իրեն չի կորցրել քաղաքական խաղահրապարակներում ու դիմակահանդեսներում, այն անընդհատ խորացել է, իմաստնացել, լցվել և դուրս է եկել բաց դաշտ: Դրա համար եմ ասում՝ երկար ապրելը հրաշալի է: Չնայած ոչ Դուք, պարո՛ն Հովհաննիսյան, ոչ էլ մեզանից յուրաքանչյուրը չգիտի՝ Ձեր գրած պատմվածքնե՞րն են շատ, թե՞ չգրվածները: Ձեր ասա՞ծն է շատ, թե՞ չասածը...

Չեմ կասկածում, Դուք դեռ չեք գրել Ձեր վերջին պատմվածքը: Դրա համար Ձեզ ժամանակ է պետք, և այդ ժամանակը Դուք ունեք... Ես անձամբ սպասելու եմ այդ պատմվածքին, եթե այն գրվի անգամ 20 տարի հետո:



☞2

ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-85

# ԵՐԲԵՎԻՑԵ ԵՍ ԻՄ ԽՂՃԻՆ ԴԵՄ ՉԵՄ ԳՆԱՑԵԼ

1 ☜

**Նվարդ ԱՎԱԳՅԱՆ,** *բանաստեղծ, լրագրող.*

- Մաքսիմ Հովհաննիսյանի ստեղծագործության ծանրության կենտրոնը Արցախն է՝ իր ցավով: Ցավ, որից ծնվել են նրա ոչ միայն գրողական, այլև մարդկային ու քաղաքացիական կյանքի փոթորիկներն ու արգասիքները: Գրողներից քչերը կարող են ասել՝ գրել եմ այնպես, ինչպես ապրել եմ: Այդ քչերից մեկը Մաքսիմ Հովհաննիսյանն է, որի կյանքն ընթացել է, իրոք, փոթորկված օվկիանոս մտած նավի պես՝ սկսած «13»-ի լեգենդար նամակից, վերջացրած «մենք» սովորական դերանունը համայն հայության համար թևավոր արտահայտություն դարձրած իր «Մունք»-ով, իր «Տերունական աղոթք»-ով, որը գրել է Արցախի մայր թերթում, աշխատողներիս աչքի առջև, երբ «9-րդ ալիք» էինք դիմակայում: Մաքսիմ Հովհաննիսյանի կողքին վատ աշխատելը, այսինքն՝ վատ գրելը, հնարավոր բան չէր: Հին թե նոր աշխատող, կամ պիտի նավարկեիր նրա պահանջածին համապատասխան, կամ էլ թողնեիր նավը: Եվ մի ամբողջ կոլեկտիվ անցնում էր «հովհաննիսյանական շկոլա» կոչվող «մաղով»: Ասեմ, որ նա միաժամանակ և իր գրչակիցների համար առավել բարձր ցատկաձող էր սահմանում գրականության մեջ: Ում էլ վերաբերեր խոսքը, նրա նկատումներն այնքան էին խորքային, որ չընդունել հնարավոր չէր: Մաքսիմ Հովհաննիսյանն այն գրողն է, ում մտքի թանաքը երբեք չի չորացել: Պատերազմական պայմաններում անգամ նա առատորեն ստեղծում էր ոչ միայն նախանձելի հրապարակագրություն, այլև փայլուն գեղարվեստական արձակ: Ավելի քան 60 տարվա գրական գործունեություն ծավալած և 80 տարեկանում էլ ընթերցողին նոր գրքով ներկայացած Մաքսիմ Հովհաննիսյանը գրքից գիրք է գնացել՝ չշփոթելով ընտրած հորիզոնականը, չփոխելով ծանրության կենտրոնը: Հովհաննիսյանի մոտ չկա բառոյական անկշռելիություն, ինչպես որ չկան կեղծ կոնֆլիկտներ: Մարդու ներքին ցնցումը նա պատկերում է հոգեբանական բարձր մակարդակով: Նրա հերոսները միշտ չէ, որ հաղթում են: Բայց այդ պարտությունը սովորականից դուրս պարտություն է, որովհետև նման դեպքերում հաղթում է նրանց հոգեկան գեղեցկությունը: Այլ կերպ ասած՝ նա բոլորիս առջև դնում է ներքին կարգինության պահանջ: Արձակագիր Հովհաննիսյանը հեռու է ոճ խաղից: Դրա կարիքը չունի: Նրա լեզուն ինքնին ոճ է: Նրան կարդալով՝ մենք տեսնում ենք բութ քարից պատ շարող այն որմնադրին, ում ամենաշատը հետաքրքրում է քարն իր ծանրության կենտրոնով ճիշտ տեղում դնելը՝ վասն պատի ամրության:

**Կարինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆ,** *թատերագետ.*

- Հարգարժան Մաքսիմ Երվանդի, խնդրում եմ երկար ապրեք, որ մենք մեր կողքին միշտ մեծ ունենանք, ուսուցիչ ունենանք, ումից կարելի է սովորել, ումից կարելի է պատկառել, ում ժլատ գովեստից դեռ կարելի է ոգևորվել, ում նայելով կարելի է գոտեպնդվել՝ մտածելով, որ դեռ ճանապարհ ունենք անցնելու: Ձեր «Արցախապատում» մատենաշարը գլուխգործոց է: Նրա հեղինակները վաղուց չկային. ոչ Դուք եք ճանաչել նրանց, ոչ խմբագրակազմի անդամները: Սակայն տարբեր պահոցներում դեղնած, խունացած թղթերի վրա մնացել էին այդ հեղինակների պատմությունները Արցախի մասին, որոնք խորհրդային տարիների համար չէին գրված: Դուք ձեռնամուխ եղաք այդ ձեռագրերի տպագրմանը: ԱՀ մշակույթի և երիտասարդության հարցերի այն ժամանակվա նախարար Նարինե Աղաբալյանի հովանավորությամբ լույս տեսան այդ գրքերը, և Դուք կարողացաք անանց արժեքներ փոխանցել մեր հետագա սերունդներին: (Կ.Ալավերդյանը Մ. Հովհաննիսյանին փոխանցեց թատրոնի կոլեկտիվի ուղերձը հոբելյանի առիթով, որում ասվում է. «Բարեբախտաբար, Ձեր բազմաբեղուն գործունեության անքակտելի մասն է կազմել նաև թատրոնը: Դուք թատրոնի հետ կապված եք եղել դեռևս 1965թ., երբ թատրոնի տնօրեն և ժողովրդական արտիստ Միքայել Կորգանյանի առանձնասենյակում մի խումբ խիզախ մտավորականների հետ միասին «13-ի նամակ»-ը գրեցիք, որ տարիներ շարունակ Ձեր համով-հոտով դիմանկարներով, հոդվածներով ուրախացրել եք մեր արվեստագետներին, որ երկար տարիներ մեր գեղարվեստական խորհրդի անդամ եք եղել և Ձեր ժլատ գովեստի խոսքերով, այնուամենայնիվ, ուրախացրել եք մեր դերասաններին: Մի կարճ միջոց թատրոնի տնօրեն եք եղել, որտեղ դրսևորվել են թատերական գործի կազմակերպչի Ձեր ընդունակությունները: Իսկ այսօր, երբ Ստեփանակերտի թատրոնը բավականին դժվար ժամանակներ է ապրում, Դուք նահապետի հոգեկից բարեկամի իրավունքով մեզ խորհուրդներ եք տալիս, ոգևորում եք մեզ, որպեսզի չհուսահատվենք և շարունակենք ստեղծագործել, որպեսզի չշրջվի Արցախի թատերական պատմության վերջին էջը: Մի խոսքով, Դուք միշտ մեզ հետ եք եղել և միշտ մեր կողքին: Մաղթում ենք Ձեզ պայծառ, խաղաղ առավոտներ ու վաստակից ծանրացած խաղաղ երեկոներ»):

**Սոկրատ ԽԱՆՅԱՆ,** *գրող, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.*

- Սովորաբար հոբելյանական միջոցառումների ժամանակ, երբ ներկա է լինում հոբելյարը, ելույթ ունեցողները դիմում են նրան հպարտությամբ ու բարեմաղթանքներով: Այսօր որպես հոբելյարի ավագ գրչեղբայր՝ ողջույնի խոսքս ուղղում եմ Քեզ, սիրելի ժողովուրդ: Ահա թե ինչու:

Այսօրվա մեր 85-ամյա հոբելյարը՝ Մաքսիմ Երվանդի Հովհաննիսյանը, գրական ասպարեզ իջնելու առաջին քայլերից սկսած՝ հայացքն ուղղել է դեպի Քեզ, ասել է թե՝ դեպի հարազատ մայրը: Նա իր արարող գրիչը թաթախել է Քո քախծից ու հույսից, ցավից ու բերկրանքից, վերքից ու կամքից բխած արցունքների մեջ ու դարերին հանձնել իր խոհն ու խոսքը միայն Քո՛ անունից: Նրա պատմվածքների ու նովելների, ակնարկների ու վիպակների, հուշերի ու փիլիսոփայական մտորումների հերոսը Դու ես: Քո գեղագետ որդին խոսքի աստղեր փնջեց Քո հոգու երկնակամարից, ծաղկեփնջեր կազմեց Քո երազած վարդերից: Նա Քո հուզաշխարհում տեսավ մեր Արցախի բազմերանգ բնությունը, մեր դրախտային բնության մեջ՝ Քո բնավորության բարեմասնությունները: Քո տաղանդի ուժը նրա արյան կանչը դարձավ քո կաթից, քո օրորոցայինից, քո տագնապից ու դասից: Քո պատգամների շնորհիվ նա դարձավ գրող, լրագրող, հրապարակախոս, թատերագետ, խոսքի վարպետ, ազատության զինվոր: Նրա բարձրարվեստ երկերի թևերը քո հաղթանակների էջերն են: Դու կարող ես բարձրաձայնել. «Գեղագետ որդիդ ես եմ», Քո գեղագետ որդին կարող է ասել. «Ես եմ իմ ժողովուրդը»:

Շնորհակալություն Քեզ, որ Քո անվանի որդիների շարքում մեր պատմությանն ես ընծայել Մաքսիմ Հովհաննիսյան գեղագետին, շնորհակալություն նաև Մաքսիմ Հովհաննիսյան որդուն, որ իր երկերով դարձել է Քո մշակութային աստղերից մեկը: Քո անունով: Քեզ համար: Իսկ ես, սիրելի ժողովուրդ, խոսքս կավարտեմ չափածո Քո անունից՝ նվիրված մեր հոբելյարին:

### ՄԵՐ ԱՍՏՂԵՐԸ

Մաքսիմ Հովհաննիսյանին՝ ծննդյան 85-ամյակի առթիվ

*Ամեն մի երկիր իր երկինքն ունի,*
*Իր աստղերն ունի երկնակամարում,*
*Հայոց աշխարհի աստղերն ուրիշ են,*
*Վառվում են, սակայն երբեք չեն մարում…*
*Լրացնում են Աստծո թերին՝*
*Հարստացնելով շարքը աստղերի:*

Երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից շատերը նույնպես հուշեր ունեն, դասեր, որ ամբողջ կյանքի համար են: ԱՀ հեռուստառադիոընկերության ՓԲԸ գործադիր տնօրեն Մերի ԴԱՎԹՅԱՆՆ այն երջանիկներից է, որը Մաքսիմ Հովհաննիսյանի հետ պարբերաբար շփվելու, նրա խոսքն ու խրատը լսելու առիթ է ունեցել: Նա ևս ելույթ ունեցավ՝ շնորհավորելով և իր երախտագիտությունը հայտնելով հոբելյարին:

Այսօր երիտասարդ բանասերները հովհաննիսյանագիտության հիմքերն են դնում: Բանասիրական գիտությունների թեկնածու Ալիսա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆ այդ համարձակներից է: Նրա դիտարկմամբ՝ Մաքսիմ Հովհաննիսյանի գեղարվեստական արձակն ու հրապարակախոսությունը իրենց բովանդակային ամբողջության ձևույթի մեջ ժամանակի հայ արձակի և հրապարակախոսության ինքնատիպ երևույթներից են՝ փիլիսոփայական ընդհանրացումներով, աշխարհընկալման, երևույթների վերարտադրման գեղագիտական սկզբունքներով ու չափանիշներով:

Վերելքի համար արմատներ են պետք՝ հողի ու պատմության խորքերը հասնող: Երեկոյին հենց այդ արմատների մշակութային մասը ներկայացրեց «Մենք ենք, մեր սարերը» համույթը:

«Չաստվածների խնջույքը» Մ.Հովհաննիսյանի ամենաթարմ գործերից է, որն իր մեջ կրում է նրա տարիների փորձն ու իմաստնությունը: Դրանց մի քանիսի բեմականացումը, որ ներկայացրին Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկ թատրոնի դերասանները, կարող է ավելի մեծ գործի սկիզբը դառնալ:

Երեկոյի ընթացքում ցուցադրվեցին դրվագներ լրագրող, Աժ պատգամավոր Վարդգես ԲԱՂՐՅԱՆԻ՝ Մ. Հովհաննիսյանի հետ տարիներ առաջ արած հարցազրույցներից:

Վերստին հնչեցին նրա խոստովանական խոսքերը, որ յուրատեսակ պատգամ են գրողական, լրագրողական աշխարհի մարդկանց և առհասարակ ճշմարիտ մտավորականին, քաղաքացուն.

«Իմ ողջ անցած տարիներին երբևիցե ես իմ խղճին դեմ չեմ գնացել, և կարող եմ բաց ճակատով ուղիղ մարդկանց ճակատին նայել, որովհետև երբեք ինքս ինձ չեմ դավաճանել: Դա լինի գեղարվեստական թե ժուռնալիստական գործ, որի համար ես ամաչեմ, որովհետև եթե չեմ ասել ամբողջ ճշմարտությունը, բայց երբեք էլ չեմ կեղծել, չեմ ստել: Հնարավոր է, որ ես սխալվել եմ ինչ-ինչ հարցերում, հնարավոր է, որ այնպես չեմ ասել, ինչպես պետք է, բայց երբեք չեմ աղարտել լեզուս կեղծելով, ստելով:

Մեր գերագույն հաղթանակն ու պահանջն այն է, որ Ղարաբաղը մնացել է հայկական, հայկական հող, և այս հարցում որևէ այլ հարց և որևէ այլ մոտեցում չի կարող լինել, և սա է գերագույն հաղթանակը, և սա է գերագույն պահանջը: Մնացածն ածանցյալ է: Այնպես որ, մեր բոլորիս աշխատանքը իզուր չի անցել»:

Հոբելյարի խոսքն ու երախտագիտությունն էլ առաջնահերթ ուղղված էր իր ժողովրդին.

- Շնորհակալ եմ, որ դուք կաք ոչ միայն իմ ընթերցող, այլև որպես ղարաբաղցի: Ձեր գոյությունը այս դաժան, այս չգիտեմ ինչ աշխարհում կարողանում եք պահել, պայքարել ու գոյատևել: Մեր յուրաքանչյուր ղարաբաղցի որ ապրում է այստեղ, տեսակի հերոսական դրսևորում է: Իսկ տեսակը իսկապես որ հերոսական է: Տարիներ առաջ Ամերիկայում հանդիպել եմ Ստենֆորդի դասախոսներից մեկի հետ, որը, ելնելով ռազմագիտության ինչ-ինչ դրույթներից, գուշակել է, որ մենք անպայման կպարտվենք, որովհետև բոլոր գործոնները խոսում են ի վնաս հայ ժողովրդի: Շնորհակալ եմ, որ դուք կաք և ժխտեցիք այդպիսի կարծիքը: Սովորաբար ասում են՝ տանը դերին տերօրհնյա չկա, բայց երևի դա այնքան էլ ճիշտ չէ: Շնորհակալություն մեր բոլոր ժամանակների ղեկավարներին, այս տարիների հատկապես, որ կարողացան մեր ժողովրդի ոգին բարձր պահել, որպեսզի մենք կարողանանք այս ծանր, չգիտեմ ինչ տեսակի աշխարհի մեջ դիմակայել, և շնորհակալ եմ, որ ձեր ջանքերով հնարավորություն ստեղծեցիք, որ այս երեկոն տեղի ունենա:

Երեկոյի մասնակիցները հեռացան՝ նվեր ստանալով Մաքսիմ Հովհաննիսյանի «Արցախ իմ, ցավ իմ գիրքը»:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

---

*Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# «ՉԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԽՆՋՈՒՅՔԸ» - 4

*(«Սպիտակ ագռավներ» շարքից «Խոսողության քաղցր պտուղները և կծղած երեսիատով մարդիկ»)*

Վերջերս, ըստ սահմանադրության, տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Ճիշտ է, զուռնա-դավալ չեղավ, բայց թամաշայի հանգին բան եղավ:

Նախընտրական մրցակոխի ժամանակ բավականին ջանքեր պահանջվեցին (վարչական և այլ կարգի խմորիչների օգնությամբ), որպեսզի ուսփախ տվող ընտրողներին հանդիպեցնեն դեպուտատության թեկնածուների հետ: Ստացվեց կարճ միացում, թեթև կայծ, ու կրակ բռնկվեց ու հանդարտվեց:

Թեկնածուները ոգևորված պատմեցին սիրուն-գեղեցիկ երկիր ունենալու գույնզգույն հեռանկարի մասին: Ոմանքները (դա մեր Արամիկի ոճն է) այնքան ոգևորվեցին, որ մի պահ իրենք էլ հավատացին իրենց ասածներին: Ունկնդիրները (ընտրողները) երկիմաստ քմծիծաղ էին տալիս, թեկնածուները իբր թե չեն նկատում, շարունակում են սահուն խոսել, խոստանալ… Է՛լ ոսկեփոր Բովուրխաններ, է՛լ զմրուխտախույր այգիներ ու հովիտներ, լա՜յ գնացող արտեր ու մարգեր, է՛լ ձկնախայտ Թարթառներ, է՛լ տոննաներով սև գույնի խավիար-իկրաներ, սարալանջերին մակաղած հոտեր, որոնք որոճալով կաթ են կուտակում մեր նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար...

Օխա՜յ…

Վերադառնալով խավիարի թեմային՝ հռետորը (թեկնածու) ներշնչված ասաց.

- Ես կուզենայի, որ պատերազմում հաղթանակած արցախցիները տեսանելի ապագայում իրենց ռացիոնում այնքան խավիար ունենան, որ…- այստեղ թեկնածուն մի փոքր դադար է տալիս, բազմանշանակ շուրջը նայում, ապա ներշնչված շարունակում,- որ խավիարից մեր պապերի ասած՝ քյըռահ մնան: Թշնամին էլ լսի ու տրաքի:

Ենթադրվում էր, որ ներկաները խոսքի ղվաթ կծափահարեն, բայց քառականջները՝ ոչ ասած, ոչ լսած, մնացին անհաղորդ:

Այնուամենայնիվ, պատգամավորության թեկնածուի խոսքը էնպես սիրուն էր հնչում, էնպես լավ էր ստացվում՝ սահուն-սահուն, որ մարդու բերանի ծորը գնա:

Ուրեմն՝ խոսողը մեղրածոր պատմում է, մյուս կողմը մտքում «հըմ» անում՝ չմոռանալով, ըստ հրահանգի, երեսներին ժպիտ կազմակերպել: Երկակի դիմախաղերը ըստ բեմագրի պետք է շարունակվեին այնքան ժամանակ, որպեսզի դահլիճը չլքվի, թեկնածուն էլ չդատապարտվի «ձայն բարբառո հանապատի»:

Խոսվեց ու ունկնդրվեց, անբռնազբոսի հակառակը ո՞նց է լինում, ահա այդ կարգի խոսվեց և ունկնդրվեց, մինչև դահլիճի տարբեր հատվածներում ոմանքները (Արամիկ) սկսեցին ճմլկոտել: Նախագահությունում նստածը աչքով նշան արեց, որ թեկնածուն խոսքը կարճ կապի, վերջինս էլ հեզահամբույր ասաց.

- Շնորհակալ եմ ձեզանից այս հետաքրքիր հանդիպմանը ներկայանալու համար:

Կողմերը գոհ բաժանվեցին:

Թեկնածուն աշխատեց հրաժեշտից առաջ առավել մեծ քանակով ձեռքեր սեղմել՝ անընդհատ մտածելով առաջին հնարավորությանը ձեռքերը օճառով (շամպույնով) լվանալու մասին:

Մեքենան մատուցվեց: Չնայած թեկնածուն շտապում էր մեկ ուրիշ հանդիպման, մեքենայի լուսամուտից ձեռքը թափահարեց ու գնաց: Մնացողները թեթևացած շունչ քաշեցին, նրանք շտապեցին օրվա հոգսերը հոգալու:

Հոգսերը՝ շատ, ձեռքները՝ կարճ:

Թեկնածուների երանելի ցանկությունն էր հինգ տարով ապահովել իրենց հասարակական նշանակությունը: Հետո գործը գործ ցույց կտա:

Ցանկանում էին բոլորը, բայց հաջողվեց ոմանց:

Ընտրություններից հետո ձեռնամուխ եղան արդյունքների ընդհանրացմանը: Այս անգամ էլ խոսողները խոսեցին, լսողները ականջի մի կողմով իմաց եղան: Ընդհանուր կարծիքը մեկն է՝ լոխ լյավա:

Մենք էլ մեր հերթին բացականչենք.

- Խնամի-բարեկամ շեն կենան, տարած հարսին դեմ կենան: Առաջին հերթին փեսան ու կոբրան (սկեսուրը), տալերը, մյուսները:

Ժողովրդավարական ընտրությունները անցել են եվրոպական չափանիշներով. այսպիսին է ՑԻԿ-ի միաբերան կարծիքը: Չեք հավատում՝ օտարերկրյա դիտորդներին հարցրեք:

Շուտով վերևից իջեցվում է հրահանգ՝ նյութերը բազմացնել ու տարածել աշխարհով մեկ: Թող համաշխարհային հանրությունը, Ադրբեջանն ու Թուրքիան չհաշված, իմանա և մեզ ճանաչի (դիվանագիտորեն): Ճանաչեն էլի, իրենցից հ՞նչ է գնում:

Տաշի՜-տուշի՜…

ԱՄԱՌ-2019

# ՃԱՄԲԱՐԱՅԻՆ ԹԵԺ ՇՐՋԱՆ



### ՃԱՄԲԱՐԻ ԵՐԳԸ

*Ի՞նչ ուրախ է այս ամառ.*
*Մենք նորից եկանք ճամբար,*
*Նոր ամառն է հյուր եկել,*
*«Արևիկ»-ն է մեզ բերել:*
*Դե, բալիկնե՛ր, ելեք վեր,*
*Ձեզ կսպասեն լավ օրեր,*
*Կմաղթենք ձեզ անհամար*
*Երջանիկ օրեր երկար:*
*Հե՜յ ճամբար, ջան ճամբար,*
*Հե՜յ ճամբար, «Արևիկ» ճամբար:*

Սա Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ.10 հիմնական դպրոցի հենքի վրա գործող «Արևիկ» ցերեկային ճամբարի երգն է, որն ամեն տարի ամառային թեժ շրջանում իր մոտ է կանչում մայրաքաղաքի բոլոր դպրոցներից աշակերտների: Արդեն երկրորդ հոսքի երեխաներն են իրենց օրերը «Բարձր պահենք ոգին մեր արի հանուն Արցախի ու ողջ հայության» կարգախոսով հետաքրքիր դարձնում այստեղ: Ճամբարի բացմանը ներկա էր ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը:

Բացման առիթով ճամբարականները կանգնեցին հանդիսավոր տողանի, մասնակցեցին քայլերթի, յուրաքանչյուր ջոկատ ներկայացրեց իր անվանումը, կարգախոսը, երգը: Այնուհետև ցուցադրեցին իրենց կարողությունները երգի, պարի, ասմունքի ասպարեզում, ինչպես նաև կարճ ժամանակամիջոցում սովորած համատեղ ելույթները՝ ժամանակակից ու ազգագրական պարեր:

Ճամբարի պետ՝ դպրոցի տնօրեն Անահիտ Հակոբյանը վստահեցրեց, որ պլանով նախատեսված տարբեր միջոցառումներն ուղղված են երեխաների հայրենաճանաչությանը, պատմաաշխարհագրական, մշակութային գիտելիքների ձեռքբերմանը:

Բացման կապակցությամբ ճամբարականներին ողջունեց և շնորհավորեց ու հետաքրքիր ու բովանդակալից առօրյա մաղթեց ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը. «Հրաշալի է, որ մենք կարողանում ենք ճամբարներ կազմակերպել: Այդ հնարավորությունը մեզ պարգևել են մեր այն տղաները, ովքեր իրենց կյանքի գնով ազատագրել են մեր հայրենիքը և այն տղաները, ովքեր այսօր էլ կանգնած են մարտական հերթապահության ու պաշտպանում են մեր հայրենիքը: Եվ շատ լավ է, որ դուք գիտակցում եք դա և ձեր երգերում, կարգախոսներում մեծարում ու գովերգում եք մեր հայրենիքի պաշտպաններին»: Նա ակնկալեց, որ այն գիտելիքները և կամային որակները, որ երեխաները ձեռք են բերում ճամբարում, օգնելու են, որ հետագայում իրենք էլ դառնան մեր հայրենիքի հզոր պաշտպաններ, և մաղթեց, որ առավելագույնը քաղեն ճամբարից և նոր գիտելիքներ, հմտություններ, նոր ընկերներ ձեռք բերեն:

ԿԳՍՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և արտադպրոցական ծրագրերի բաժնի վարիչ Ստեփան Օհանջանյանից տեղեկացանք, թե ինչ ճամբարներում են հանգստանում Արցախի երեխաները:

Հունիսի 19-ից 20 օրով սոցիալական առանձին խմբերի պատկանող 200 երեխա մայրաքաղաքից և հանրապետության բոլոր շրջաններից հանգստացել է Հանքավանի և Ծաղկաձորի «Աղբյուր», «Լուսաբաց» և «Հասմիկ» ճամբարներում:

Արդեն տեղեկացրել ենք հունիսի 24-ից մեկնարկած «Ասպետ» ռազմամարզական ճամբարի մասին: Հանրակրթական, միջին մասնագիտական և արհեստագործական ուսհաստատությունների 11-րդ դասարան փոխադրված տղաների արդեն 4-րդ հերթափոխն է հանգստանում այստեղ: Ընդհանուր առմամբ 4 հերթափոխով այս ճամբարում 8-օրյա ռեժիմով հետաքրքիր առօրյա կվայելեն 400 պատանիներ:

Հուլիսի 12-22-ը Ծմակահողի «Պատանի բնագետներ»-ի 10-օրյա ճամբարն էր դպրոցի տարածքում՝ վրանային պայմաններում, որին մասնակցում են շրջակա գյուղերից կիրակնօրյա դպրոց հաճախողները և Երևանի ֆիզմաթ դպրոցից հրավիրվածները:




Ճամբարի փակման հաջորդ օրը՝ 23-ին կմեկնարկի երկու հերթափոխով, 10-օրյա տևողությամբ «Եկ Արցախ» ծրագրով ճամբարը, որում կընդգրկվեն ԱՀ և ՀՀ 11-12-րդ դասարանների աշակերտները՝ 160 հոգի:

Առաջին անգամ Հայաստանի բանկերի միության նախաձեռնությամբ ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքում հուլիսի 20-ից կազմակերպված ճամբարում 10-օրյա հանգիստ կանցկացնեն 10-15 տարեկան արցախցի 70 երեխաներ:

ՀՅԴ Արցախի և Սփյուռքի երիտասարդական միությունները հուլիսի 8-ից 10-16 տարեկան երեխաների համար կազմակերպել են ճամբարներ Ստեփանակերտում և շրջաններում. մայրաքաղաքի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցին կից (200 հոգի), Ասկերանի Էդ. Բարսեղյանի անվան հոսքային/միջնակարգ (200 հոգի), Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ/հոսքային (50 հոգի), Շուշիի Դ.Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված (80 հոգի) դպրոցներում:

Օգոստոսի 5-ից 10 օրով 90 երեխա կմեկնի ԵԿՄ-ի կողմից Սևանին մերձ «Ծովինար» ճամբար:

Այլ կազմակերպությունների և բարերարների կողմից նույնպես Արցախի տարբեր վայրերում հերթով կազմակերպվում են ճամբարներ, որոնք դպրոցականների ամառային հանգստի ակտիվ կազմակերպման, ստեղծագործական հնարավորությունների զարգացման և իրականացման, ինքնադրսևորման, համընկերային փոխհարաբերությունների ստեղծման, հետաքրքիր ու բովանդակալից օրեր անցկացնելու լավագույն միջոց են:

**Ս.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

# «ԼՈՒՅՍԻ ՄՈԼՈՐԱԿ» ԿՐԹԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀԱԶԱՐԱՎՈՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ



Հուլիսի 13-ին Ստեփանակերտում ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի և «Իմ քայլը» հիմնադրամի համագործակցությամբ կայացել է «Լույսի մոլորակ» ծնողի ու մանկան կրթական փառատոնը՝ իր բազմազան ժամանցային ծրագրերով հյուրընկալելով հազարավոր ծնողների ու երեխաների:

Կազմակերպիչ ընկերություն՝ CREO Project Solutions: Փառատոնը նպատակ ուներ հավասար հնարավորություններ ստեղծել սոցիալական ամենատարբեր խավերի ծնողների և մանուկների համար, ինչպես նաև աջակցել հատուկ խնդիրներով երեխաների ու նրանց ընտանիքների ինտեգրմանը հասարակությանը:





Մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանն իր խոսքում մասնավորապես ասել է. «Այսպիսի միջոցառումները հնարավորություն են ստեղծում ոչ միայն երեխաների կրթության ու ինտելեկտուալ ժամանցի, այլ նաև ընտանիքի ներդաշնակ զարգացման համար: Արդյունքում՝ ստեղծված բավականին բարենպաստ պայմաններն ինքնին նպաստում են մարդկանց բազմակողմանի իրազեկվածության բարձրացմանը և մարդու իրավունքների պաշտպանության հիմքերի ամրապնդմանը: Մենք կարևորում ենք նմանատիպ ներառական ու զարգացնող միջոցառումների կազմակերպումը երեխաների իրավունքների պաշտպանության ու ընտանիքավարության պատշաճ մշակույթի զորացման տեսանկյուններից»:

«Իմ քայլը» հիմնադրամի տնօրեն Հովհաննես Ղազարյանը նշել է, որ այս միջոցառմամբ հիմնադրամը գործունեություն է սկսում Արցախում՝ նախատեսելով իր բոլոր ծրագրերն իրականացնել նաև այստեղ:

Միջոցառման ընթացքում երեխաների համար կազմակերպվել էր հեքիաթի անկյուն հայտնի դերասանների հետ, ֆիզիկայի, քիմիայի և այլ բնագիտական առարկաների ինտերակտիվ անկյուններ, մանկական թատերական ներկայացումներ, խաղեր և այլն:

Մինչ երեխաներն զբաղված էին իրենց համար նախատեսված զարգացնող ու ժամանցային ակտիվություններով, ծնողները լսել են դասախոսություններ և առաջատար մասնագետների հետ քննարկել իրենց հուզող ամենատարբեր հարցեր, ներառյալ՝ հղիություն, ծննդաբերություն և հետծննդաբերական շրջան, նորածնային խնամք, կրծքով կերակրելու առանձնահատկությունները, երեխայի զարգացում և հատուկ կարիքների բացահայտում և այլն:





*ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ*

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

# ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

*Քննաշրջանի մասին «Լուսարար»-ի հետ իր դիտարկումներն է ներկայացնում ԱՀ ԿԳՍՆ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի ՔԱՐԱՄՅԱՆԸ*



***- Պարոն Քարամյան, կխնդրեինք նախ համառոտ բնութագրել միասնական քննությունների արդյունքները:***

- Դրանք, ինչպես միշտ, անցել են առանց խախտումների, հանգիստ մթնոլորտում: 2011 թվականից, երբ սկսեցինք միասնական քննությունները բոլոր առարկաներից, մեծ իրարանցում եղավ, լարված վիճակ. մի դիմորդի համար հավաքվում էր 4-5 հոգի, և անհասկանալի մթնոլորտ էր տիրում: Ես այն ժամանակ ասել էի, որ կգա ժամանակ, երբ ընդունելության քննությունները արտակարգ երևույթ չեն դիտվի, այլ՝ հասարակ միջոցառում: Հիմա արդեն այդ վիճակում ենք: Դիմորդները հանգիստ իրենց աշխատանքները կատարել են, ներքին կամ արտաքին միջամտություն չի եղել: Արդյունքների մասին ասեմ, որ որոշ առարկաներից առաջընթաց ունենք, որոշները ոչ պատշաճ մակարդակի են: Բայց ընդհանրապես ասեմ, որ վերջին տարիներին նույն վիճակում լինելու միտումը պահպանվում է:

Դրական կարելի է համարել ըստ առարկաների վիճակը: Մաթեմատիկա առարկայից 14-20 միավոր եթե նախորդ տարի ստացել է դիմորդների 15%-ը, ապա այս տարի՝ 30%-ը: Ինչպես տեսնում եք, «լավ» և «գերազանց» գնահատականները (որակը) ավելացել են երկու անգամ: Երկու դիմորդ ստացել է 20 միավոր, ինչը նախկինում չունեինք: «Ֆիզիկա» առարկայի արդյունքները նույնպես նախորդ տարվա համեմատ բարձր են, 5-6%-ով բարելավվել են: 20 միավոր ստացած դիմորդ էլ է եղել, որ վերջին տարիներին չկար: «Կենսաբանություն»-ից 14-20 միավոր նախորդ տարի եթե ստացել է 24%-ը, ապա այս տարի՝ 44%-ը. որակը բարձր է: «Հայոց լեզու և գրականության» վիճակը նույնն է, բայց «Անգլերեն»-ի 20 միավորների քանակը նվազել է: Նախորդ տարիներին այս առարկայից ինը դիմորդ է ամենաբարձր միավորն ստացել, իսկ այս տարի՝ երեք հոգի: Այստեղ որոշակի նահանջ ունենք: Մյուս առարկաներից վիճակը գրեթե անփոփոխ է: «Ռուսաց լեզու»-ից 0-7,25 միավոր քիչ են ստացել, որակն էլ նույն կերպ ցածր է: Ճիշտ է, երկու հոգի 18-20 միավոր է ստացել, որը նախորդ տարի չկար, բայց վիճակը կարելի է գնահատել միջին: Եթե մյուս առարկաների որակը 30%-ից բարձր է, այստեղ դա չկա:

***- Բողոքներ եղե՞լ են:***

- Մեկը եղել է «Ռուսերեն»-ից. տարբերակներից մեկում պատասխանը սխալ էր: Ճշգրտված ցուցակները եկել են: Բողոքներ կային «Ֆիզիկա» առարկայից. անհամաձայնությունը թվերի գրառման առնչությամբ էր, անփույթ էին գրված, ուստի համակարգիչը չի կարողացել ընթերցել: Այդ տարբերակը գրած դիմորդների միավորները 1-ով բարձրացվել են: Որոշ դժգոհություններ եղել են թեստերից, իբր առաջադրանքները ծրագրից դուրս են: Իսկ այդպիսի բան չկար: Բոլոր հարցերը շտեմարանից էին, բայց ոչ թե նույնը, այլ՝ նույնատիպ: Մեր խնդիրը դրա մեջ է: Ես միշտ ասել եմ, որ շտեմարանը մի կողմից դրական երևույթ է, որ դիմորդները կողմնորոշվեն, սակայն մյուս կողմից բացասական է, քանի որ դիմորդները անգիր են անում և անգամ նույնատիպ առաջադրանքը քննության ժամանակ չեն կարողանում կատարել՝ պատճառաբանելով, թե ծրագրից դուրս է: 10-րդ դասարանից սկսած, դպրոցում ոչ թե ըստ ծրագրի առաջադրանքներ են լուծում, այլ շտեմարանի առաջադրանքները ու ոչ թե ծրագիր են սովորում, այլ շտեմարանն են անգիր անում: Եթե հետագայում հեղինակներն այնպիսի թեստեր մշակեն, որոնցով հնարավոր լինի գիտելիքն ստուգել, ավելի ճիշտ կլինի:

***- Դուք ասացիք, որ «Ֆիզիկա», «Մաթեմատիկա» առարկաների որակական ցուցանիշները բարձր են: Իրո՞ք որակն է բարձրացել, թե՞ թեստերն են հեշտ եղել:***

- Ընդհանրապես դրական շեմը հաղթահարելու տեսակետից ունենք ավելի մատչելի թեստեր: Բայց որ ասենք տարբերությունը մեծ է նախորդ տարվա համեմատ, ճիշտ չի լինի: Որպեսզի դիմորդն ստանա 18-20 միավոր, պետք է գիտելիք ունենա:

***- Ինչ որ է, քննաշրջանն ավարտվել է, մրցույթը կայացել է, հուլիսի 15-ից ընդունվածների ցուցակները կախված են, հուլիսի 15-20-ը անց է կացվել թափուր տեղերի համար մրցույթ: Ի՞նչ պատկեր ունենք բուհերում: Խոսենք պետականի մասին:***

- ԱՀ շրջանավարտների համար Արցախի պետական, Շուշիի տեխնոլոգիական և ՀՀ բուհերում Արցախին հատկացված տեղերի քանակն ընդհանուր առմամբ 930 էր, որից անվճար՝ 340: Դրանց հայտագրվել էր 876 դիմորդ, ընդունվածների քանակը՝ 672, որից անվճար՝ 244: ԱրՊՀ ընդունվել է 462 դիմորդ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան՝ 83: ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության երաշխավորագրերով ՀՀ բուհերում հատկացված տեղերը 87-ն են, որից անվճար՝ 60: Դրանց հայտագրվել է 163 դիմորդ: Այստեղ մի շարք մասնագիտությունների գծով դիմորդներ չեն հայտագրվել, փոխարենը Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի վճարովի և անվճար 11 տեղի համար եղել է 55 դիմորդ: Նախնական տվյալներով այստեղ ընդունվել է շուրջ 30 հոգի: Սահմանված քանակից մրցույթից դուրս ավել ընդունվել են հիմնականում «Պատիվ ունեմ» ծրագրով, որն Արցախում իրականացվում է առաջին անգամ՝ բացառության կարգով:

***- Միավորների, անցումային շեմի մասին:***

- Ընդհանուր առմամբ, միավորները գոհացուցիչ են: Այսպես, եթե տարիներ առաջ «Բուժական գործ» մասնագիտությամբ ընդունվում էին երկու քննությունից 20-24 միավոր ստացած դիմորդները, և դա լավ էր համարվում, այսօր արդեն 33 միավորն է անցումայինը: Հատկապես լավ է «Մաթեմատիկա»-ի վիճակը: ԵՊՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությանը հատկացված էր մեկ նպատակային տեղ, բայց ընդունվել է հինգ հոգի, որոնց միավորները 36-ից բարձր են. երկու քննությունից ընդունվել են 18-ից բարձր միավորներով՝ գերազանցությամբ: Տիգրան Հակոբյանը (Ստեփանակերտի հ. 8 դպրոց) երկու առարկայից 20 միավոր է ստացել: Այդքա՛ն բարձր միավորներ, այն էլ՝ այդ մասնագիտությունից և այդքա՛ն պահանջված: 39,5 միավոր հավաքել է Մեծ շեն գյուղից Ռայա Եսայանը: Բոլոր հինգն էլ հաղթահարել են գերազանցության շեմը: Ինչպե՞ս չխրախուսել նրանց, բոլորն էլ արժանի են, և պահուստային տեղերը նրանց տալն արդարացված է: Նույնն էլ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությունում է: Արմենուհի Մանուկյանը՝ Հաթերքից, Դավիթ Իշխանյանը՝ ֆիզմաթ դպրոցից, Նարեկ Սարգսյանը՝ Կարմիր շուկայից հաղթահարել են գերազանցության շեմը:

***- Իսկ ինչպիսի՞ն է պատկերը ԱրՊՀ-ում: Ինչպե՞ս են համալրվել մանկավարժական մասնագիտությունները:***

- «Մաթեմատիկա»-ն համալրված է, ընդունվել է 22 հոգի: Ունենք երկու միասնական քննությունով ընդունված ութ հոգի: Արդեն քանի տարի է, տեխնիկական առարկաների գծով մանկավարժական մասնագիտություններ անվճար կարող են ընդունվել մեկ միասնական քննությամբ, մյուսը՝ ատեստատի գնահատականով: Բայց տեսնում ենք, որ նաև երկու առարկայից միասնական քննությամբ ընդունվել ցանկացողներ կան: «Մաթեմատիկա»-ից մեկ հոգի ընդունվել է 35,25 միավորով: Բարձր ցուցանիշ է:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»-ի, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»-ի համալրվածությունը վերջին տարիներին լավ է, համապատասխանաբար՝ 22 և 31 հոգի: Այս վերջինում միայն 11 հոգի ընդունվել է անվճար համակարգ: «Ֆիզիկա» մասնագիտությամբ ընդունվել է վեց հոգի, «Կենսաբանություն»՝ 14: Լեզուների մասին խոսք չկա, ինչպես միշտ, համալրված են. «Հայոց լեզու և գրականություն» ընդունվել է 45 հոգի, «Անգլերեն»՝ 34, «Թարգմանչական գործ»՝ 22, «Պատմություն»՝ 20: «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» ընդունվել է 35 դիմորդ: Վատ չէ վիճակը «Կերպարվեստ»-ում՝ 14 հոգի, համեմատաբար քիչ են ընդունվել «Նախնական զինվորական պատրաստություն» մասնագիտությամբ՝ 11 հոգի: Իսկ ահա «Քիմիա»-ի վիճակը վատ է. 4 հոգի է ընդունվել, որից երկուսը զորակոչվելու է բանակ: Հասկանալի է, որ երկու հոգու համար խումբ չեն պահելու: Իմ կարծիքով՝ եթե բժշկական համալսարան ընդունվեին այնքան, ինչքան նախատեսված է նպատակային տեղերով, ապա մրցույթից դուրս մնացածների մի մասը գուցե ցանկություն ունենար նստել «Քիմիա»-ում:

ԱրՊՀ-ում ամենաբարձր վարկանիշը շարունակում է ունենալ «Ֆինանսներ»-ը: Տնտեսագիտական բլոկում սրանից բացի նաև «Կառավարում» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտություններն են: Վերջինս քիչ են ընդունվել: Պատճառն այն է, որ այստեղ բոլոր տեղերը վճարովի են: Բացի այդ, տնտեսագիտական բլոկը մեծ է Արցախի պայմանների համար. մենք այդքան շրջանավարտներ չունենք, որ ցանկանան հավասարաչափ համալրել այս բոլոր երեք մասնագիտությունները:

Ափսոսալ կարելի է, որ «Հոգեբանություն» մասնագիտությամբ քիչ են ընդունվել: Այս մասնագետներն առաջիկայում պահանջված են լինելու. շուտով պետք է ստեղծվի Մանկավարժահոգեբանական կենտրոն, դպրոցներում կբացվեն հաստիքներ մինչև 2022 թվականը: Այս մասնագետների պահանջարկը շրջաններում մեծ կլինի: Բայց ընդունվել է ընդամենը վեց հոգի: Ըստ երևույթին, այս ուղղությամբ քարոզչության պակաս է եղել:

Նախկինում վարկանիշ ունեցող «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ են քիչ ընդունվել՝ հինգ հոգի: Դիմորդները հասկացել են, որ այս ոլորտում աշխատանք գտնելու հնարավորությունները նվազ են:

ԱրՊՀ-ում ունենք բարձր միավորներով ընդունվածներ: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ընդունվածների ցանկում 1-ին տեղը 19,25 միավոր է: Առաջ այստեղ հիմնականում գալիս էին ուրիշ բաժիններից մրցույթից դուրս մնացածները: Բայց հիմա այստեղ 30-ից բարձր միավորներով ընդունվածներ կան: Իսկ երկու հոգի՝ Մարիամ Ղահրամանյանը (Ստեփանակերտ) և Դիանա Աղայանը (Մարտակերտ) ստացել է 37,5 միավոր:

Բանասիրականում 19,75, 19 միավորներով երեխաներ կան ընդունված: Անվճար համակարգի անցումային շեմը երկու առարկայից 33 միավորն է, երեք առարկայից՝ 47 միավորը. շատ լավ է:

«Ֆինանսներ»-ում անվճարները 51 միավորից բարձր են: Այս միավորներով Հայաստանում էլ կարող էին անվճար ընդունվել: «Իրավագիտություն»-ից ունենք բարձր՝ 58 միավոր հավաքած դիմորդ, որն Ասկերանի միջնակարգ դպրոցի շրջանավարտ է:

***- Երբ թվարկում եք բարձր միավորներով ընդունվածներին, նկատում ենք, որ նրանք միայն մայրաքաղաքի դպրոցներից չեն:***

- Տարբեր տեղերից մենք ունենք լավ երեխաներ: Վերը թվարկածներին ավելացնենք ևս մի քանիսին: ՀՀ բուհերում Արցախին հատկացված տեղերից «Մշակութաբանություն» մասնագիտություն ընդունված Թագուհի Սահակյանը Հաթերքից է՝ 37,75 միավորով, Աննա Գալստյանը՝ Նորագյուղից, դարձյալ բարձր միավորներ ունի, «Իրանագիտություն» ընդունվածը Ճարտարի հ. 5 դպրոցից է:

***- Ըստ Ձեզ, այդ երեխաները հենց այդ գյուղերո՞ւմ են պարապել, թե՞ քաղաքում:***

- Հնարավոր չէ առանց հիմք ունենալու կրկնուսույցով այդքան բարձր միավոր ունենան, գերազանցության շեմն անցնեն: Մենք լավ ներուժ ունենք, մնում է ճիշտ օգտագործենք:

***- Սովորաբար բողոքում ենք դպրոցներում մաթեմատիկայի ոչ պատշաճ դրվածքից, բայց տեսնում ենք, որ լավ արդյունքներ կան:***

- Նայած՝ որտեղ: Երբ ասում ենք՝ լավ չէ, չի նշանակում, թե վատ է: Նշանակում է՝ դա մեր շեմը չէ, մենք կարող ենք ավելի բարձր ցուցանիշներ ունենալ: Ընդհանրապես, եթե բոլոր պայմաններն ստեղծվեն, մեր երեխաների պես երեխաներ չկան:

***- Նորից անդրադառնանք բնագիտական առարկաներին, որոնց գծով մանկավարժական կադրերի դեֆիցիտ ունենք: Ինչպե՞ս եք Դուք տեսնում այս հարցի լուծումը:***

- Բնագիտական ոլորտում պետք է խրախուսանքներ լինեն: Մենք հիմա ունենք մոտիկ գյուղեր, չենք ասում՝ Քաշաթաղի կամ Շահումյանի շրջանները, որտեղ «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաները չեն դասավանդվում: Կարելի է, օրինակ, այս մոտեցումը ցուցաբերել, որը խորհրդային տարիներին կար՝ լինեին ֆիզմաթ կամ քիմիա-կենսաբանություն մասնագիտություններ: Ֆիզիկայի դասաժամերը քիչ են, նույնն էլ՝ քիմիայի, դրույք չի ստացվում: Բայց եթե միացնենք, հնարավոր է, որ կարողանանք մարդկանց ուղղորդել:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԻՑ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ




*Edcamp Armenia 2019 խորհրդաժողովը Պարադիգմա կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ առաջին անգամ կազմակերպվել է Երևանում սույն թվականի հունիսի 29-ին, ունեցել է կրթության ոլորտի շուրջ 400 մասնակից՝ ուսուցիչներ, դասախոսներ, տեսուչներ և տնօրեններ Հայաստանից, Արցախից և արտերկրից: Միջոցառման կարգախոսն էր՝ «Ուսուցիչը կարևոր է, ուսուցումը՝ էական»:*

*Մոտ 60 խոսնակներ ներկայացրել են կրթությանն առնչվող բազմաբնույթ թեմաներ, քննարկվել են հրատապ խնդիրներ, առաջադրել ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան տեսակետներ: Նման միջոցառումները հնարավորություն են ընձեռում մասնակիցներին ձեռք բերել փորձ, ինքնավստահություն, հմտություններ, մոտիվացիա:*

*Edcamp Armenia 2019 խորհրդաժողովի շրջանակներում իբրև խոսնակ ներկայացրել եմ «Առաջադրանքը՝ որպես նպատակից վերջնարդյունքի հասնելու նախապայման» թեման, որի հիմնական դրույթներն ու ձևակերպումները սեփական փորձառությանս ընդհանրացումներն են:*

Դպրոցում առաջնահերթ խնդիր է ուսուցիչ-աշակերտ փոխկապակցված աշխատանքի արդյունավետության ապահովումը, նրանց երկխոսության վրա հիմնված համատեղ գործունեության շրջանակի ձևավորումը: Այս երկխոսության և համատեղ գործունեության հիմքում ընկած են հարցադրումներն ու առաջադրանքները, որոնք երկուսն էլ հավասարապես կարևոր են ուսումնառության գործընթացում: Քանի որ ցանկացած տարիքային խմբի հետ աշխատելիս նախընտրելի է և կարևոր ուսուցանողի և սովորողի միջև փոխադարձ կապն ու հաղորդակցություն ստեղծելը:

Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ պատկերացնում և պլանավորում է իր անելիքը, որոշակիորեն նախապատրաստում անհրաժեշտ մեթոդներ, հնարներ ու գործիքները, որոնք անհրաժեշտ են տվյալ թեմայի ուսուցման համար:

Մանկավարժական գրականության մեջ կա այսպիսի ձևակերպում. «Գիտելիքների կառուցման շրջան», որը հենց ներառում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ունենալ դասն սկսելուց առաջ և ոչ միայն դասը. երբեմն անհրաժեշտ է լինում նախօրոք պլանավորել ամողջական թեմայի ուսուցման ընթացքը՝ ներառելով նաև դասից դուրս հանձնարարվելիք տնային և անհատական աշխատանքները:

«Գիտելիքների կառուցման շրջանը» կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

- վերջնարդյունքի սահմանում
- մեթոդների ընտրություն
- առաջադրանքի մշակում

Նշվածները փոխկապակցված են իրար, և մեկի ճիշտ ընտրությունը ապահովում է մյուսի հաջողությունը, իսկ երեքը միասին իրենց հերթին ապահովում են ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՈՒ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ:

Այն, որ դասարանում կատարվում է ուսումնառություն, որը ենթադրում է դասավանդում, նաև նպատակի և վերջնարդյունքի կանխատեսում, նոր ձևակերպում և նոր սահմանում չէ: Նորը յուրաքանչյուր ուսուցչի կողմից յուրաքանչյուր առանձին թեմային համապատասխան՝ առավել նպատակահարմար գործիքակազմի ընտրությունն է, նոր նպատակի և նոր վերջնարդյունքի սահմանումը:

Ինչո՞ւ եմ մանկավարժական փորձառությանս ընթացքում կարևորել առաջադրանքը:

Թվում է՝ ամեն ինչ շատ պարզ ու հասկանալի է. բացատրվում, ուսուցանվում է թեման, և դասագրքում կամ լրացուցիչ ձեռնարկներում կան բազմաթիվ ու բազմապիսի առաջադրանքներ, որոնք կարելի է հանձնարարել գրավոր կամ բանավոր որպես դասարանական կամ տնային աշխատանք՝ համարելով, որ կատարված են չափորոշչային պահանջներն ու մեր իսկ պլանավորած աշխատանքի անհրաժեշտը: Հաճախ հենց այսպես էլ արվում է: Սակայն պետք է խոստովանենք, որ միևնույն առաջադրանքը տարբեր խմբերում, նույնիսկ զուգահեռ դասարաններում հետաքրքրության տարբեր աստիճանով է ընկալվում և կատարվում:

Կան առաջադրանքին, նրա ձևակերպման ու առաջադրման հետ կապված կարևոր նախապայմաններ, որոնք ուսուցչի փորձառու աչքն անպայման պետք է նկատի ու գնահատի: Ուստի և նշում ենք, որ նպատակահարմար է յուրաքանչյուր դասի վերջնարդյունքի սահմանման, մեթոդների ընտրության հետ միաժամանակ մշակել համապատասխան առաջադրանքներ: Իսկ այս ամենի համար կարևոր նախապայման են թեմայի բնույթը, նրա կիրառելիությունը, առնչություններն ու աղերսներն այլ թեմաների հետ:

Ճիշտ մշակված առաջադրանքներն ապահովում են դասի բազմազանությունը: Դրանք կարող են ունենալ հայտորոշիչ դեր՝ հնարավորություն ընձեռելով պարզելու գիտելիքի յուրացման աստիճանը: Կարող են կապել անցած նյութը նորին և պարունակել մարտահրավեր՝ ներառելով նոր նյութի վերաբերյալ ինչ-ինչ տարրեր:

Սովորողի անհատական կարիքներից ելնելով՝ առաջադրանքի միջոցով կարելի է կիրառել ուսուցման տարբերակվածություն, զարգացնել մտածողություն, տրամաբանություն, խթանել ստեղծագործականությունը:

Ուսումնառության բարդ գործընթացը ենթադրում է նաև առաջադրանքի միջոցով գնահատման տարբեր տեսակների կիրառում:

Առաջադրանքի՝ որպես ճիշտ ընտրված գործիքի օգտագործումը հնարավորություն է տալիս աշխատելու տարբեր տարիքային խմբերում և լուծելու սովորողների համագործակցելու հնարավորությունը:

Ուսումնառության գործընթացի տարբեր իրավիճակներում տարբեր սովորողներ կարիք են զգում առանձնահատուկ վերաբերմունքի և ուշադրության: Անհրաժեշտ է հաշվի առնել առանձին անհատների պատրաստվածությունը, նրանց հնարավորությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները: Ուսուցչի՝ որպես իր մասնագիտության և դասավանդած առարկայի գիտակ լինելը մասնավորապես կարևորվում է նրանով, որ տարաբնույթ առաջադրանքներ կազմելիս անհրաժեշտ է համարում հաշվի առնել և՛ սովորողների անհատական պատրաստվածությունն ու կարիքները, և՛ միջառարկայական, և՛ միջթեմատիկ կապերը: Տվյալ դեպքում որպես ուսումնական գործընթացի կազմակերպման առաջատար՝ ուսուցիչը պետք է սահմանի ճիշտ և հստակ վերջնարդյունք և ուղղորդի աշակերտին, որպեսզի վերջինս գիտելիքների ձեռքբերման սանդղակը կառուցի ամուր հիմքերի վրա և փոխշաղկապված ձևով:

Այսպիսով, առաջադրանքը հնարավորություն է ընձեռում.

- ապահովելու դասի բազմազանությունը
- կապ ստեղծելու անցածի և նոր հասկացությունների միջև
- համապատասխանեցնելու սովորողների ունակություններն ու կարողությունները և պարունակելու մարտահրավեր
- հայտորոշելու սովորողների անհատական խնդիրները
- խթանելու մտածողությունն ու ստեղծագործականությունը
- կիրառելու ուսուցման տարբերակվածություն
- դիտարկելու սովորողների համագործակցելու և սոցիալականացման հնարավորությունը
- կիրառելու գնահատման տարբեր տեսակներ
- իրականացնելու սովորողների տարբեր ընգրկվածությամբ աշխատանքներ (անհատական, զույգերով, խմբային, տնային)
- կանխատեսելու վերջնարդյունքը:

Դասարանը այն ուսումնական միջավայրն է, որտեղ և ծավալվում են գիտելիքի ձեռքբերմանը և սահմանված վերջնարդյունքի հասնելուն ուղղված գործողություններ:

Նախ և առաջ առաջադրանքը գործողության մշակում է, որը պետք է ունենա հստակ նպատակ: Եվ ո՞րն է այդ նպատակը:

1. ստուգել գիտելիքը
2. զարգացնել հմտությունները
3. խթանել ստեղծագործականությունը:

Հարց է առաջանում. արդյոք անհրաժե՞շտ է տվյալ թեմայի առաջին դասի սկզբից մշակել հայտորոշիչ առաջադրանքներ, թե՞ թեմայի ուսուցանման ընթացքում պարզապես պետք է առաջնորդվել տեսական գիտելիքներին զուգահեռ կիրառվող առաջադրանքներով, կամ էլ պարզապես կարելի է «վստահել» աշակերտներին ու միանգամից անցնել ավելի բարդ հասկացությունների ձևակերպմանն ու ուսուցմանը:

Կարող են լինել տարբեր մոտեցումներ՝ կախված ուսուցչի փորձառությունից, առաջադրվող նյութի բնույթից, սովորողների պատրաստվածության մակարդակից, դրան համապատասխան վերջնարդյունքի սահմանումից, մեթոդների ընտրությունից:

Թեմայի յուրացման հաջողությունն ու սովորողների ուշադրության աստիճանը պայմանավորվում է նաև մեթոդների բազմազանությամբ, քանի որ որքան էլ իդեալական լինի կիրառվող մեթոդը, երբեք այն չի կարող ապահովել սովորողի շարունակական ու կայուն ուշադրություն: Այսինքն՝ դասի առանձին փուլերում ներկայացվող առաջադրանքների համար կարևոր է մշակել տարբեր մեթոդներ համադրող խելացի համակարգ:

Ներկայումս սովորողներին հանձնարարվող առաջադրանքների մեծ մասն ունի նախասահմանված մեկ ճիշտ պատասխան, որը սովորաբար հենվում է մեկ տեղեկատվության վրա: Հանձնարարվող բոլոր առաջադրանքներն էլ (լրացնել բաց թողածը, խմբավորել պատասխանները կամ պատասխանել բազմընտրանքային թեստերի հարցերին, երբ տրված այլընտրանքների մի ողջ շարքից ընտրվում է ճիշտ պատասխանը) միակ ճիշտ պատասխանը գտնելու առաջադրանքներ են:

Դասի կամ թեմայի ուսուցման առաջին փուլում նպատակահարմար է օգտագործել նմանատիպ առաջադրանքներ՝ հայտորոշելու սովորողների՝ թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքները: Քանի որ այսպիսի առաջադրանքները հնարավորություն են տալիս ապահովել սովորողների մեծ ընդգրկվածություն, նաև՝ արագ հայտորոշում: Ժամանակակից մանկավարժության մեջ մշակվել են նման առաջադրանքների ներկայացման տեխնոլոգիական հնարավորություններ և ծրագրեր, որոնք, ի դեպ, սովորողների կողմից ընդունվում և օգտագործվում են մեծ ոգևորությամբ:

Սակայն որքան կարևոր է առաջադրանքի նպատակահարմարությունը՝ կախված ուսուցանվող նյութի ընդգրկվածությունից, գիտելիքների կառուցման շղթայում նրա գրաված տեղից և կարևորությունից, նույնքան առաջնահերթ խնդիր է սովորողին հետաքրքրելու հանգամանքը: Այս պարագայում ոչ պակաս կարևոր եմ համարում առաջադրանքների թեմատիկան և ճանաչողական նշանակությունը: Նման առաջադրանքներ կարելի է կիրարկել թե՛ հայտորոշելու կամ գիտելիքների մակարդակն ստուգելու, թե՛ մտածողությունն ու տրամաբանությունը զարգացնելու և թե՛ ստեղծագործականությունը խթանելու համար:

Գիտելիքների արդյունավետ համադրում պահանջող առաջադրանքներ կարելի է կիրառել գիտելիքի կառուցման սանդղակի առաջին փուլում: Դասի կամ թեմայի ուսուցման հաջորդ փուլերում նպատակահարմար է սովորողների մտածողությունը և ստեղծագործականությունը խթանող գործիքակազմ և համապատասխան առաջադրանք:

Մտածողության և տրամաբանության զարգացման համար մեկ կամ երկու պարբերություն գրելը միշտ չէ, որ խթանում է սովորողների կողմից նոր գիտելիքներ որոնելու ձգտումը: Մինչդեռ հենց այս գործունեությունն է ուսումնառության համար գիտելիքների արդյունավետ կառուցման հիմք ստեղծում, որին, իրոք, պետք է ուշադրություն դարձնել: Նմանօրինակ առաջադրանքների կազմումը ջանք և փորձառություն է պահանջում: Դրանք կարող են լինել տեքստի, նրա բաղադրիչների մասին, ինչպես նաև առանձին միավորների կամ հասկացությունների վերաբերյալ:

Ժամանակակից մանկավարժության մեջ կա մի տեսակետ. «Որպեսզի յուրացումն արդյունավետ լինի, սովորողին պետք է հնարավորություն տալ ընտրելու սեփական դիրքորոշում և ապացուցելու այն» (Բրեվեր, 1987թ. ): Հենց սա է կատարումն ստուգող արդյունավետ գործնական առաջադրանքների չափորոշիչը, որը սովորողից պահանջում է նոր գիտելիքներ կառուցել:

Ուսումնառության այս փուլում հաճախ մենք ձգտում ենք նրան, որ սովորողներն իրենք կազմեն իրենց սեփական կատարման առաջադրանքները, որոնք ցանկալի է՝

- լինեն իմաստալից թե՛ ուսուցչի և թե՛ սովորողի համար
- ձևակերպվեն հստակ
- պահանջեն գտնել ու վերլուծել տեղեկատվությունը, ինչպես նաև եզրահանգումներ անել
- պահանջեն արդյունքների որոշակի պարզաբանում
- ընձեռեն համատեղ աշխատելու հնարավորություն
- ունենան գնահատման ռուբրիկներ:

Մենք որոշարկեցինք, թե ինչպես է ուսուցիչը նախագծում առաջադրանքներ տարբեր իրավիճակներում, ուսումնառության տարբեր փուլերում: Կարևորեցինք առաջադրանքի տեղը ուսուցիչ-աշակերտ համատեղ գործունեության շրջանակում, նաև գիտելիքների կառուցման համատեքստում: Անցանք ԱՌԱՋԱԴՐԱՆՔ - ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ - ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ - ԳՆԱՀԱՏՈՒՄ - ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ հասկացությունների փոխկապակցված շղթայով և հասանք սահմանված վերջնարդյունքին՝ աշակերտի կողմից նոր գիտելիք կառուցելուն, ուսուցանված նյութի նկատմամբ սեփական կարծիք ունենալուն, լիարժեք առաջադրանք կազմելուն:

**Մանուշ ԲԱԼԱՅԱՆ**
**Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի**

ՏՏ ՈԼՈՐՏ

# «ԵՍ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ. ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ, ՆՈՐ ՄՇԱԿՈՒՅԹ



*Աշոտ Ավանեսյանն ավարտել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ու «Կապի միջոցներ և միկրոէլեկտրոնային սխեմաների նախագծման» բաժինները, մասնակցել է «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի վեբ ծրագրավորման դասընթացին: Փորձուսուցում է անցել «Ինսթիգեյթ Սիսթեմս», «Դորադո-Վեբ», ՍՊԸ-ներում: Աշխատել է «Օտեքսիս» ՍՊԸ-ում որպես ծրագրավորող, «Թումո Ստեփանակերտ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում՝ որպես ուսուցանող մարզիչ, «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամում՝ ՏՏ ոլորտի փորձագետ, ծրագրի ղեկավար, որտեղ շարունակում է աշխատել:*

*Ա.Ավանեսյանը կամավոր հիմունքներով եղել է Ծմակահողի «Պատանի բնագետներ» կիրակնօրյա դպրոցն ստեղծած նախաձեռնող խմբի անդամ, դպրոցի ծրագրավորման, ինֆորմատիկայի և ռոբոտաշինության խմբակավար, Ծմակահողի «Պատանի բնագետներ» ամառային դպրոց- ճամբարի նախաձեռնող խմբի անդամ, ուսումնական ծրագրի համակարգող:*

*Աշխատում է «Ես» կրթական ծրագրի վրա, ինչը նոր մոտեցում, նոր մշակույթ է խոստանում կրթության ոլորտում և ոչ միայն:*

*Ծրագրի շուրջ Աշոտ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ հետ մեր հարցազրույցը:*

- ***Աշոտ, այսօր բազմաթիվ նորարարությունների են դիմում՝ մեր երեխաներին ու երիտասարդությանը հնարավորինս արագ և մատչելի ձևով միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթություն տալու համար: Ու ցավալին այն է, որ արդյունքը միշտ չի գոհացնում: Գիտեմ, որ դու ունես քո մոտեցումն ու այդ ուղղությամբ աշխատանքներ ես տանում: Խոսենք այս մասին:***

- Ծրագիրը, որը կազմել և որի շուրջ արդեն աշխատում ենք, կրթական է և կոչվում է «Ես»: Այն ստացել է ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հավանությունը ու իրականացվելու է տարբեր բնակավայրերում: Ծրագրի նպատակն է՝ կասեցնել երիտասարդների արտագաղթը գյուղերից, մեծացնել աշակերտների հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ, գյուղի աշակերտներին տալ ժամանակակից և որակյալ կրթություն, նրանց հետ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ նորարարական գաղափարներ իրականացնել:

Աշակերտները կսովորեն ինքնակրթվել, համացանցում արագ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, ճիշտ օգտագործել ձեռքի տակ եղած մասնագիտական գրականությունը, տրամաբանել, վերլուծել: Նրանք ինքնավստահություն ձեռք կբերեն՝ լուծելով իրենց համար մինչ այդ անլուծելի թվացող խնդիրներ: 3-5 տարի ինքնակրթվելով և ամեն օր լուծելով իրենց առջև դրված խնդիրները՝ աշակերտներից յուրաքանչյուրը կանցնի յուրօրինակ ճանապարհ, կդառնա իր նախընտրած ոլորտի ճկուն մասնագետ, չի վախենա բարդ առաջադրանքներից և պատրաստ կլինի արագ յուրացնել ցանկացած նոր գիտելիք: Այս հատկությունը կօգնի նրանց նաև կողմնորոշվելու որոշում կայացնել կյանքի տարբեր բարդ իրավիճակներում:

- ***Ծրագիրը ո՞ր համայնքներում կսկսի իրագործվել: Ի՞նչ տարիքային խմբի համար է նախատեսված:***

-«Ես» կրթական ծրագիրը կմեկնարկի Մարտունու շրջանի Մուշկապատ, Հաղորտի, Գիշի, Խնուշինակ, Սպիտակաշեն գյուղերում և Մարտունի քաղաքում: Կարող են մասնակցել 6-րդ դասարանն ավարտած աշակերտները: Վերոնշյալ համայնքների դպրոցներում 2019թ. տվյալներով սովորում է 1315 աշակերտ, այսինքն՝ մոտ 600 աշակերտ մասնակցելու հնարավորություն կունենա: Հաշվի առնելով արդեն գործող ոչ ավանդական կրթական ծրագրերին աշակերտների մասնակցության վիճակագրական տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ «Ես» կրթական ծրագրին մասնակցող աշակերտների թիվը կգերազանցի 300-ը:

- ***Մասնակիցներն ի՞նչ կունենան արդյունքում:***

- Առաջադիմության դեպքում երեք տարին բավարար կլինի, որպեսզի աշակերտը դառնա իր նախընտրած մասնագիտության սկսնակ մասնագետ: Այսինքն՝ 2022թ. վերոնշյալ համայնքներում կլինի մոտ 200 մասնագետ՝ 100 հազար դրամ միջին աշխատավարձով, նշված տարում ապահովելով մոտ 240 միլիոն դրամ եկամուտ: Սկսած 2023-ից՝ յուրաքանչյուր տարի կպատրաստվի մոտ 100 նոր մասնագետ:

- ***Ինչպե՞ս կանդրադառնա այն համայնքների զարգացմանը:***

- ՏՏ ոլորտի մասնագետների թողարկած արտադրանքը հիմնականում կիրացվեն արտաքին շուկայում: Այդ գումարները կմեծացնեն վերոնշյալ համայնքներում տնտեսական ակտիվությունը, և այդ կապիտալը հիմք կհանդիսանա տեղական ենթակառուցվածքների զարգացման համար:

- ***Ինչպե՞ս է ծրագրը գործողության մեջ դրվելու:***

- Կրթական ծրագիրը կազմված է երեք փուլից.

«Բացահայտում» փուլի տևողությունը 1-2 տարի է՝ կախված աշակերտի առաջադիմությունից: Մեկնարկային այս փուլի բոլոր հմտությունները ձեռք բերելուց հետո է միայն հնարավոր անցնել հաջորդ փուլ: Այս փուլում կբացահայտվեն աշակերտի նախասիրություններն ու ընդունակությունները, կամրապնդվեն բնագիտական առարկաների բազային գիտելիքները, կարագացվի ալգորիթմական մտածելակերպը, կծանոթանան ՏՏ ոլորտի հիմնական մասնագիտություններին, և կտրվեն նախնական գիտելիքներ: Հետաքրքիր և ինտերակտիվ ձևով ծանոթանալու են ծրագրավորման հիմունքներին: Բնագիտական առարկաների նկատմամբ սեր առաջացնելու և կարևորությունն ընդգծելու նպատակով սաները մշակելու են դպրոցական մաթեմատիկայի խնդիրների ալգորիթմներ, ինչպես նաև մոդելավորելու և ծրագրավորելու են ֆիզիկական երևույթներ: Ռոբոտաշինության մեջ առաջին քայլերը կատարելու համար սովորելու են ծրագրավորել սարքերի ղեկավարման համար օգտագործվող միկրոսխեմաներ: Շաղափային հաստոցով պատկերների փորագրման և կտրման համար ծրագրային կոդի միջոցով ստեղծելու են գրաֆիկական պատկերներ: Նախագծելու ու գործարկելու են ռոբոտների նախատիպեր, եռաչափ մոդելավորման ծրագրերի միջոցով մոդելավորելու են անհրաժեշտ մասերն ու մեխանիզմները և ստեղծված մոդելները տպելու են եռաչափ տպիչով, ծրագրավորելու են իրենց պատրաստած ռոբոտների աշխատանքը: Փուլը հաղթահարելուց հետո աշակերտը ձեռք կբերի ուժ անհրաժեշտ հմտություններ, որոնց շնորհիվ կկարողանան կողմնորոշվել հետագա մասնագիտության ընտրության հարցում:

«Հմտացում» փուլում առկա են երեք ուղղություններ՝ «Ծրագրավորում», «Ռոբոտաշինություն» և «Դիզայն»: Աշակերտները կարող են ընտրել նրանցից որևէ մեկը կամ միաժամանակ հաճախել բոլոր դասընթացներին: Կազմակերպվելու են երկարաժամկետ դասընթացներ, որոնցից յուրաքանչյուրը հաջողությամբ հաղթահարելուց հետո կդառնա տվյալ ոլորտի սկսնակ մասնագետ, և կարող են աշխատանքի ընդունվել ՏՏ ոլորտի ընկերություններում: Ծրագրավորման դասընթացների ժամանակ ծանոթանալու են ոլորտի տարբեր մասնագիտությունների ու դրանցում կիրառվող ծրագրավորման լեզուներին: Սովորելու են ամենատարածված մի քանի ծրագրավորման լեզուների հիմնական տարրերը, իսկ որպես գործնական աշխատանք՝ ստեղծելու են վեբկայքեր, տարբեր հավելվածներ ու իրականացնելու են միկրոկանտրոլերների ծրագրավորում տարբեր համակարգերի կառավարման համար: Ռոբոտաշինությունն իր մեջ ներառում է տարբեր մասնագիտությունների դասընթացներ: Մասնակցելով՝ աշակերտները ձեռք կբերեն ոլորտի նեղ մասնագիտացում: Այս ոլորտի դասընթացներին մասնակցելու են հիմնականում գեղարվեստի ստեղծագործական ձիրք ունեցող աշակերտները: Նրանք ուսումնասիրելու են վեբդիզայն, նախագծելու են կայքեր, ստեղծելու են լոգոներ և վեկտորական գրաֆիկա: Քանի որ դիզայնի ուսուցումն ընթանալու է մյուս երկու ճյուղերի հետ զուգահեռ, այս ուղղությունն ընտրած աշակերտները որպես դիզայներներ կկցվեն «Ծրագրավորում» և «Ռոբոտաշինություն» մասնագիտացումներն ընտրած աշակերտներին: Այսպիսով, աշակերտները կանեն թիմային աշխատանք կատարելու առաջին քայլերը, ինչը շատ կարևոր է հաջորդ փուլի համար:

«Սկսենք» փուլին կարող են մասնակցել երկրորդ փուլում առնվազն մեկ երկարաժամկետ դասընթաց հաջողությամբ ավարտած աշակերտները: Այս փուլում աշակերտների կամ խմբակավարների նախաձեռնությամբ ձևավորվում են թիմեր՝ որևէ գաղափարի շուրջ «START-UP» սկսելու նպատակով: Գյուղական համայնքներում ՏՏ ոլորտի մասնագետներ ունենալն առաջին հերթին կհանգեցնի համայնքների արդիականացմանը: Նրանք կարող են արագ ու գրագետ գործարկել ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկան, ստեղծել դրանց աշխատանքը մշտադիտարկող, կազմակերպող ու ավտոմատացնող տեղային համակարգեր, օժանդակել դրանց վերանորոգմանը կամ իրականացնել ոչ բարդ նորոգում, գյուղական արտադրանքը ներկայացնել թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկայում՝ շուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան լուծումներով: Մասնավորապես՝ ստեղծել կայքեր և հավելվածներ գյուղական ենթակառուցվածքներում եղած խնդիրներին արդիական լուծումներ տալու համար, որոնք կարող են հիմք հանդիսանալ արտադրության, առևտրի, տուրիզմի կամ այլ բիզնեսի արդյունավետության բարձրացմանը: Ռոբոտաշինությունից ձեռք բերած հմտությունները կարող են օգտագործվել գյուղատնտեսության ոլորտում առկա մի շարք խնդիրներ լուծելու համար:

- ***Աշո՛տ, ե՞րբ կտեսնենք ծրագիրը գործողության մեջ:***

- Նոր ուսումնականի սկզբից արդեն կսկսենք աշխատել:

- ***Մնում է հաջողություն մաղթել ու սպասել արդյունքներին:***

- Շնորհակալություն: Սպասելիքները մեծ են: Հավատացեք, որ ծրագրի հաջողությունն արմատապես կփոխի մեր համայնքների կյանքն ու բնակիչներին:

**Կարինե ԴԱԴԱՄՅԱՆ**

# «ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ»-Ի ՆՈՐ ՀԱՄԱՐԸ

Լույս է տեսել «Գիտական Արցախ» հանդեսի այս տարվա առաջին և ընդհանուր առմամբ՝ երկրորդ համարը: Պարբերականի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, հրատարակիչը՝ «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունը: Լույս է տեսնում տարեկան երկու անգամ, ընդգրկված է ԲՈԿ-ի պարբերականների ցանկում:

Նոր համարի լույսընծայման կապակցությամբ ԱԵԳՄՄ նախաձեռնությամբ տեղի ունեցավ քննարկում Արցախի գիտական հանրույթի մասնակցությամբ: Հանդեսի գլխավոր խմբագիր, ԱԵԳՄՄ նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ավ. Հարությունյանի խոսքով՝



նպատակ ունեն լսելու ներկաների կարծիքը, խորհուրդները՝ դրանով իսկ ուղղորդելով իրենց անելիքները, որոնք կնպաստեն ավելի արհեստավարժորեն իրականացնելու ԱԵԳՄՄ գործունեությունը, որի նախագծերից է հանդեսի հրատարակումը:

«Գիտական Արցախ»-ի 2-րդ համարում տեղ են գտել 7 երկրների 47 հեղինակների աշխատանքներ: «Պարբերականի հրատարակման գլխավոր նպատակը Արցախի գիտության, ինչպես նաև գիտական դիվանագիտության զարգացումն է, գիտության միջոցով Արցախն աշխարհին ներկայացնելը ինչպես օտարերկրյա հեղինակների աշխատանքները տպագրելով, այնպես էլ երիտասարդների համար յուրովի հարթակ ստեղծելով իրենց հետագա գործունեության համար»,- ասաց խմբագիրը:

ԱԵԳՄՄ անդամ Անուշ Դոլուխանյանն ամփոփ ներկայացրեց կազմակերպության կատարած աշխատանքները: Նրանում կարևոր տեղ են գրավում միջազգային երիտասարդական գիտաժողովների, կլոր սեղանների, գիտական ընթերցումների կազմակերպումը, Արցախի էլեկտրոնային գրադարանի ստեղծումը, գիտական պարբերականի հրատարակումը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանն առաջինը ողջունեց հանդեսի հերթական համարը և նրանում տեղ գտած հետաքրքիր հոդվածները, որոնց թեմաները նոր չլինելով հանդերձ՝ նորովի են ներկայացվում: Նա ափսոսանք հայտնեց, որ համարում շուրջ 50 հեղինակներից ընդամենը 4-ն է Արցախից: «Եթե մենք հավակնում ենք ներկայանալ գիտական Արցախ, գիտաժողով լինի, թե հանդես, հեղինակների առնվազն կեսը պետք է լինի Արցախից»,- ասաց նա: Նրա կարծիքով՝ պարբերականը պետք է լինի մի յուրատեսակ գիտական կենտրոն, որը պետք է գիտական աշխատանքները կազմակերպող ուժ լինի:

Նրա կարծիքը կիսեցին ԱԺ փոխխոսնակ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը, որը նաև «Գիտական Արցախ»-ի խմբագրական խորհրդի անդամ է, Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը:

ԱԺ փոխխոսնակ Վահրամ Բալայանը, համաձայն լինելով, որ «Գիտական Արցախ»-ի գործառույթներից մեկը պետք է լինի երկրում գիտական միջավայրի, գիտական դպրոցի ձևավորումը, համոզված է, որ ԱԵԳՄՄ եռանդուն նախագահը և նրան շրջապատող երիտասարդ գիտնականներն ի վիճակի են դա անելու և մեծ հաջողությունների հասնելու:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Թոքմաջյանի համոզմամբ՝ հանդեսը կարող է արագ դուրս գալ միջազգային ասպարեզ, ինչի համար բոլոր նախադրյալները կան: Նրա դիտողությունները վերաբերում էին հանդեսի չափերին և ծավալին, տառատեսակներին, և խորհուրդ տվեց կազմակերպությանը դուրս գալ երիտասարդական կապանքներից. նրանք կարող են հիմնադիր լինեն, կազմակերպիչներ, բայց գիտությունն ընդհանուր է:

«Գիտական Արցախ»-ի նոր համարի վերաբերյալ իրենց տեսակետը հայտնեցին նաև ԱրՊՀ պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, տնտեսագետ, համարի գրախոս Կարեն Ներսիսյանը, ԱԵԳՄՄ անդամներ և ուրիշներ:

*Սեփ. լրատվություն*

## ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՍԱՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ



Ռազմահայրենասիրական դաստիարակությանը տարեցտարի ավելի մեծ ուշադրություն է դարձվում:

ԶՈՒ խնդիրների, Հայոց բանակի ավանդույթների, այսօրվա զենքի ու ռազմական տեխնիկայի, կանոնադրությունների և արարողակարգերի մասին վաղվա զինվորներն իմանում են հենց աշակերտական նստարանից՝ Նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցման ժամանակ: Առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության հաջողությունը կախված է զինղեկի դասը հմուտ կազմակերպելուց և մատուցելուց:

Մարտունու շրջանի լավագույն զինղեկների շարքում է Թաղավարդի Աշոտ Գրաշու անվան միջնակարգ դպրոցի ուսուցիչ, պահեստազորի ավագ լեյտենանտ Զավեն Բադասյանը:

1991թ. Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի «Քիմիա և կենսաբանություն» բաժնի առաջին կուրսի ուսանող Զավենի մտքով անգամ չէր անցնում, որ տարիներ անց դպրոցի դասամատյանում կլրացնի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի էջը և աշակերտներին կփոխանցի ռազմական գիտելիքներ:

Արցախյան պատերազմն ինչպես շատ-շատերի, այնպես էլ Զ.Բադասյանի համար պատճառ դարձավ փոխել նպատակների ու ծրագրերի բնականոն հունը, և 1992թ. մարտ ամսին 18-ամյա Զավենն ընդգրկվեց Կարմիր շուկայի Նիկոլայ Բաբայանի ղեկավարությամբ գործող ինքնապաշտպանական ջոկատում՝ որպես շարքային դիրքապահ: Հետագա ծառայությունը շարունակել է Թաղավարդի 21-րդ գումարտակում՝ որպես կապավոր: 1994թ. զինադադարից հետո ծառայել է ՊԲ զորամասերից մեկում՝ որպես գումարտակի շտաբի պետ: 1996թ., ընտանեկան պայմաններից ելնելով, թողել է ծառայությունը: Գոյապայքարի տարիներին հայրենիքի վտանգված ճակատագիրը, մարտական ընկերների արյունով շաղախված հողը, այնուհետև ծառայության տարիներն էլ ավելի են բարձրացրել Զ.Բադասյանի հայրենասիրական ոգին, պատճառ դարձել հետագա մասնագիտության ընտրության համար:

1996-1998թթ. աշխատել է Սարգսաշենի 8-ամյա դպրոցում՝ որպես քիմիայի և կենսաբանության ուսուցիչ, իսկ 1999թ. աշխատանքի է ընդունվել Թաղավարդի միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ: Նույն տարում ընդունվել է ԱրՊՀ «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» բաժինը, որն ավարտել է 2004-ին: 2001թ. մասնակցել է զինղեկների վերապատրաստման և ատեստավորման դասընթացներին, բարձր արդյունքների համար ստացել պահեստազորի լեյտենանտի սպայական կոչում, իսկ 2004-ին, որպես խրախուսանք, արժանացել պահեստազորի ավագ լեյտենանտի կոչման: 2012թ. ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից կազմակերպված մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն դաս-միջոցառում» անվանակարգում: 2013-ին շրջանային, իսկ 2015 թվականին հանրապետական փուլում հաղթել է «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթում:

Թաղավարդի միջնակարգ դպրոցի թիմը միշտ էլ պատվով է մասնակցում «Արծվիկ» ռազմամարզական և այլ ռազմականացված մրցումներին, հիմնականում գրավում մրցանակային տեղեր:

Ուսուցչի համար չկա այլ հպարտանալու առիթ, քան դասավանդած աշակերտների հաջողությունները գրանցելը: Դասավանդման 20 տարվա ընթացքում այդպիսի առիթներ զրուցակիցս բազմիցս է ունեցել: Մեր զրույցի ընթացքում նա ոգևորությամբ թվարկում է դրանք: «Իմ սաներից չորսն ավարտել են Երևանի Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը և որպես սպաներ այժմ ծառայում են ԱՀ ՊԲ տարբեր զորամասերում, իսկ մեկ աշակերտ ավարտել է Ստեփանակերտի Ք.Իվանյանի անվան ռազմական վարժարանը և շարունակում է ուսումը ՌԴ Լենինգրադի բարձրագույն ռազմական հաստատությունում»,- ասում է բազում մեդալների, պատվոգրերի, շնորհակալագրերի ու պարգևների արժանացած զինղեկը: Առանձնահատուկ է խոսում առարկայական օլիմպիադաներում պատվավոր մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների մասին, որոնցից անմասն չէ Երևանում կայացած եզրափակիչ փուլի մրցանակը:

Խոսելով առարկայի կարևորության մասին՝ Զ.Բադասյանը նշեց, որ ՆԶՊ առարկայի դասաժամերին նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստում է զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստում է ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած սերունդ դաստիարակելուն, ապա հավելում. «Ոգևորիչ է լինում այն փաստը, երբ իմ սաները ծառայության սկզբնական փուլը հեշտությամբ են հաղթահարում և բարձր գնահատական ստանում հրամանատարության կողմից»:

Դպրոցն ունի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ռազմագիտության կաբինետ՝ հագեցած դիդակտիկ նյութերով, ուսումնական զենքերով և անհրաժեշտ այլ պարագաներով:

Աշակերտների ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով տարվա ընթացքում Թաղավարդում գործող «Փառքի թանգարան»-ում կազմակերպում են արիության դասեր, որոնց ընթացքում մատաղ սերունդը ծանոթանում է հայրենի երկրի պատմությանը, ազատամարտիկների անցած մարտական ուղուն:

Համաձայն ուսումնական ծրագրի՝ տարվա ընթացքում դպրոցի և շեֆ-զորամասի միջև կատարվում են փոխադարձ այցելություններ: Զորամասում 11-12-րդ դասարանների աշակերտները ծանոթանում են զինվորների առօրյային և հրաձգարանում կատարում հրաձգություն:



2014թ. օգոստոսին, այնուհետև 2016-ի ապրիլին, երբ կրկին անհանգիստ էին հայրենի երկրի սահմանները, Զ.Բադասյանը դիրքերում դարձյալ մարտական հերթապահություն էր անցկացնում՝ պաշտպանում հայրենիքը և քաջալերում 18-ամյա զինվորներին:

Որպես Զ.Բադասյանի նախկին աշակերտուհի՝ կարող եմ հավելել հետևյալը. որ նա միշտ պատասխանատվությամբ է վերաբերվում առարկային, կազմակերպում հետաքրքիր և օրինակելի պարապմունքներ՝ բարձր պահելով դպրոցի ու հայրենի գյուղի պատիվը և որպես ռազմագիտության ուսուցիչ՝ օրինակ ծառայում զինղեկներին:

Հաշվի առնելով տարածաշրջանի ռազմական անկայուն վիճակը՝ այսօր, առավել քան երբեք, անհրաժեշտություն է դպրոցներում ունենալ հմուտ և կայուն գիտելիքներով մասնագետներ, որոնք կնպաստեն բանիմաց սերունդ ունենալու գործին:

**Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ**
**ք. Մարտունի**

*Իմ օրագրից*

# 1989-Ի ՀՈՒԼԻՍԸ

Ամառային այս օրերին մայրաքաղաք մտնելիս անչափ հիանում եմ նրա կենսախինդ առօրյայով: Անկախ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակից մեր ժողովուրդը նորմալ կյանք է վարում: Աշխատում են բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, եռուզեռ է տիրում շինարարական հարթակներում: Քաղաքից ետ չի մնում գյուղը: Կազմակերպված է ընթանում բերքահավաքը: Հարուստ կենցաղ է վարում մեր բնակչությունը, որի ապացույցն է հազարավոր մարդատար ավտոմեքենաների առկայությունը: Ստեփանակերտի փողոցները լեփ-լեցուն են արտասահմանյան տարբեր մակնիշների ավտոմեքենաներով: Տեսնելով հրճվում եմ, միաժամանակ մտքով ընկնում անցյալ դարի 40-ական թվականները, երբ իմ սերունդը ավտոմեքենան նկարով էր ճանաչում, իսկ այնպիսի հզոր երկիր, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր, 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ընդամենն ուներ 8 հազար ավտոմեքենա, իսկ այսօր Մոսկվայից մի օրում 3 միլիոն ավտոմեքենա է դուրս գալիս, Երևանից՝ 40-50 հազար, իսկ ստեփանակերտից ավտոտեսչությունը գիտի: Ինչ մնում է 1989 թվականին, ապա այդ օրերին Ստեփանակերտի մեքենաները մատների վրա կարելի էր հաշվել:

Այժմ 1989թ. հուլիսի մասին. մայիսի 3-ից սկսված գործադուլը շարունակվում է: Չնայած արտոնված և չարտոնված հանրահավաքներում Շարժման ակտիվիստները հորդորում են դադարեցնել գործադուլը, բայց ժողովրդի հավատը կորել է և շարունակում է իր նպատակին հասնել գործադուլների միջոցով: Հուլիսին նորություն էր մի նոր կազմակերպության ծնունդը:

**8.07.1989թ.:** Ղարմետաքսկոմբինատում հրավիրվեց «Միացում» քաղաքային կազմակերպության հիմնադիր ժողովը: Չգիտեմ ինչու՝ տնօրենների խորհրդին չեն լսում: Ժողովը բացեց Սերժ Սարգսյանը: «Միացում» կազմակերպության խորհրդի նախագահ ընտրվեց Ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը:

**10.07.1989թ.:** Կուսքաղկոմի շենքի դիմաց հավաքվել էին մի քանի ակտիվիստներ: Ռ.Քոչարյանը ինձ տվեց «ՄԻԱՑՈՒՄ» ծրագիրը դպրոցում սկզբնական կազմակերպություն ստեղծելու. չնայած ես ասացի՝ ոչ թե Միացում, այլ վերամիավորում, բայց և այնպես, հանձնարարությունը կատարեցի:

1978թ. ամռանից մինչև 1989 թվականը ղեկավարում էի h.9 միջնակարգ դպրոցի «Արծվիկ» աշխատանքային ճամբարը: Այս անգամ ճամբարի անունը ոչ ոք չէր ուզում լսել, քանի որ այն Դաշբուլաղում կազմակերպել հնարավոր չէր: Երեխաների անվտանգությունը պահպանելը երաշխավորված չէր, չնայած որոշ ադրբեջանցիներ արդեն լքել էին գյուղը: «Արծվիկ» ճամբարի դաստիարակներն ինձ հետ միասին ընդգրկվել էին դպրոցում կազմակերպված պիոներական ճամբարում, որի պետն էր Սիրուն Ապրեսյանը: Իմ առաջարկությամբ պիոներական ջոկերին տրվեց Խամսայի մելիքություններից յուրաքանչյուրի անունը, և «Պիոներ կանչ»-ի հայտարարած մրցույթում երրորդ տեղը գրավեցինք: Կարո Ստեփանյանի մեքենայով գնացինք Դաշբուլաղ՝ «Արծվիկ» ճամբարի խոհանոցային գույքը բերելու: Ոչինչ չկար, լրիվ կողոպտված էր:

**18.07.1989թ.:** Հանդիպել եմ «Կռունկ»-ի անդամ՝ Ստեփխառնառևտրի նախագահ Վլադիկ Սարգսյանին: Լավատես է, ինձ հայտնեց, որ սպասում են Մոսկվայից նոր հանձնաժողովի գալուն, որը պիտի զբաղվի մեր հարցով:

**20-26.07.1989թ.:** Մարզում էր Մոսկվայից ժամանած հանձնաժողովը: Այդ հանձնաժողովն ստեղծվել էր ժողպատգամավորների առաջին համագումարում: Հանձնաժողովի նախագահն է Գեորգի Տարազևիչը: Մի ամբողջ շաբաթ ԼՂԻՄ հարցով զբաղվող ԽՍՀՄ ԳԽ հանձնաժողովը զրույցներ ունեցավ և՛ մայրաքաղաքի, և՛ շրջանների բնակչության հետ, որոնք միաբերան մի պահանջ ունեին՝ ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի կազմից և միացնել Հայկ. ՍՍՀ-ին: Հանձնաժողովը այդպիսի որոշման նախագիծ ներկայացրեց Գերագույն խորհրդին, և ուշի ուշով սպասում ենք պատասխանի, սակայն գործադուլը դարձյալ չդադարեցվեց:

Արդեն քանիերորդ անգամն է՝ Մոսկվայից գալիս ուսումնասիրում են մեր հարցը ու գնում, բայց հետևանքը չենք տեսնում:

Տեսնես Ադրբեջանի ղեկավարությունը այս անգամ ինչի կդիմի: Սպասում ենք:

**Մառլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
**Մշակույթի վաստակավոր աշխատող**

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ-150

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ



Հայոց Արեւելից կողմը հանդիսացող Արցախի պատմության, մշակույթի վերաբերյալ վերջին տարիներին հրատարակված ուսումնասիրությունները Թումանյանի երազանքների իրականացումն են: Աշխարհին ի ցույց, թուրք պատմաբանների կեղծիքի հանդեպ պատնեշներ են Լեոյի ծանրակշիռ աշխատությունները Ղարաբաղի պատմության, մշակույթի, դպրոցական գործի եւ այլ բնագավառների վերաբերյալ, Ստ. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ակնարկը, Կ.Դավթյանի «Ղարաբաղի բարբառի քարտեզը», Բ.Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը 14-16-րդ դարերում», «Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան», «Գանձասար» ուսումնասիրությունները, Հ.Հակոբյանի «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ.», Մ.Ղազարյանի «Արցախի արվեստի գանձերը», Մոսկվայում հրատարակված «Ղարաբաղի հրեշտակը» (հեղինակ` Բ.Բարաթով) նկարազարդ ալբոմ-ժողովածուն եւ այլ գործեր: Այդ ամենը դեռ քիչ է: Պետք է հասնել Մեծ Լոռեցու խորհրդի ամբողջական իրականացմանը: Անհրաժեշտ է վեր հանել Արցախի նյութական եւ հոգեւոր գանձերի բոլոր հայաշունչ շերտերը` դրանով իսկ ջախջախիչ հարված հասցնելով ադրբեջանցի վայ-գիտնականների զավթողական արշավանքներին:

«Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին» հոդվածում Լեոն ներկայացնում է Մեծ Լոռեցու հետ իր հանդիպումների շարքը, գորովանքով ընդգծում իրենց երկարամյա բարեկամությունը: Լեոն գրում է, որ 1903թ. առաջին անգամ առիթ է ունեցել ճանապարհորդել Ալեքսանդրապոլի նորակառույց երկաթուղով եւ «Մշակ» թերթի մեջ խանդավառ սքանչացումով նկարագրել Լոռու ձորը: Լեոյի այդ փոքրիկ ակնարկը մեծ հաճույք է պատճառել Հ.Թումանյանին: Բանաստեղծը Լեոյի մեջ տեսնում էր իր պես մի լեռնցու, որին հաջողվել է հարազատ կերպով վերարտադրել Լոռու բնությունը: Այստեղից էլ ծնունդ է առել Մեծ Բանաստեղծի երազանքը` տեսնել Ղարաբաղը: «Այն ժամանակներից,- նշում է Լեոն,- Թումանյանը ինձ շատ ու շատ անգամ է կրկնել, թե իր փափագն է` գեթ մի անգամ տեսնել Ղարաբաղը: Բայց այդ փափագը ուրիշ շատերի հետ նա տարավ գերեզման» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969, էջ 52):

Լեոյի` դեպի հայրենի Ղարաբաղն ունեցած կարոտը, Ղարաբաղը տեսնելու Թումանյանի բաղձանքը խաչաձեւել եւ դարձել էին երազանքի մի հոգեզմայլ թրթիռ: Եվ լեռնային ինչ տեղանքում լինում էին, անպայման Ղարաբաղն էին պատկերացնում, փափագում Ղարաբաղը:

Իր հիշողության մեջ Լեոն պատմում է լեռնային Մարց գյուղ կատարած իրենց շրջագայության մասին:

Պարզվել է, որ Մարց գյուղը շատ վաղուց Լոռի է տեղափոխվել Ղարաբաղից: Գյուղի մոտ, ծառախիտ անկյունում վեր է բարձրացված հսկայական մի խաչարձան: Այն մի տապանաքար է խաչարձանի ձեւով, որի մի երեսն ամբողջովին ծածկված է արձանագրությամբ: Այդ գրության մեջ նշված է արձանի կանգնեցման ժամանակը. «Ի դառն եւ նեղ ժամանակիս, հորում թաթարն տիրեր»: Դժվար չէ կռահել, որ գյուղը Արցախից այդ անառիկ վայրն է տեղափոխվել մոնղոլ-թաթարական տիրապետության շրջանում: Գյուղից վեր Արփաթալա կոչվող լեռնային բարձրության վրա, որտեղ գերում-հափշտակում են բնության ընտրյալ տեղի բազմաթիվ հմայքները, Հ.Թումանյանը ձգտում է իմանալ Լեոյի ստացած տպավորության մասին: Լեոն հուշերում բերում է իր պատասխանը. «Ես փառաբանում եմ նրա հայրենի բնությունը, իմ խորին զմայլանքն եմ հայտնում եւ ասում եմ, որ տեղը շատ նմանություն ունի Ղարաբաղի Թթու-ջրին եւ կարող է դառնալ առաջնակարգ կլիմայական կայարան» (Նույն տեղը, էջ 91): Նման պահերին ավելի է բորբոքվում Թումանյանի` Ղարաբաղ այցելելու երազանքը:

Հ.Թումանյանին գերել էր Լեոյի գիտելիքների պաշարը հայագիտության, կովկասագիտության բնագավառներում: Բանաստեղծի դուստրը` Ն.Թումանյանը, գրում է, որ երբ Լեոն գալիս էր հոր մոտ, խոսում էին պատմությունից: Կովկասագիտությունը եւ հայոց պատմությունը նրանց զրույցի նյութն էր, գուցե հենց այդ էր պատճառը, որ նրանք շուտ մտերմացան, բարեկամացան: «Զրույցի ժամանակ,- ընդգծում է նա,- հայրիկը կովկասագիտության պահարանից հանում էր կովկասյան պատերազմների հայտնի պատմագիր-գեներալ Պոտտոյի հատորները, Մաեւսկու «Ванский вилает» եւ ուրիշ գրքեր»: Կովկասագիտությունը հատուկ տեղ էր գրավում նրա հետաքրքրությունների մեջ, կարելի է ասել` կենտրոնական տեղ, քանի որ կապված էր ժողովրդի պատմության, նրա հարեւան ժողովուրդների հետ: «Վերք Հայաստանի»-ն ուսումնասիրելիս հաճախ էր դառնում կովկասագիտական գրքերին, Պոտտոյի հատորներին» (Հ.Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Եր., 1969, էջ 77): Հայտնի է, որ Պոտտոյի երկերում զգալի տեղ է գրավում Ղարաբաղի մելիքների, հարյուրապետների, հերոսական մարդկանց անմոռանալի գործերի նկարագրությունը:

Լեոյի հարգանքը Թումանյանի հանդեպ պարզ էր, անմիջական ու սրտացավ: Հետաքրքիր է հետեւյալ դեպքը: 1912թ. Թումանյանին կանչել էին Պետերբուրգ` դատավարության: Բացակայության ժամանակ որդիներից Արտիկը գրել էր «Վան-Դեյկ» պիեսը, իսկ Համլիկը` «Ի՞նչ է գեղարվեստը» հոդվածը: Նրանք բանավեճ էին սկսել Մուշեղ Աղայանի հետ գեղարվեստի շուրջ: Լեոն «Հորիզոն»-ում տպել էր նրանց ակնարկները: Երբ Թումանյանը վերադարձավ Թիֆլիս, մի օր Լեոյին ասաց. «Ա՛յ մարդ, ամբողջ աշխարհը կանգնել է ու չի կարողանում ապացուցել, թե ինչ է գեղարվեստը, ավելորդ ենք համարում խոսել: Ասենք` սրանք սարսաղ են, գրում են, դու ահագին մարդ, ի՞նչ ես սրանց խելքին ընկել, տպել»: Լեոն ասել էր ծիծաղով. «Դե ասի, հերները բանտարկված է, տպեմ, սիրտները չկոտրեմ»: Իսկ իր տղաներին Թումանյանը դիտողություն էր արել. «Նախքան էդ տեսակ հարցերի մասին գրելը պետք է կարդալ, շատ կարդալ գեղարվեստի մասին, ճաշակ զարգացնել, հետո գրել» (Նույն տեղը, էջ 107):

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին Թումանյանը կորցրել էր հանգիստն ու քունը: Լեոն պատմում է այն մասին, թե ինչպես բանաստեղծը գերմանական միսիայի պետ ֆոն Կռեսի մոտ Հայրենակցական միությունների անունից խնդրել է, որ գերմանական միսիան միջոցներ ձեռք առնի, որպեսզի տաճիկ փաշաները Լոռում, Ախալքալաքում ու Ղարաբաղում չնեղեն ժողովրդին:

Հ. Թումանյանի անկեղծ ու մեծ բարեկամներից էր նաեւ ականավոր բժիշկ, շուշեցի Գրիգոր Սաղյանը, որը բժշկական կրթություն էր ստացել Բեռլինի եւ Ենայի համալսարաններում, հետագայում իր նպաստը բերել հայ բժշկագիտության զարգացմանն ու հաստատմանը: Գ.Սաղյանը 20-րդ դարի սկզբից մինչեւ Մեծ Լոռեցու մահը հետեւել է բանաստեղծի առողջությանը, մասնակցել Թիֆլիսում նրա առաջին վիրահատությանը, 1923-ին ուղեկցել Մոսկվայի հիվանդանոց, բոլոր դժվարին ու վտանգավոր պահերին մնացել մոտը: Ն.Թումանյանն իր «Հուշեր եւ զրույցներ» գրքում հանգամանորեն պատմում է, որ Սաղյանը հաճախ էր այցելում պոետին, նույնիսկ Թիֆլիսից դուրս գտնվող առողջարաններում հանգստանալիս: Դա սոսկ բժշկի այցելություն չէր: Թումանյանի հետ Սաղյանի յուրաքանչյուր հանդիպում վերածվում էր զրույցների, երգերի, անեկդոտների հետաքրքիր երեկոների:

Բժիշկ Գ.Սաղյանի եւ Հ.Թումանյանի եղբայրական, անկաշկանդ բարեկամության մասին է վկայում նաեւ բանաստեղծ Վաղարշակ Նորենցը: Հանդիպումների ժամանակ նրանց զրույցի թեման Ղարաբաղն էր: Վ.Նորենցը գրում է. «Թումանյանի նման Սաղյանն էլ սիրում էր ժողովրդական զրույցներ եւ անեկդոտներ ու հիանալի պատմող էր: Մի քանի անգամ ներկա եմ եղել բանաստեղծի եւ բժշկի մրցմանը` անեկդոտներ պատմելիս: Բանաստեղծը անեկդոտներ պատմում էր լոռեցիների կյանքից` համեմված Լոռու բարբառի բնորոշ արտահայտություններով, իսկ բժիշկը` Ղարաբաղի կյանքից եւ Ղարաբաղի բարբառի համեմունքով: Երկուսն էլ վարպետ էին եւ արժանավոր մրցակիցներ: Անհնար էր զսպված ծիծաղով լսել այդ մանր եւ սրամիտ զրույցները» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., 1969, էջ 865):

Հ. Թումանյանի համար Սաղյանը Արցախի ժողովրդական կենսափորձից ծնված բարության օրինակ էր: Պատահական չէ, որ մեծ բանաստեղծը Վ.Նորենցի վկայությամբ Սաղյանին է նվիրել իր հետեւյալ փիլիսոփայական քառյակը.

*- Էս է, որ կա... Ճիշտ ես ասում, թասըդ բե՛ր:*
*Էս էլ կանցնի` հանց երազում, թասըդ բե՛ր:*
*Կյանքն հոսում է տիեզերքում զընգալէն,*
*Մեկն ապրում է, մյուսն ըսպասում, թասդ բե՛ր:*

Հ. Թումանյանն իր ղարաբաղցի ընկերներից առնում էր դեպի մեր լեռնաշխարհը եղած կարոտը, մտովի տեսնում նրա գեղեցկությունները, զգում հայաշունչ Արցախի ժողովրդական իմաստությունն ու խոսքի հմայքը:

* * *

Հովհ. Թումանյանի սիրտը միշտ Ղարաբաղի լեռներում էր: Նրա հոգում ծփում էին արցախյան կուսական անտառները, խոխոջում զուլալ աղբյուրները, նրան հմայում էին ղարաբաղցու կամքի ուժը, իմաստությունը, վեհությունը, ազգային արժանապատվության խոր զգացումը: Նույնիսկ անձնական կյանքին սպառնացող ամենավտանգավոր պահերին Հ.Թումանյանին հուզում էին Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները, պաշտպանում էր Արցախի իրավունքներն ու շահերը:

1905-1907 թթ. հեղափոխությունից հետո, ինչպես գրում է Լեոն, ամպեր էին կուտակվում Ռուսաստանի ամբողջ հայ մտավորականության գլխին: Ցարական գարշելի բյուրոկրատիան ինքն էր սարքել հայ-թուրքական կոտորածները, այնուհետեւ հալածում էր հայերին` նրանց կազմակերպած ինքնապաշտպանության համար: Սպիտակ տեռորը տարածվել էր ամբողջ հայ ժողովրդի վրա` իբրեւ վրեժ այն խայտառակ պարտության, որ ցարական կառավարությունը կրել էր հայ ժողովրդից եկեղեցական կալվածքների հարցում: Գործը սկսում էր իբր թե միայն Դաշնակցական կուսակցության դեմ, բայց իրո՛ք պատուհասվում էր ամբողջ հայ մտավորականությունը: Ռուսաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում սկսվեցին խուզարկություններ, ձերբակալություններ: Եվ ահա այդ օրերին բանտարկվում է նաեւ Հ.Թումանյանը: Բանաստեղծին առաջին անգամ բանտարկեցին 1908թ. դեկտեմբերի 24-ին, որդու` արական երրորդ գիմնազիայի 8-րդ դասարանի աշակերտ Մուշեղի հետ եւ տարան Մետեխի բանտ:

Հ.Թումանյանին բանտարկել էին 1905-1906 թթ. գործունեության համար, երբ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ձիավորներով գնացել էր Ղազախ` թուրքերի հետ հաշտություն կնքելու եւ իր միսիան ավարտել էր հաջողությամբ: Բայց նախնական քննության ժամանակ մի շարք թուրքեր, ինչպես նաեւ այգեհատցի Շահբազ Շահվերդյանը շատ աննպաստ ցուցմունք էին տվել, իբր Թումանյանը շրջել է թուրք գյուղերով եւ առաջարկել միանալ հայերին` տապալելու ռուսական կառավարությունը: Գործը հանձնված էր քննիչ Լիժինին, որը հայատյաց մի սրիկա էր: 1909թ. հունիսին Մուշեղին բաց թողեցին, իսկ Թումանյանին ժամանակավորապես ազատեցին գրավականով:

1911թ. սեպտեմբերին լուր է տարածվում, թե Թումանյանի «գործը» քննվելու է Պետերբուրգում տարվա վերջին: Դա նոյեմբերի 1-ն էր: Դեկտեմբերի 9-ին բանաստեղծի դուստր Աշխենի ամուսինը` Գեւորգ Խատիսյանը, պաշտոնապես նշանակվում է մեղադրյալ Հ.Թումանյանի պաշտպան: Դեկտեմբերի 26-ին Թումանյանն Աշխենի հետ մեկնեց Պետերբուրգ: Այդ ժամանակ Մուշեղը (որդին) Պետերբուրգի համալսարանի բնագիտական բաժնի երկրորդ կուրսի ուսանող էր: Հունվարի սկզբին Թումանյանը եւ Աշխենը հասան Պետերբուրգ: Թումանյանին տարան Սենատի շենք, նախնական կալանքի տուն: Մեծ Լոռեցին արդարացվեց: 1912թ. Պետերբուրգից Ն.Թումանյանին գրած նամակում բանաստեղծը հայտնում է. «Լսեցիր, երեւի, թե իմ ցուցմունքն ինչ խեղաթյուրումներով է լցված: Էսօր Աշխենն ու Մուշեղն էին մոտս... Երկուսն էլ շատ լավ են... Այժմ Գիգայի տրամադրությունը շատ է լավացել: Գիգան այնպես լավ պաշտպանեց Ղարաբաղի, Համազասպի եւ հաշտարխանցիների գործը, որ բոլորը զարմացան-միանգամայն հրաշալի, ամենաառաջնակարգների նման: Բոլոր փաստաբանները շատ գովեցին» (Ն.Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Եր., 1969, էջ 388:)

* * *

Հ. Թումանյանի ստեղծագործության կաթնաղբյուրը ժողովրդական բանահյուսությունն էր: «Հայոց դրամբյանիզմն ու ես» հոդվածում պատասխանելով վայ-քննադատ Դրամբյանին, նշել է. «Ես իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ եւ աշխատում եմ ինչքան կարելի է, մոտիկ ու հարազատ մնալ, «Սասունցի Դավիթ»-ը կազմելիս էլ եմ էդպես արել, նույնիսկ Անուշն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից, եւ շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում` բառացի» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 198-199):

Ինչպես տեսնում ենք, Թումանյանը հայտնում է, որ «Անուշ» պոեմի նյութը եւս վերցրել է ժողովրդականից: Հետաքրքիր է, բանաստեղծը ի՞նչ աղբյուրներից է օգտվել իր անմահ պոեմը գրելիս: Պարզվում է, որ «Անուշ»-ը ունեցել է ղարաբաղյան ակունք:

1881թ. Րաֆֆին շրջագայել է Արցախի գյուղերում: Կուսապատում իջեւանել է բժիշկ Աղասարյանի տանը: Վերջինս խնդրել է անվանի գրողին` գրի առնել իրենց տոհմի հետ կապված Անուշի, Սարոյի եւ Մոսիի ողբերգական պատմությունը, որը տեղի է ունեցել իրենց գյուղում: Րաֆֆին կատարել է նրա ցանկությունը եւ ձեռագիրը նվիրել բժշկին: Տարիներ անց, 1930-ական թթ., մոխրաթաղցի բանահավաք Ասատուր Բաբայանը, ծանոթանալով այդ ձեռագրին, իր հետ բերել է Երեւան եւ ներկայացրել Ավ. Իսահակյանին: Վարպետը խորհուրդ է տվել պահպանել ձեռագիրը եւ հարմար պահին հանձնել տպագրության: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արգելված էին Րաֆֆու, Չարենցի ստեղծագործությունները: Ա.Բաբայանը Րաֆֆու ձեռագիրը Չարենցի գրքերի հետ միասին պահ

ԿՈՄԻՏԱՍ-150

# ՄԵԾ ԵՐԳԱՀԱՆԸ




Հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը երաժշտական մշակույթի բազմակողմանի գործիչ էր: Նա հայտնաբերել և գրի է առել գեղջկական երգերի հազարավոր նմուշներ: Կոմիտասն այդ երգերի անզուգական կատարող էր: Իր հավաքածուի լավագույն նմուշները նա մշակել է ձայնի և դաշնամուրի համար, բազմաձայն դարձրել և ներկայացրել երկսեռ երգչախմբի կատարմամբ՝ ստեղծելով արտահայտիչ երաժշտական կերպարներով հարուստ բարձրարվեստ ստեղծագործություններ:

Կոմիտասը նաև երաժշտագետ էր. հայտնի են հայ հոգևոր և ժողովրդական ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունները:

Կոմիտասը մեծ ավանդ ունի հայ հոգևոր երաժշտության ասպարեզում: Հայոց պատարագի բազմաձայն մշակմամբ և բազմաթիվ հոգևոր երգերի արժեքավոր գրառումներով նա աղավաղումից փրկել է մեր հոգևոր երաժշտության բարձրարժեք նմուշները: Կոմիտասը երաժշտական-հասարակական գործիչ էր և հրապարակախոս: Նա հոդվածներ է գրել՝ գիտական, դասախոսական և դասախոսություններով հանդես եկել Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում՝ հանրությանը ներկայացնելով հայ երգը, որը հայտնություն էր Եվրոպայի երաժիշտների ու երաժշտասերների համար:

Կոմիտասը նաև հմուտ խմբավար էր և մանկավարժ: Կոստանդնուպոլսում նա ստեղծել է 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, սովորեցրել իր մշակած ժողովրդական երգերը և համերգներ տվել ոչ միայն Պոլսում և Թուրքիայի հայաշատ քաղաքներում, այլև Եգիպտոսի քաղաքներում՝ ամենուրեք համերգից առաջ էլ հանդես գալով դասախոսությամբ:

Կոմիտասն աշխարհին ցույց էր տալիս մաքուր, անաղարտ, առանց աղավաղումների հայկական տոհմիկ երգը: Նա չափազանց պահանջկոտ էր ոչ միայն հայ ժողովրդական երգերի, մեղեդիների ոճական մաքրության, այլև կատարողականության նկատմամբ: Կոմիտասը սովորեցնում էր երգել պարզ, առանց պաճուճանքների, ժողովրդական երգին անհարիր ավելորդ ձայնային դայլայլների: Ժողովրդական երգը ո՛չ ռոմանս է, ո՛չ օպերային մեներգ (արիա), ո՛չ աշուղական երգ, որոնք, իբրև առանձին ժանրեր, ունեն իրենց ոճական հատկանիշները և կատարողական հատուկ ձևը:

Հայ ժողովրդական երգը կարիք չունի օտար երգարվեստի կատարողական առանձնահատուկ ձևի նմանակման:

Ժողովրդական երգերի գողտրիկ մշակումներում Կոմիտասը բազմաձայնության միջոցներով ներկայացրել է ժողովրդի հոգու խորությունն ու ինքնատիպությունը:

Ինչքան էլ հին, այնքան էլ նոր են հայ ժողովրդական և հոգևոր երգերն ու մեղեդիները: Կոմիտասը դրանք հայտնաբերելով ու մշակելով՝ նոր սերնդին է փոխանցել մեր ավանդականի նոր մատուցման տարբերակներով, պահպանելով հինը՝ նոր ծնունդ է տվել ու վերակենդանացրել: Ահա Կոմիտասի մեծությունը հենց այստեղ է բնութագրվել, ինչի համար էլ Կոմիտաս երգահանն ու երաժիշտը, կոմպոզիտորն ու դասական երաժշտության հիմնադիրը բոլոր ժամանակների համար արդիական է:

**Յուրա ԲԵԳԼԱՐՅԱՆ**
**գ. Թաղավարդ**

---

է տալիս մեծշենցի իր զոքանչին, ապա մեկնում ռազմաճակատ: Վերադառնալով պատերազմից՝ Ա.Բաբայանն իմանում է, որ Սարգիս անունով իր բարեկամի խորհրդով Րաֆֆու ձեռագիրն ու Չարենցի երկերը ոչնչացվել են: Հետպատերազմյան շրջանում Ավ.Իսահակյանը Երեւանում Ա.Բաբայանին հիշեցնում է Րաֆֆու ձեռագրի մասին: Բայց ավա՜ղ, այդ թանկարժեք գանձն արդեն ոչնչացվել էր: Հարց է առաջանում. Անուշի, Սարոյի, Մոսիի ողբերգության պատմությունը ինչպե՞ս է հասել Թումանյանին: Կան տեղեկություններ, որ շատ կուսապատցիներ, դրանց թվում եւ Աղասարյանների տոհմի մի մասը, 19-րդ դարում տեղափոխվել են Լոռի, Շուլավերի կողմերը՝ իրենց հետ տանելով եւ այս պատմությունը, որն էլ աղբյուր է ծառայել Մեծ Լոռեցու անմահ պոեմի համար (Այս մասին տե՛ս Բ.Կարապետյանի «Հարիւր տարուայ երկխօսութիւն» գրքում, Եր., 1991): Անուշն իրականում իրեն կախել է: Ավանդությունը պատմում է, որ Անուշը թաղված է Կուսապատի հին գերեզմանոցում:

Հ.Թումանյանի՝ ղարաբաղցիների հանդեպ ունեցած ջերմ սիրո մասին է խոսում հետաքրքիր մի պատմություն, որ բացահայտվել է բոլորովին վերջերս: Դեպքը տեղի է ունեցել 1918թ.: Երեսուն երիտասարդ ղարաբաղցիներ, որոնց մեջ է եղել Մարտակերտի շրջանի Պողոսագոմեր գյուղի բնակիչ Գրիգոր Աբրահամյանը, ցարական բանակում ավարտելով ռազմական ծառայությունը, Թիֆլիսից վերադառնում էին հայրենիք: Ճանապարհին Գանձակում թուրքերը շրջապատում են նրանց եւ գերի վերցնում: Ութ տանջալի օրերից հետո, նրանց հաջողվում է քանդել ձիանոցի պատը եւ հետ փախչել Թիֆլիսի զորանոցը, որ մոտ էր Հ.Թումանյանի բնակարանին: Մեծ բանաստեղծը, լսելով ղարաբաղցիների ոդիսականի մասին, այցելում է զորանոց, զրուցում նրանց հետ: Մինչեւ այդ հանդիպումը բանաստեղծն իր ընկերներից մեկի տանը տեսել էր մի գեղեցիկ օրորոց եւ իմացել, որ այն պատրաստել է այդ ղարաբաղցի տղաներից մեկը՝ Գրիգոր Աբրահամյանը: Բանաստեղծը նրան հրավիրում է իր տուն: Ստեղծվում է մի ջերմ մթնոլորտ Թումանյանի ընտանիքի եւ Գրիգորի միջեւ: Բանաստեղծի կինը՝ Օլգան, հանձին Գրիգորի, տեսնում էր իրենց որդուն՝ Արտավազդին եւ ամեն անգամ սեղան նստելիս կրկնում էր. «Լրացել է իմ տասը երեխաների թիվը»:

Որպես երախտագիտության տուրք՝ Գրիգորը մի օրորոց է պատրաստում եւ նվիրում Թումանյանի նորածին թոռանը: Իսկ փոխարենը Թումանյանն ընծայում է լամպ-լուսամփոփ: Մեծ դժվարությամբ բանաստեղծի նվերը հասցվում է Պողոսագոմեր:

Յոթանասուն տարի անց վաստակաշատ ուսուցչուհի Մարգո Աւարոնյանը Աբրահամյանների օջախում Գ.Աբրահամյանի այրուց՝ Վարդանուշ մայրիկից լսում է այդ պատմությունը:

Ուսուցչուհին խորհուրդ է տալիս լամպը նվիրել Երեւանի Հ. Թումանյանի անվան թանգարանին, սակայն ընտանիքի անդամները հրաժարվում են՝ չցանկանալով բաժանվել այդ սուրբ մասունքից (Տե՛ս Մ.Աւարոնյան, «Թումանյանի լապտերը», «Խորհրդային Ղարաբաղ», 1990թ., մարտի 21):

Տեղի է ունենում անսպասելին: Ադրբեջանցի օմոնականները խորհրդային զինվորների օգնությամբ տեղահան են անում Մարտակերտի շրջանի գյուղերը:

Պողոսագոմերն ազատագրելուց հետո Աբրահամյանների առաջին հոգսը Թումանյանի լամպի որոնումն էր: Բայց ապարդյուն: Ադրբեջանցիներն ավար էին տարել նաեւ լամպը: Իմանալով այդ մասին՝ խորհեցի. գուցե ադրբեջանցի ասկյարները Թումանյանի լամպի լույսով մարդ դառնան եւ հրաժարվեն վայրենությունից. չէ՞ որ հենց նրանց մասին է ասված Մեծ Լոռեցու քառյակը.

*Բերանն արնոտ մարդակերը էն անբան*
*Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.*
*Ձեռքերն արնոտ զընում է նա դեռ կամկար,*
*Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան:*

* * *

«Երեկվա պատմությունը եւ այսօրվա իրականությունը», «Ահա՛ թե ինչու», «Փորձիչը», «Հայկական հարցն ու իր լուծումը» եւ այլ հոդվածներում Թումանյանը խոր իմացությամբ քննարկել է Հայկական հարցի պատմական արմատների, հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման, քաղաքական կողմնորոշման եւ այլ կարեւոր խնդիրներ: Այդ հարցերի արծարծման ընդհանուր խորապատկերի վրա Մեծ Լոռեցին մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Ղարաբաղին: Նա ներքին մի խանդաղատանքով է ընդգծում, թե ինչպես դեռեւս 17-րդ դարից Գանձասարի կաթողիկոսները սերտ համագործակցել են Ղարաբաղի մելիքությունների ազատագրական ոգորումներին: 19-րդ դարում Գանձասարը դարձել էր ազատագրական շարժումների կենտրոն: Դարասկզբին Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի շուրջն էին համախմբվել շարժման ղեկավարները: Սկսած 1703-1704 թվականներից՝ Գանձասարից Ռուսաստան են հղվել դիմումներ ու նամակներ թուրք-պարսկական լծից ազատագրվելու խնդրանքով: «Շատ շուտով,- գրում է Թումանյանը,- փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը: Եվ թե՛ Օրին ու հայ հոգեւորականությունը, թե՛ հայ ժողովուրդը էն օրվանից երեսներն արին դեպի Ռուսաստան: Եվ ընդմիշտ դեպի Ռուսաստան: Մինչեւ էսօրվա օրը» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 163):

Հաստատված է, որ Թումանյան տոհմը սերվել է Մամիկոնյան սպարապետական տնից, որի մի մասը 10-րդ դարում Լոռի է տեղափոխվել Տարոնից: Բանաստեղծը դեռեւս պատանեկության տարիներին գրել է իրենց տոհմի պատմությունը «Գիրք հարանց» վերնագրով: Մեծ Լոռեցին այստեղ հիացմունքով է ներկայացնում Ուզունլար գյուղից մի ծերունու պատմածը ղարաբաղցի քաջերի մասին. «Երեւանու պատերազմի ժամանակ հայերից եւս զորք ժողովեցին: Այդ ժամանակ Ղարաբաղու Մելիք-Ջումշուդը գտնւում էր Դսեղ, որ ուներ իւր առանձին ժողովուրդը... Զորահաւաքից յետոյ նորա զորքի գլխաւորներ ընտրեցին Մելիք-Ջումշուդին, Հովակիմ եուզբաշուն եւ ուրիշ մեծամուն ու քաջ անձանց Լոռու: Ես եւս մասնակցում էի այդ պատերազմին,- ասաց ծերունին» (Ա.Ինճիկյան, Հ.Թումանյան, Եր., 1969, էջ 32):

Ինչպես տեսնում ենք, 1826-1828 թթ. բազմաթիվ ղարաբաղցիներ մասնակցել են ռուս-պարսկական պատերազմին՝ ցուցաբերելով խիզախություն եւ քաջություն, որը եւ չէր կարող վրիպել Հ.Թումանյանի ուշադրությունից: Մեծ Լոռեցին կարեւորություն է տվել հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը: Եվ եթե նա կոչ էր անում ու ձգտում հաշտության ու խաղաղության՝ հայերի եւ թուրքերի միջեւ, դա չի նշանակում, որ նա մոռանում էր ինքնապաշտպանության խնդիրը:

1918թ., երբ ռուսները թողել էին Կովկասը, Թումանյանը շատ էր մտահոգվել հայ ժողովրդի վիճակով, երկրամասի ուժերի հարաբերությամբ: Նրան հուզել էին ռուսների՝ հայերին թողնված ռազմաճակատի գործերը, բերդերում եղած ռազմական եւ այլ պարենավորման հսկայական պահեստների եւ օգտագործման խնդիրները:

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լեւոն Եվանգուլյանին գրած նամակում (Տե՛ս Թումանյան, Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, Եր., 1969, էջ 435-437) բանաստեղծը բարձրացնում է Քուռ եւ Արաքս գետերի միջեւ գտնվող Հայկական Լեռնաշխարհի ապահովումը զենքով եւ զինամթերքով: Որպես Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի եւ Բորչալուի ընդհանուր լիազոր ներկայացուցիչ՝ նա նպաստել էր հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը, առանձնահատուկ հետեւել Ղարաբաղի ուժեղացմանը՝ այն համարելով էական խնդիր: Թումանյանն արդարացիորեն բարձրացնում էր Մեծ Հայաստանի ընդարձակ նահանգը հանդիսացող Արցախի պաշտպանության, հայ ժողովրդի հետ նրա համատեղ կյանքի ապահովման հարցերը: Այն տարիներին, երբ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանում ամեն գնով ձգտում էին Ղարաբաղը պոկել Հայաստանից, բանաստեղծը վրդովվել էր: 1919թ. Լենինի զինակից Ա.Միկոյանը հայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում պիտի լինի, իսկ Թումանյանը Թիֆլիսում կազմակերպել էր ցույցեր ու ազգահավաքներ Ղարաբաղը Հայաստանից խլելու անարդարացի քաղաքականության դեմ: Այսօր, երբ արցախցիներն ամբողջ հայ ժողովրդի աջակցությամբ անզիջում եւ վճռական պայքար են մղում հանուն անկախության եւ ազատության, մի նոր իմաստ են ստանում Մեծ Լոռեցու հետաքրքրությունն ու սերը մեր լեռնաշխարհի հանդեպ, նոր ուժով է հնչում նրա իմաստությունը. «Ամեն մի ժողովուրդ... բաղկացած է կենդանի մարդկանցից, հորից, մորից, քրոջից, եղբորից, ամուսնուց, որդուց... Դրանք հավիտյան չեն կարող տանել թե՛ իրենց եւ թե՛ իրենց հարազատների տանջանքն ու անպատվությունը: Մարդկային կարողությունն ու համբերությունը ինչքան էլ մեծ լինի, մի սահման ունի» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 146-147):

Համբերության այս սահմանից էլ հնչել է հանճարեղ արվեստագետի վճռական խոսքը. «Հայաստանը պետք է խոսի վերջապես: Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, որ ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողովուրդների մեջ, այլեւ էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով եւ ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար» (Նույն տեղը, էջ 286):

Հ.Թումանյանը շատ է երազել, որ հայ ժողովուրդն ունենա համալսարան: Արդ, Երեւանի պետական համալսարանին զուգահեռ մեր ժողովուրդն ունի իր երկրորդ համալսարանը Արցախում: Եվ կրկնակի խորհրդանշական ու այժմեական է հնչում 1918 թվականին Շուշիում Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի հիմնադրման 75-ամյա հոբելյանի առթիվ Մեծ բանաստեղծի հղած հեռագիրը. «Այսօր, երբ պատմական Ղարաբաղը հայրենի բարձունքներում այնպես ուժգնորեն ամրացնում է իր հոգեւոր կրթության միջնաբերդը՝ տոնելով նրա գոյության 75-ամյակը, ես հրճվում եմ:

Թող նրա որդիները լինեն բարձր ու անսասան, ինչպես նրա սեգ լեռներն են» (Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 286):

**Սոկրատ ԽԱՆՅԱՆ**
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**
**ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ

# НЕМЕЦКИЙ ЯЗЫК В ШКОЛЕ КАК ВТОРОЙ ИНОСТРАННЫЙ

Первым иностранным языком в большинстве случаев является английский язык, на базе которого дети начинают изучение другого европейского языка.

Уже 8 лет в школе № 3 учащиеся с 5 класса изучают немецкий как второй иностранный язык на основе учебника **"Deutsch" М.Аствацатрян, С.Сарксян.** Учебник составлен содержательно, интересно, красочно, так что ученики с энтузиазмом и воодушевлением начинают изучение. Но трудности заключаются в том, что учебное пособие рассчитано на 3 часа в неделю, а для второго иностранного языка отводится 2 часа в неделю. Учителю приходится перерабатывать учебник, перестраивать, что-то убирать и так далее. В учебниках средних классов существуют большие трудности, так как учебники 7-8 классов недостаточно интересны по содержанию и не располагают большим практическим материалом: здесь небольшое количество заданий и упражнений на закрепление правил. По моим наблюдениям, ученики изучают с удовольствием первые 3 года, затем наблюдается некоторый спад. И здесь немаловажное значение имеет учебник, его содержание, иллюстративный материал, практические задания.

Каждый учитель, преподающий иностранный язык, замечает разницу в изучении первого и второго иностранного языков. Практика показывает, что трудности овладения вторым иностранным языкам убывают примерно вдвое по сравнению с усилиями, затраченными на изучение первого иностранного языка. Новые задачи, которые стоят перед преподавателем , предполагают изменение в требованиях к уровню владения иностранным языком, определение новых подходов к отбору содержания и организации материала.

*Процесс овладения немецким языком может быть легким и интенсивным за счет*

1.общего латинского алфавита,

2. лексики, имеющей сходство на уровне произношения, значения, написания,

3.словообразования: tanzen - to dance/ der Elefant - the elephant/

beginnen - to begin/ die Hausarbeit - the homework;

4.наличия определённого и неопределённого артиклей и схожести правил по их употреблению: Das ist ein Mann. Der Mann ist gut./ This is a man. The man is good;

5.похожих структур предложений: Er ist gut / He is good. Sie kann tanzen/She can dance;

6.образования временных форм (от трех основных форм глагола и использование вспомогательногог лагола haben = to have в перфекте): kommen - kam - gekommen/ come -came - come, bringen - brachte-gebracht/ bring - brought - brought;

7.модальных глаголов: mussen - must /konnen - can;

8.повелительного наклонения: Lesen Sie den Text!!/ Read the text!

*Изучение немецкого языка пойдет быстрее и легче если:*

1. опираться на сходство с английским, а также находить опоры в родном языке;
2. пользоваться языковой догадкой (о значении слова, грамматической формы), опираясь на контекст, на знакомые части слова;
3. замечать различия в языковых явлениях и способах выражения мысли;
4. переносить на новый язык умение работать (находить значение слова в словаре, пользоваться перифразом, выполнять различные упражнения и тому подобное).

*Но вместе с тем ученики сталкиваются и с множеством трудностей:*

1. в произношении;
2. в правилах чтения;
3. в интонации;
4. в том, что некоторые слова в английском и немецком языках выглядят и произносятся похоже, но имеют разные значения, являются так называемыми "ложными друзьями переводчика";
5. в порядке слов;
6. в склонении артиклей;
7. в спряжении глаголов;
8. в сложных грамматических конструкциях и т.д.

Известно, что грамматика немецкого языка гораздо сложнее грамматики других германских языков. Склонение имен прилагательных доставило классику американской литературы Марку Твену массу хлопот: он попробовал просклонять "мой хороший друг" ("mein guter Freund") и пришёл к выводу:" В Германии лучше вовсе не иметь друзей, чем столько с ними возиться".

Мы не ставим перед собой недостижимых целей. Во-первых, мы считаемся с возможностями учебного плана, поэтому объем языкового материала определяем как минимальный. Во-вторых, в силу ограниченности времени содержание направляем на овладение основ речевой деятельности на немецком языке.

Однако без владения грамматикой не может быть речевого общения. Цели и задачи обучения грамматике - привить учащимся практические умения во всех основных видах речевой деятельности.

[моё] Немецкий язык Текст Немецкий

Уже на 3-4 уроках мы знакомим детей с артиклями и со спряжением глаголов, чуть позже с глаголами *"haben"* и *"sein"*. Надо сказать, что спряжение вспомогательных и сильных глаголов ученики запоминают с трудом. Часто приходится слышать *du habst, er bist,* поэтому эти навыки необходимо автоматизировать, повторяя на каждом уроке. В 5 классе дети знакомятся с личными, указательными и притяжательными местоимениями, умеют составлять с ними словосочетания, знакомятся с числительными до 20-и, но порядковые удаются несколько сложнее, и было бы целесообразнее проходить их с 6 класса. Что касается составных количественных, то эта проблема решается лищь в 9-10 классах - здесь надо учителю набраться терпения и каждый раз исправлять ошибки с объяснением правила.

Знакомство с грамматическим строем немецкого языка открывает для учащихся новую картину. Для них будут новыми такие синтаксические явления, как строгий порядок слов в предложении и возможность изменения смысла предложения в зависимости от расположения слов в предложении.

Практическое значение грамматики особенно отчетливо выступает уже в средних классах, где учащимся приходится чаще самостоятельно сталкиваться с новыми для них немецкими текстами. В этих случаях грамматические явления служат основными опорными пунктами, позволяющими учащимся начать расшифровку текста и, установив связи между отдельными членами предложения, добиться понимания общего содержания текста, даже если не все слова ему знакомы (в немецких предложениях одна часть составного глагола стоит в конце предложения, а в большинстве сложноподчиненнных -оба глагола).

Общеобразовательное значение изучения грамматики немецкого языка состоит в том, что она расширяет лингвистический кругозор учащихся. Выявление всех особенностей, отличающих грамматику одного языка от грамматики другого, дает возможность учащемуся сопоставлять факты родного языка с фактами иностранного языка, выделить сходные и различные черты обоих языков. Грамматика иностранного языка, таким образом, позволяет учащемуся значительно глубже вникать в грамматику своего родного языка (у нас это русский, но и с армянским я провожу параллель, тем самым способствуя лучшему его осознанию). Работа над грамматикой развивает логическое мышление школьников, их наблюдательность, способность анализа и синтеза увеличивает объем памяти. Наша задача:

1. ознакомить доступно учащихся с новым грамматическим материалом;
2. выработать грамматические навыки;
3. добиться овладения речевыми грамматическими умениями,

Обучение грамматике немецкого языка имеет свои трудности и проблемы. С одной стороны, родственность грамматического строя немецкого и русского языков обнаруживается в наличии ряда сходных грамматических категорий, как падеж, число, лицо, время. С другой стороны, в немецком языке существуют явления, которых нет в русском языке. Так, например, на род существительных в немецком языке указывает употребляемый перед ними определенный артикль. В словари записываются слова с определенным артиклем, и дети знают, что артикль **der** указывает на мужской род, артикль **das** указывает на средний род, а артикль **die** - на женский род. Род существительного можно определить и по суффиксу. Если существительные имеют суффиксы -schaft, -heit, -keit, -ung, -ik и другие, то они относятся к женскому роду, а суффиксы - er, -ist, -at, -ent -ler являются показателями мужского рода. Для среднего рода характерны суффиксы -chen, -lein , -tel, -um, -ment. Что касается временных форм глагола, то здесь также имеются трудности. Если в русском языке прошедшее или будущее время можно выразить одним глаголом, то в немецком языке нужно употребить два глагола, которые еще и занимают определенные места в предложении. Так, будущее время в немецком языке образуется с помощью вспомогательного глагола **werden** и неопределенной формы глагола -**Infinitiv**.

Презентация нового материала предполагает его устное предъявление со зрительной опорой. Опора на слуховой и зрительный анализаторы необходима для прочного усвоения материала. Поэтому при объяснении нового грамматического правила я всегда пишу на доске примеры. Предъявляемое предложение всегда содержит один незнакомый элемент, который подлежит объяснению. На доске написаны предложения в будущем времени:

1. Die Kinder werden ein Diktat schreiben.
2. Wir werden ein interessantes Buch lesen.
3. Ich werde meiner Freundin helfen.

Детям задается вопрос: "Какую новую форму они заметили в предложении?" Они делают вывод, что во всех предложениях употребляется один и тот же глагол **werden,** а глагол, занимающий последнее место имеет окончание **-en**.

Учащиеся обращают внимание на то, что вспомогательный глагол изменяется по лицам. После этого формулируется правило и записывается в грамматическую тетрадь.

На следующем этапе идут тренировочные упражнения:

1. Вставить глагол **werden** в нужной форме в предложении.
2. Поставьте неопределенную форму глагола и вспомогательный глагол на свои места в предложении.
3. Ответьте на вопросы, используя будущее время.
4. Предложение дано в настоящем времени - преобразуйте его в будущее время.
5. Переведите предложения на русский язык в будущем времени.
6. Переведите предложения на немецкий язык в будущем времени.

Работа над темой идет в течение нескольких уроков и заканчивается проверочной самостоятельной работой. При анализе работ видно, что наибольшую трудность дети испытывают при переводе предложений на немецкий язык(неправильно строят ,путают род, Им.п. с В.п., не склоняют артикли и прилагательные, не говоря уже о глаголе). Все это требует большой работы.

При введении модальных глаголов закрепляются формы глаголов во всех лицах, детям предлагается раскрыть скобки и от начальной формы глагола образовать нужную, соответствующую лицу и числу подлежащего. Поскольку модальные глаголы занимают всегда второе место в предложении, а неопределенная форма глагола - последнее, то на закрепление данного правила предлагаются такие задания:

- найти в предложении модальный глагол;
- найти в предложении неопределенную форму глагола;
- назвать признак неопределенной формы глагола;
- расставить правильно глаголы в предложении.

Выполняя любое действие, дети всегда отвечают на вопрос: "Почему ты выбрал именно эту форму, почему ты выстроил такой порядок слов?", т.е. дети всегда приучаются делать самостоятельно выводы и осознанно использовать грамматическую структуру.

Грамматические навыки входят в состав не только диалогической и монологической устной речи, но и в состав всех других видов речевой деятельности. Имеются грамматические навыки в аудировании и чтении. Это рецептивные грамматические навыки. В них отправной точкой является воспринятый речевой материал - в нем требуется вычленить грамматическую форму по ее признакам, узнать ее значение и смысл всего контекста. Так, например, нужно перевести предложение в прошедшем времени: "Er hat ein interessantes Buch gelesen." (Он прочитал интересную книгу.) В первую очередь в предложении дети находят подлежащее и сказуемое. Учащиеся знают, что эти члены предложения занимают определенное место: подлежащее занимает первое место перед сказуемым или после него, а сказуемое занимает только второе место. По этим признакам называются главные члены предложения. Последнее место в данном предложении занимает причастие. Его учащиеся определяют по следующим признакам: по приставке **ge**- и суффиксу **-en**. Таким образом, наличие в предложении глагола **haben** и **причастия** указывает на употребление в предложении прошедшего времени. Опыт работы над грамматикой показывает, что дети при работе с отдельными предложениями, в которых закрепляется введенный материал, мало допускают ошибок. Когда же они начинают работать с текстами, где может встретиться этот материал, они теряются и испытывают трудности. Поэтому при работе с текстом приходится снова анализировать данное грамматическое правило.

Основные грамматические явления вводятся на младшей и средней ступенях обучения. При закреплении грамматики в младших классах используются игры. Так, детям нравится игра "Под одной крышей", которая используется при закреплении спряжения глаголов. Несколько учеников выходят к доске и под ладонь учителя ставят свои пальчики. Всей группой вместе мы проговариваем спряжение глагола. Потом я накрываю ладонью пальчики детей, и чей пальчик остался у меня в ладошке, тот проговаривает еще раз спряжение этого глагола. Даются также задания написать поздравления с праздником, приглашения на день рождения ( с красивым оформлением), на средней ступени дети составляют расписание уроков, пишут мини-сочинения. Оцениваю работу ребёнка не на основе его сравнения с другими детьми, а на основе

## ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

анализа его собственного продвижения, не скупясь на подбадривающие оценочные высказывания, на всестороннее стимулирование его работы.

На старшем этапе обучения учащиеся уже имеют определенные теоретические знания и практические навыки по грамматике немецкого языка, поэтому на данном этапе обучения важно не только расширить и углубить эти знания, а привести их в систему, свести в единое целое. Поэтому на данном этапе обучения грамматике все грамматические явления рассматриваются как функционально связанные между собой.

Особенно хорошо это просматривается при выполнении письменных заданий: написание письма и сочинения. Здесь уже находят место все изученные языковые явления. Поэтому к грамматике должно быть постоянное внимание, а сформированные на уроке грамматики умения и навыки должны поддерживаться в ходе самой разнообразной работы на всех занятиях по немецкому языку.

Для того чтобы постоянно обращаться к грамматическим правилам и примерам, начиная с 5-го класса, все учащиеся ведут грамматические тетради. На каждую тему отводится определенное количество страниц, которые заполняются по мере введения грамматического материала. Например, в 7-ом классе дети знакомятся с придаточными предложениями: дополнительными, причины и условными. Для данной темы отводится специальная страничка. В 8-ом классе дети дописывают сюда придаточные определительные, в 9-ом классе - придаточные цели и т.д. В 11-ом классе составляется сводная таблица, в которой систематизируется весь материал по теме "Виды придаточных предложений". Ведение такой тетради очень удобно. Нет необходимости каждый год записывать уже пройденный грамматический материал. Когда дети работают с текстом, выполняют письменные работы, они всегда имеют возможность обратиться к своим записям и найти нужное правило.

При работе над грамматикой я стараюсь научить детей пользоваться справочником, которым в данный момент является грамматическая тетрадь.

Одной из трудных тем в немецкой грамматике является склонение прилагательных. Объяснение строится следующим образом. В грамматической тетради записываются три типа склонения прилагательных. Дети заполняют таблицы с окончаниями, характерными для каждого типа. Также указываются признаки, по которым можно определить тип склонения. Записывается следующий алгоритм действий:

1. посмотреть, какое слово употреблено перед прилагательным;
2. по данному слову определить тип склонения;
3. определить род существительного, перед которым стоит прилагательное;
4. определить падеж существительного.

По словам детей, трудность для них составляет определение падежа существительного. Эта трудность связана с определением падежа в русском языке. По мнению учащихся, ведение грамматической тетради помогает им при работе над грамматикой.

В учебниках немецкого языка очень мало тренировочных упражнений для закрепления введенного грамматического материала. Поэтому приходится составлять самой различные грамматические задания. За годы работы накоплено большое количество материала, а именно:

1. Тестовые задания по всем темам;
2. Контрольные грамматические работы для всех классов;
3. Итоговые грамматические тесты;
4. Различного вида задания.

Весь грамматический материал систематизирован и распределен по папкам. На каждой папке имеется титульный лист с перечнем содержащегося в ней материала. Это очень удобно для работы на уроке. В конце работы над грамматической темой проводятся контрольные работы. В отдельной тетради я веду учет выполнения этих работ, чтобы знать, какую тему ребенок должен доработать.

Анализ выполнения детьми работ показывает, что работа над грамматикой дает положительные результаты:

1. учащиеся привыкают работать со справочником, в данном случае с грамматической тетрадью;
2. применяют полученные грамматические навыки при работе с текстами;
3. при выполнении письменных работ допускает меньшее количество ошибок;

Учащиеся старших классов осознанно подходят к выбору грамматических явлений при выполнении таких работ, как написание письма или сочинения.

Для успешной работы учителю приходится постоянно искать эффективные способы активизации познавательной деятельности. Он должен поддерживать интерес к изучению иностранного языка, повышать мотивацию, развивать творческое и ассоциативное мышление и языковую догадку.

Одним из эффективных методов для активизации познавательного интереса у учащихся является мнемотехника. **Мнемотехника** (греч. - искусство запоминания) - это наука о запоминании, предлагающая совокупность приемов, способов и искусственных ассоциаций, облегчающих запоминание, увеличивающих объем памяти и, главное, облегчающих вспоминание.

Внутренние резервы мнемотехники уникальны, богаты и разнообразны. Это и смена деятельности, и эмоциональный подъем, и яркая ассоциативность, и доступность, и простота. Мнемонический прием не оставляет школьников безучастными и равнодушными.

Как известно, левое полушарие головного мозга является "офисным центром", который отвечает за теорию, анализ, синтез, логику и мышление. Правое же полушарие является "творческим центром", который отвечает за восприятие цвета, звука, за создание ассоциаций и образов. Задача учителя - активизировать оба эти полушария, т.е. соединить усвоенный материал с творчеством.

Знаете ли вы, что наше восприятие влияет на память? Мы запоминаем то, что мы читаем (10%), мы слышим (20%), мы видим (30%), мы видим и слышим (70%), мы делаем сами (90%), т.е. мы обучаемся тем лучше, чем больше чувств мы используем при обучении. Благодаря этому простому приёму изучающие немецкий язык намного лучше усваивают. Например, артикли **der, die, das в 5 классе.** Я предлагаю запомнить артикли так: der заканчивается на согласную, значит, муж. рода, das на букву с -значит, среднего рода , die на гласную, что больше ассоцируется с жен. родом.

**Рифмизация**

Для запоминания различных слов, правил и исключений немецкого языка я использую также технику составления стихов. Например, стишок о суффиксах - **chen** и **-lein.**

**" -chen" und "-lein" machen alle Dinge klein".** "Уменьшительно-ласкательные суффиксы **-chen** и **-lein** делают все вещи маленькими".

*Стишок о предлогах, употребляющихся с Винительным падежом:*

Durch, für, ohne, um, gegen, wider, bis, entlang -

*Стишок о предлогах, употребляющихся с Дательным падежом:*

Mit, nach, aus, von, zu, bei, seit, außer, entgegen, gegenüber.

Прием рифмизации я также использую для развития ассоциативной памяти. Я обычно прошу детей подобрать рифму к новым словам, тем самым вспомнить забытое, может быть, слово. Например,

Gießen (поливать) - fließen (течь)
Tisch (стол) - Fisch (рыба)
Schluß (конец) - Fluß (река).

Чтобы облегчить запоминание новых слов, можно использовать следующие ассоциации:

- по контрасту (антонимы), например, черный - белый (schwarz-weiß);
- по сходству (синонимы), например, боль, страдание (**traur**ig - **траур**ный-печальный);
- по звучанию: сон - тон, Baum - kaum, Bank - Schrank; Maus-Haus
- по корню слова: высота - высокий, fahren - der Fahrer; fliegen-Flieger
- часть - целое: лицо, нос, Mund - die Nase;
- подчинительные ответы: человек (мужчина) - отец, женщина - мать, Mann - Vater, Mutter - Frau;

опора на родной язык эффективна в тех случаях, где сходное звучание draußen - Tür -dur, сердце- Herz, кнопка - Knopf - пуговица, фейерверк - Feuerwerk, шланг - Schlange - змея

Уже на первом уроке в шутку предлагаю ученикам даже поспорить, что уже сейчас они знают не менее 20 немецких слов. (Можно увеличить это число даже до 200 - 250).

Прежде всего, я задаю им вопрос, что люди часто едят утром за завтраком. Правильно, бутерброд (das Butterbrot)! Вот вам и первые два слова, заимствованные из немецкого языка *die Butter* - масло и *das Brot* - хлеб. Нужно только запомнить род этих существительных, поскольку он не совпадает с их родами в русском языке. Продолжаем. Кто производит расчет заработной платы на предприятиях или на фирмах? Конечно, бухгалтер (der Buchhalter)! Записываем в свой актив еще два слова: *das Buch* - книга и *der Halter* - владелец, держатель, хотя в последние годы в немецком языке чаще употребляется английский эквивалент "accountant". Идем дальше. Спрашиваю, что носят многие школьники, да и молодые люди вместо портфеля? Конечно, рюкзак (der Rucksack): *der Rücken* - спина + *der Sack* - мешок, то есть наспинный мешок. Небольшое отличие заключается только в произношении, поскольку в немецком в слове произносится звук "u", а в русском - звук "ю",. Спрашиваю, что надевают к костюму? Конечно, галстук. Начинают мыслить -Hals-шея + Tuch-платок. Нам часто встречается слово "ярмарка" (der Jahrmarkt), и мы совершенно не задумываемся о том, что это исконное немецкое сложное существительное, состоящее из слов das Jahr - год и der Markt - рынок, базар. Если сейчас спросить школьника, где люди, как правило, лечатся и отдыхают во время отпуска, то можно услышать ответ "за границей". Но не следует забывать, что особенно раньше люди ездили лечиться и отдыхать на курорты, в частности, Крыма и Кавказа. Опять мы имеем заимствование из немецкого языка, а именно слово der Kurort, в котором первая часть die Kur, переводится как лечение, а вторая - der Ort - как место. Если мы вспомним, почему затонул в 1912 г. лайнер "Титаник", то запишем в наш актив еще два немецких слова das Eis - лед и der Berg - гора, т.е. айсберг. Можно привести еще немало древних немецких заимствований, которые в отличие от "англицизмов" называются "германизмами". Такие слова как "егерь" (derJäger), циферблат (das Zifferblatt), "аншлаг" (der Anschlag), "мундштук" (das Mundstück), "вундеркинд" (das Wunderkind), "фейерверк" (das Feuerwerk), "абзац" (der Absatz), "ландшафт" (die Landschaft), "дуршлаг" (der Durchschlag), шлагбаум (der Schlagbaum) и многие другие.

*Спрашиваю у учеников:*

-Какая ассоциация возникает у Вас со словом **"Brücke"**?- Верно, "брюки". Река разделяет город на 2 части, а между частями города есть мост. Так же, как между брючинами есть общая часть, так и между частями города есть общая часть - это мост. Отсюда мост - это Brücke.

Многие слова в немецком языке можно чисто фонетически связать с какими-либо словами русского языка. Это будет не смысловая ассоциация как со словами das Auto и "авто". Речь идёт о звуковом сходстве слов. Например, слово der Tisch "стол" по звучанию похоже на русское слово "тишь". Можно создать какой-либо образ, где будет задействовано и слово "тишь" и слово "стол": "Ученик сидит в тиши?. Сел за стол - давай пиши!". Данное предложение вызывает образ сидящего за столом ученика, который в тишине делает домашнее задание, а мама его подгоняет: "давай, пиши!". Такой образ позволит запомнить слово der Tisch быстрее, чем любые карточки.

На практике данный метод позволяет запоминать около 100 слов в день,нужна лишь фантазия.

Немецкое словообразование не ограничивается словосложением существительных. Глаголы и прилагательные также подвергаются различным изменениям, как правило, при помощи приставок и суффиксов. Приставки глагола бывают отделяемыми и неотделяемыми. Все они имеют некоторое значение. Так, отделяемая глагольная приставка mit- часто придаёт глаголу значение совместности действия, соучастия: bringen "приносить" - mitbringen "приносить с собой", arbeiten "работать" - mitarbeiten "сотрудничать", nehmen "брать" - *mit*-nehmen "брать с собой". Неотделяемая приставка *zer*- часто имеет значение уничтожения или разрушения чего-либо и соответствует приставкам "рас-/раз-" в русском языке: brechen "ломать" - zerbrechen "разломать", stören "нарушать, беспокоить" - zerstören "разрушать, уничтожать", reißen "рвать" - zerreißen "разрывать". Другие приставки имеют более размытые значения, но их всё же можно интуитивно угадать.

**Метод связок**

Этот метод заключается в объединении опорных слов текста в единую целостную структуру, единый целостный рассказ.

В немецком языке есть ряд со вспомогательным глаголом "sein". Для того чтобы запомнить глаголы, ваша задача - составить небольшой рассказ, используя эти глаголы в прошедшем времени:

sein - быть, являться
werden - стать, становиться
bleiben - оставаться
folgen - преследовать
begegnen - встречать
gelingen - удаваться
misslingen - не удаваться
passieren - случаться, происходить
geschehen - делаться, быть сделанным

*Ich bin Detektiv. Heute bin ich in der Stadt gewesen. Ich bin einem Mann gefolgt. Es ist dunkel geworden. Plötzlich ist mir mein Freund begegnet. "Was ist passiert?" - wollte er wissen. - "Warum bist du nicht zu Hause geblieben? Es ist mir nicht gelungen, dich telefonisch zu erreichen." Endlich bin ich meinen Freund losgeworden. Es ist nichts Schlimmes geschehen. Aber meine Verfolgung ist misslungen!*

Я детектив. Сегодня я был в городе. Я следил за одним мужчиной. Стало темно. Внезапно я встретил своего друга. "Что случилось?" - спросил он. Почему ты не остался дома, я не мог связаться с тобой по телефону? Наконец-то я избавился от моего друга. Ничего плохого не случилось. Но моя слежка не удалась.

Запомнить историю намного легче, чем список глаголов.

**Вывод:** использование на уроках немецкого языка эффективных способов развития ассоциативной памяти и некоторых мнемонических приемов позволяет улучшить качество знаний и добиться хорошей успеваемости, повысить мотивацию к изучению немецкого языка, развить познавательные интересы.

**АГАМЯН Гоар Левоновна**
**Учитель немецкого языка**
**средней щколы N 3**
**имени А.С. Грибоедова**

ՓԱԿ ԷՋԵՐ

# ԱՂԱՍԻ ՍԱՖԱՐՅԱՆ. ԺԱՄԱՆԱԿԻ ՁՈՀԸ



1949թ. հունվարի 29-ին Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի տնօրեն Աղասի Սաֆարյանին կանչել են Ադրբեջանի Կենտկոմ, որտեղից նա այլևս չի վերադարձել: Հարազատների հարցումին համապատասխան մարմինները պատասխանել են, որ նա ատրճանակով ինքնասպանություն է գործել: Դրանից հետո նրա ընտանիքը ժամանակի ոգուն համապատասխան պիտակավորվել է որպես ժողովրդի թշնամու ընտանիք և ենթարկվել հալածանքների: Մինչև իր կյանքի վերջին օրը Աղասի Սաֆարյանի կինը՝ մանկավարժ Մարգո Աթայանը (մահացել է 2005թ.) ասում էր. «Ես չեմ հավատում, որ Աղասին ինքնասպան եղած լինի, նա կյանք սիրող մարդ էր, շատ էր սիրում իր Ղարաբաղը, երեխաներին, ուսանողներին: Նրան սպանել են»:

Այդ մարմիններում մարդիկ են լինում, որ հետո պատմում են, թե ինչպես է դեպքը տեղի ունեցել: Պատմել են, որ Ա. Սաֆարյանին մեղադրել են նացիոնալիզմի մեջ: Հարցաքննողները նրա ձեռքն են տվել «ժողովրդի թշնամիների» ցուցակը և ստիպել, որ ստորագրի, որը նա չի արել: Եվ հանկարծ իր ձեռքում հայտնված ատրճանակով նա իբր կրակել է իր գլխին… Ադրբեջանի իշխանություններն այդպես հաշվեհարդար են տեսել արցախահայ լավագույն մտավորականի հետ:

Ո՞վ էր Աղասի Սաֆարյանը, և ինչո՞ւ պետք է նա 1937-ի շարունակություն 1949-ի զոհը դառնար: Փորձենք թերթել նրա կյանքի էջերը արխիվային փաստաթղթերի և դստեր՝ Ժաննետա Սաֆարյանի՝ մոր պատմածներով հիշողությունների հիման վրա:

Աղասի Գրիգորի Սաֆարյանը ծնվել է 1907թ. Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում, միջակ գյուղացու ընտանիքում: Հայրը վաճառականությամբ էր զբաղվում, խանութ ուներ գյուղում, Շուշիում, օգնում էր գիմնազիային, որբերին, եկեղեցուն: Աղասին 3 տարեկանում կորցրեց հորը, իսկ 16 տարեկանում՝ մորը: Երեք երեխաները մնացին որբ: Ապրուստի միջոց հոգալու համար Աղասին 3-րդ դասարանից թողեց ուսումը և սկսեց աշխատել՝ կատարելով գյուղական բոլոր աշխատանքները, ինչ հանձնարարում էին համագյուղացիները:

Մարզում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1926թ. շրջանային կուսկազմակերպությունը նրան ուղարկում է Բաքու՝ բանֆակում սովորելու, որն ավարտում է 1930թ.: 1931-1932 ուստարում ուսուցիչ է աշխատել Կաղարծու թերի միջնակարգ դպրոցում: 1932-ին ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետը և այն ավարտել 1936-ին: Համատեղությամբ դասավանդել է բանֆակում:

1936-1937 ուստարում Թաղավարդի դպրոցի տնօրենն էր: 1937-1938թթ. աշխատել է ԼՂԻՄ մարզժողկրթության բաժնում՝ որպես մեթոդիստ: 1938-1941թթ. եղել է Կաղարծու միջնակարգ դպրոցի տնօրենը: Նրա անմիջական ջանքերով դպրոցը վերակառուցվել է, ընդարձակվել:

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա էլ ցանկություն հայտնեց մեկնել ռազմաճակատ, սակայն նրան պատասխանեցին Ստալինի խոսքով՝ թիկունքն էլ ճակատ է, որտեղ պետք է կռվել: Եվ հաշվի առնելով նրա կազմակերպչական ունակությունները՝ նշանակեցին Շուշիի ուսուցչական ինստիտուտի տնօրեն, որի տնօրենին՝ Ջավադ Մայիլյանին, զորակոչել էին գործող բանակ: Ա. Սաֆարյանի փաստաթղթերում պահպանվել են Ջ.Մայիլյանի նամակները, որտեղ նա հետաքրքրվում է ինստիտուտի գործերով և իր ուրախությունը հայտնում այն առթիվ, որ ինքը հանգիստ է, քանի որ ինստիտուտի ղեկավարությունը հանձնվել է Սաֆարյանի նման մարդուն:

Ինստիտուտի՝ երկրին մատուցած ծառայությունների համար Ա. Սաֆարյանը պարգևատրվել է «1941-1945թթ. Հայրենական պատերազմում բարեխիղճ աշխատանքի համար» մեդալով, այնուհետև՝ «Պատվո նշան» շքանշանով:

Ա.Սաֆարյանի նախաձեռնությամբ ուսուցչական ինստիտուտը 1945թ. տեղափոխվում է Ստեփանակերտ և տեղակայվում ռազմական հոսպիտալի շենքում (ներկայիս 7-րդ դպրոցում): Ե՛վ Ստեփանակերտում, և՛ Շուշիում Ա.Սաֆարյանը սեփական տանիք չի ունեցել: Երկու դեպքում էլ որպես բնակարան ինստիտուտի երկու լսարաններն են ծառայել բազմանդամ ընտանիքի համար: Կինը՝ Մարգո Աթայանը, մաթեմատիկա և ֆիզիկա էր դա-



*Կաղարծի գյուղի դպրոցը սարքում-վերանորոգում են, տնօրեն Աղասի Սաֆարյանը պատուհանին կանգնած ցուցումներ է տալիս:*

սավանդում ինստիտուտում: Ժաննետան ծնվել է Շուշիի երկամյա ինստիտուտի ֆիզիկայի լաբորատորիայում, քանի որ կադրերի սղության պատճառով մայրը ֆիզարձակուրդ չէր գնացել: Այդ տարիներին սով էր Ղարաբաղում: Դասերին ուսանողներից և ուսուցիչներից ուշաթափվողներ են եղել: Ա.Սաֆարյանը գյուղերից ձեռք է բերել եզներ, գութան և երկու-երեք ուժեղ ուսանողների հետ գիշերները ինստիտուտի օժանդակ տնտեսությունում (շատերին հետաքրքիր կլինի իմանալ, որ Ազատամարտիկների փողոցը՝ 7-րդ դպրոցից ներքև ընկած տարածությունը, ամայի դաշտ էր) լուսնի լույսի տակ վար են արել, ցորեն ցանել: Ստացված բերքը աղացել և ուսանողներին ու դասախոսներին մեկական պարկ ալյուր են բաժանել: Նաև կով, խոզ են պահել: Միսը տվել են ինստիտուտի ճաշարանին, որտեղ ուսանողներն ու դասախոսներն անվճար սնվել են: Շատերն են խոստովանել, որ Ա.Սաֆարյանը փրկել է իրենց սովամահությունից: Բանջարանոց են պահել, որտեղ ուսանողները պրակտիկա են անցել, իսկ բերքը հանձնել ճաշարանին: Իհարկե, դա դուր չի եկել ոմանց: Աղջիկն ասում է, որ մայրը պատմել է, թե ինչպես մեկն ասել էր. «Աղասի, միշտ այդպես ուրախ չես լինելու, մի օր փոսն ես ընկնելու»:

Չնայած կենսաբան էր, մեծ սեր ուներ գրականության, մշակույթի հանդեպ և ինստիտուտում հաճախ էր կազմակերպում այդ գործիչների մասնակցությամբ միջոցառումներ: Ուսանողներից մեկը մի օր գարաժներում (ներկայիս ավտոկայանի տեղը) տեսել էր Ավ. Իսահակյանին մենակ, մանրիկ անձրևի տակ մտամոլոր կանգնած: Վազելով եկել էր Սաֆարյանին ասել այդ մասին: Վերջինս զարմացել էր, թե ինչպես կարող է պատահել, որ հայ մեծ գրողն առանց որևէ մեկի ուղեկցության լիներ: Գնացել, համոզել էր և հրավիրել նրան ինստիտուտ՝ ուսանողների և դասախոսների հետ հանդիպման: Ապա իր տանը հյուրընկալել նրան: Իսահակյանը բանաստեղծություն էր նվիրել տանտիրուհուն (տան խուզարկության ժամանակ դա էլ են տարել), դիտողություն արել, թե ինչու հայկական անուններով չի կոչել երեխաներին:

Ա.Սաֆարյանը Տիմիրյազևի անվան ակադեմիային հոդվածներ էր գրում, ատենախոսությունն արդեն պատրաստ էր, և շուտով պետք է գնար Մոսկվա պաշտպանելու: Ակադեմիան վերցրել է բանջարեղենի նրա հայտնագործած նոր սորտերի մշակման մեթոդները: Ա. Սաֆարյանը ստացած հոնորարով ինստիտուտի լաբորատորիաներն է հարստացրել: Գյուղերից նրանից խորհրդատվություն էին հարցնում: Նաև խոտաբույսերով բժշկություն էր անում: Ա. Սաֆարյանը ինստիտուտը կառուցելու թույլտվություն էր ստացել նոր վայրում և արդեն հիմքերն էր գցել: Նրա մահից հետո ինստիտուտը փակեցին և տեղափոխեցին Բաքու, իսկ որ պիտի նոր կառուցվեր, հետագայում դարձավ գյուղատնտեսական տեխնիկում (ներկայումս՝ ավերակ): Նրա հետևի մասի ընդարձակ հողամասում թույլտվություն էր ստացել ուսուցիչների համար տներ կառուցել և իր համար էլ ժամանակավոր մի կացարան էր ստեղծել, որտեղ պահում էր գյուղատնտեսական գործիքները: Երբ 1949թ. նրան կանչեցին Բաքու, որտեղից նա այլևս չվերադարձավ, և «ժողովրդի թշնամու» կնոջն ազատեցին աշխատանքից ու ընտանիքը վտարեցին ինստիտուտից, անօթևան մնացած ընտանիքի համար փրկություն էր այդ «վրեմյանկան»: Երբ ՊԱԿ-ի աշխատակիցները խուզարկեցին ինստիտուտի նրա բնակարանը, զարմացած հարցրել էին. «Սա՞ է Սաֆարյանի տունը»՝ տեսնելով, որ տան եղած-չեղածը մի հին սնդուկ է, մանկական մահճակալ, հողե հատակին մի հին կարպետ (որի վրա քնում էին) և շատ գրքեր: Ըստ երևույթին, մատնագիր գրողը նշել էր նրա հարստության, արգելված գրականության մասին:

Անվերադարձ տարան նրա հազվագյուտ, արժեքավոր գրքերը ու այն ամենը, ինչ որպես խրախուսում՝ ուղարկել էին Տիմիրյազևի ակադեմիայից:

Դրանից հետո սկսվել են ընտանիքի չարչարանաց տարիները: Մայրը մնացել էր առանց աշխատանքի. ոչ մեկը չէր համարձակվում «ժողովրդի թշնամու» կնոջը գործ տալ: Կերակրողին կորցրածի թոշակ էլ չէին նշանակում: 8-14 տարեկան երեք երեխաներին Բաքվում ապրող ծնողներն են տարել



*Կաղարծի գյուղի բնակիչները և ուսուցիչները դպրոցի համար փայտ են անում:*

պահել, որից մեկին ստիպված էին տալ որբանոց, իսկ փոքրերը՝ 6 տարեկան Ժաննետան և 2 տարեկան Հերմեսը, մնացել են մոր խնամքին: Երկու տարի առանց աշխատանք մնալուց հետո մարզժողկրթբաժնի աշխատողներից մեկը Մարգո Աթայանին խորհուրդ էր տվել քաղաքում փնտրել այն երեխաներին, որոնք դուրս են մնացել դպրոցից և բերել երեկոյան դպրոցում սովորելու: Այդպես էլ արել է և երկու դասարանի չափ երեխա է հավաքել: Ծնողների մի մասն ուրախությամբ է համաձայնվել՝ իմանալով, որ պիտի դաս տա Աղասի Սաֆարյանի նման մարդու կինը, մի մասն էլ հակառակը՝ չի վստահել «ժողովրդի թշամու» կնոջը: Բայց կարճ ժամանակ անց երեխաներն այնքան են սիրել ուսուցչուհուն, որ շատերն են ցանկացել սովորել երեկոյան դպրոցում: Այդ տարիներին միլիցիայի աշխատողների մի մասը կրթություն չուներ, և նրանք էլ եկան: Եվ ինչքա՜ն ճանաչված մարդիկ են դուրս եկել այդ դպրոցից: Մայրն ամբողջ օրն աշխատում էր: Երեկոյան՝ դպրոցում, ցերեկները՝ գնալով աշակերտների տները՝ իմանալու, թե ինչու են բացակայում կամ չհասցնողներին օգնելու դասերը պատրաստելու: Տան ամբողջ հոգսը փոքրիկ Ժաննետայի վրա էր, որը պետք է խնամեր նաև իր 2 տարեկան եղբորը՝ Հերմեսին. ինչպես ինքն է ասում՝ 6 տարեկանից նա մայր էր դարձել եղբոր համար (Հերմեսը Արցախյան պատերազմի ժամանակ էնգելսի փողոցում կարի ձեռնարկություն էր բացել, բանակի պատվերներն էր կատարում, գյուղերից մթերք էր բերում, հանձնում «Ստեփտորգ»-ին՝ բնակչությանը մատակարարելու համար): Այն էլ ասենք, որ Աղասի Սաֆարյանի հինգ երեխաների անուններն ընկերներն են դրել: Ահա թե ինչպես է ամենափոքրին տրվել Հերմես անունը: Ընկերները եկել էին իրենց «տուն»՝ շնորհավորելու նորածնին: Այդ պահին մի քանի կանայք (ուսուցչուհիները) նրան լողացնելու գործով էին զբաղված: Մեկը սրբիչն էր պահում, մյուսը՝ ջուրը լցնում, ու այդպես վազվզում էին փոքրիկի շուրջը: Դասախոսներից մեկը, որը փիլիսոփայություն էր դասավանդում, որի ազգանունը Ժաննետան չի հիշում, տեսնելով այդ տեսարանը՝ բացականչել էր. «Ոնց որ Հերմեսը լինի»: Ու այդպես տղայի անունը կնքվել է: Այդպես նաև մյուսների՝ Հենրիխի, Ջուլիետայի, Ջորիկի, Ժաննետայի անունները: Բայց չհեռանանք թեմայից: Մանկության հետ Ժաննետայի բոլոր հուշերը կապված են մթերք, նավթ ձեռք բերելու հերթերի հետ: Այդ թաղամասում էլեկտրականություն չկար, մարդիկ լամպի լույսի տակ էին անում ամեն ինչ: Էլեկտրականությունը միայն քաղաքի կենտրոնում էր: Ժաննետան երեխայական վրդովմունքով մորը բողոքում էր, թե ինչու չեն իրենք էլ քաղաքում ապրում, այլ եկել են այդ անտառը: Մայրը բացատրում էր, որ հայրը ցանկացել է ինստիտուտ կառուցել, որ քաղաքը մեծանա, զարգանա:

Երբ գրում էի հոդվածը, հարցուփորձ արեցի, թե ով է ճանաչում Մարգո Աթայանին: Վաստակաշատ մանկավարժ Բահատուր Դավթյանը, որը որոշ ժամանակ աշխատել է երեկոյան դպրոցում, ասաց, շատ պարկեշտ և խելացի կին էր, բայց միշտ՝ տխուր և ինքնամփոփ:

Մոր ամենամեծ հենարանը եղել է վեցամյա Ժաննետան: «Դու ես ինձ սիրտ տվել, առանց քեզ ի՞նչ կանեի»,- հետագայում ասել էր մայրը: Եվ ոչ միայն նրա համար, որ աղջիկը 2 տարեկան եղբորը մայրություն էր անում, տանտիկնություն, այլև ստիպված է եղել արմունկներով պաշտպանել իրենց: Ճիշտ է, ճանաչողները հարգել են, ափսոսացել, որ «Աղասու նման մարդու գլուխը տարան կերան, քանի որ մի Ղարաբաղ էր, մի Սաֆարյան», բայց նաև քիչ չէին նրանք, ովքեր քարկոծում էին բառի ամենախիսկական իմաստով: Հացի հերթերում անգամ կանայք էին անվայելուչ խոսքեր ասում որպես ժողովրդի թշնամի, առավել ևս՝ թաղամասի մեծ տղաները: Ժաննետան պատմում է, որ մորը չվշտացնելու համար երբեք այդ մասին չէր պատմում նրան, ինքն էր իր հարցերը լուծում: Տան մոտակայքում ներքին գործերի վարչության շենքն էր, որտեղ մեկը կար Բախշի անունով (Ժաննետայի հիշողությամբ՝ միլիցիայի պետ): Միշտ նրա մոտ էր վազում, երբ իրենց նեղացնում էին, և նա նրանց կապը քաշում էր: Ժաննետան այսօր էլ երբ եկեղեցի է մտնում՝ մոմ վառելու ծնողների համար, անպայման «Բախշի ձյաձյայի» համար էլ է վառում: Ափսոս, չի հաջողվել իմանալ նրա ազգանունը, նրա զավակների, թոռների մասին, որպեսզի գոնե նրանց իր երախտագիտությունը հայտնի: Եթե ինչ-որ մեկը գիտի նրա գերդաստանի մասին, թող տեղեկացնի:

Ժաննետա Սաֆարյանն այսօր 75 տարեկան է, ապրում է Երևանում: Քիմիայի հետազոտական ինստիտուտում աշխատել է որպես կրտսեր գիտաշխատող: Ճակատագիրը բարեհաճ չի եղել նրա նկատմամբ նաև հասուն տարիքում. նրան երեխա չի պարգևել: Վաղաժամ զրկվել է նաև ամուսնուց, որը նույն գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայի վարիչն էր, քիմիական գիտությունների թեկնածու: Հոր մեծ ընտանիքից ինքն է մնացել և քույրը՝ Ջուլիետան, որն ապրում է Մոսկվայում: Ժաննետայի կյանքի իմաստը դարձել է հոր անունը վերականգնելը, այդ տարիների մեր շատ մտավորականների պես անշիրիմ մնացած նրա հիշատակը որևէ ձևով հավերժացնելը:

Բարոյական, ֆիզիկական և նյութական

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ծանր մանկության հուշերն աղջկան ուղեկցում են առ այսօր: Այսօր էլ այդ դառնությունների հետքերը մնում են նրա վրա: Ճակատագրի հեգնանքով մանկության տարիներին կերակրողին կորցրածի թոշակից էին զրկել, հիմա էլ՝ բռնադատվածի, թեպետ նրա գլխավոր նպատակը դրան հասնելը չէ, այլ հորից մոռացումի փոշին մաքրելը: Նրա հետ շփվելուց զարմանում ես, թե այդքան դառնություններ կրած կինը ինչպես է մնացել այդպես կենսուրախ:

Չենց միայն տարիներ շարունակ փաստաթղթերի տրցակը ձեռքին տարբեր ատյաններ դիմելը, որն իրենից առաջ մայրը և ավագ քույրն էին արել արդարությունը վերականգնելու հույսով, ամեն ինչի մասին խոսում է. և՛ ապրած, բայց չապրած կյանքի, և՛ ժամանակաշրջանի մասին:

Բերենք մի քանի փաստեր: Ադրբեջանի Մինիստրների խորհրդի սոցապահովության բաժնից Մարգո Աթայանին, պատճենն էլ՝ ԼՂԻՄ մարզսոցապահովության բաժնին (14.04.1949թ.) «քաղաքավարությամբ» պատասխանել են հետևյալ կերպ, որն իր հիմքում արդեն մերժում է պարունակում. «Ադրբեջանական ԽՍՀ կենսաթոշակային ապահովության բաժինը խնդրում է Ձեզ մտնել ԼՂԻՄ մարզսոցապահովության բաժին և հանձնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ կերակրողին կորցնելու կապակցությամբ թոշակ նշանակելու համար: Մարզսոցապահովությանը խնդրում ենք ընդունել և նրա բացատրություններն ուղարկել մեր կողմից ուսումնասիրելու համար: Միաժամանակ պետք է նաև կցված լինեն ապահովագրվողի մահը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև ՊԱԿ և ՆԳՆ մարմիններից



*Հանգստի ժամին. աջից՝ Աղասի Սաֆարյանը*

ստացած փաստաթղթերը: Չիշյալ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ձեր դիմումը չի քննարկվի»:

ԼՂԻՄ մարզսոցապահովության բաժինը նրա հարցմանը պատասխանել է. «Մարգո Աթայանին թոշակի տրամադրումը համապատասխան մարմինների կողմից մերժվել է ամուսնու՝ Աղասի Սաֆարյանի՝ ինքնասպանությամբ կյանքին վերջ տալու կապակցությամբ» (17.08.1950թ):

Ապա՝ «Ի պատասխան Ադրբեջանի Մինիստրների խորհրդին Ձեր դիմումի՝ պատասխանում ենք, որ Ձեր երեխաներին նպաստ նշանակելու հարցը հնարավոր է, որ թույլատրվի, եթե ներկայացվի փաստաթուղթ այն մասին, որ Ձեր ամուսնու ինքնասպանությունը կապված չի եղել պաշտոնեական դիրքի չարաշահման հետ կապված հանցագործության հետ» (25.08.1950թ.):

Այսպիսի բովանդակությամբ նամակներ մի քանի անգամ են հղվել պետական մարմիններ ու ամեն անգամ մերժվել նույն հիմքով: Եվ միայն այն բանից հետո, երբ Աղասի Սաֆարյանի դուստրը՝ Ջուլիետան, նամակ է գրել Մոսկվա՝ ժողկոմխորհի նախագահ Մոլոտովին, 1955թ. Ադրբեջանի դատախազությունից այսպիսի բովանդակությամբ նամակ են ստացել.

«Տրվում է Ջուլիետա Աղասիի Սաֆարյանին առ այն, որ նրա հոր՝ Աղասի Սաֆարյանի ինքնասպանության, որը տեղի է ունեցել 1949թ. հունվարի 29-ին, նյութերի ստուգման ժամանակ տվյալներ չեն եղել այն մասին, որ նա ենթարկվել է քրեական պատասխանատվության»: (Տեղեկանքը 1955թ. սեպտեմների 24-ի թվագրությամբ է):

Այսինքն՝ քրեական հետապնդում Աղասի Սաֆարյանի նկատմամբ չկար, ուրեմն և՝ չկար մեղադրանք: Իսկապես, հանիրավի «մարդու գլուխը տարան կերան»: Եվ դրանից ու նաև անձի պաշտամունքը քննադատող ԽՄԿԿ 20-րդ համագումարի լույսի ներքո ԼՂԻՄ մարզկոմում կայացած պլենումից հետո, երբ անմեղ զոհերի ցանկում նաև Աղասի Սաֆարյանի անունն է հնչեցվել, 1956թ. երեխաներին թոշակ են նշանակել: Ավելի ճիշտ՝ նշանակել են միայն երեքին, քանի որ երկուսն արդեն չափահաս էին: Յոթ տարի երեխաները հանիրավի զրկված են եղել կերակրողին կորցրածի ապրուստի նվազագույն միջոցից: «Դպրոցում ինձ ու քրոջս ուսուցիչները սկսեցին ուրիշ աչքով նայել, իսկ տնօրեն Քրիստափոր Ալեքսանդրովիչն ասում էր. «Ժաննետա, դու գլուխդ բարձր քայլիր, որ նման հայր ես ունեցել»: Իսկ եղել է ժամանակ, երբ պիոներական կազմակերպության շարքերն անցնող աշակերտների խմբից քրոջը բարձր համարում ունեցող ուսուցչուհիներից մեկը բոլորի ներկայությամբ հանել է շարքից՝ ասելով, որ ժողովրդի թշնամու աղջիկը իրավունք չունի պիոներ լինելու: «Դա ավելի մեծ պատիժ էր մեզ համար, քան թոշակից զրկվելը»,- դառնությամբ հիշում է Ժաննետան ու ավելացնում, բայց չէ՞ որ եթե անգամ հայրը դավաճան է, որդին պատասխանատու չէ հոր համար»:

Այդքանից հետո ցայսօր Աղասի Սաֆարյանի հինգ երեխաները, որոնցից երկուսն են մնացել, չեն կարողանում հոր արդարացման փաստաթուղթ ձեռք բերել: 2016թ. ԼՂՀ արդարադատության նախարարությանը Ջուլիետայի դիմումը հետևյալ պատասխանն է ունեցել.

«Հարգելի Ջուլիետա Աղասիի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունում մանրակրկիտ ուսումնասիրվել է ԼՂՀ արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր դիմումը՝ կապված 1949 թվականին ձեր հոր՝ Աղասի Գրիգորիի Սաֆարյանին անանուն նամակի հիման վրա մեղադրանք առաջադրելու հետ:

Ցավով ենք արձանագրում այն փաստը, որ մեր բազմավաստակ հայրենակիցն ու նրա ընտանիքի անդամները ստիպված են եղել հաղթահարել ճակատագրով նախասահմանված բոլոր խոչընդոտները: Բայց և այնպես, դիմումն ուսումնասիրելու ժամանակ հիացմունք ապրեցինք Ձեր ընտանիքի անկոտրում կամքով ու խիզախությամբ: Ի հեճուկս չարախոսների՝ Դուք և Ձեր ընտանիքի բոլոր անդամները չենթարկվեցիք ճակատագրի քմահաճույքներին և նպատակակետին հասցրիք Ձեր բոլոր երազանքները:

Ինչ վերաբերում է դիմումում նշված Ձեր խնդրանքին՝ կապված Ա.Սաֆարյանին արդարացնելու հետ, ապա պետք է նշենք, որ հնարավոր չէ արդարացման ընթացակարգի վերաբերյալ որևէ պարզաբանում տալ, քանի որ դիմումում բերված փաստերը լիարժեք և բավարար չեն՝ քրեական գործի հարուցման, դատավճռի առկայության և այլ տեղեկատվության բացակայության պատճառով:

Ելնելով վերը նշվածից՝ առաջարկում ենք դիմել համապատասխան պետությունների պետական արխիվադարաններ՝ համապատասխան տեղեկություններ ստանալու համար»:

Այդ «համապատասխան պետություն»-ը Ադրբեջանն է… Ասել է թե՝ մանկությունից տուժած երեխաներն այսօր էլ «պատժվում» են համապատասխան փաստաթղթի բացակայության պատճառով և զրկված են բռնադատվածի կարգավիճակ ունենալուց՝ դրանից բխող որոշակի արտոնություններից:

Ինչևէ: Ժաննետան փոքր-ինչ սփոփված է զգում, որ վերջերս հայրենի Կաղարծի գյուղի իրենց պապական տան պատին գոնե փակցրել է «Այս տանն ապրել է դպրոցի նախկին տնօրեն Աղասի Սաֆարյանը» մակագրությամբ հուշատախտակ: «Քուն թե արթուն՝ հորս հայացքն ուղեկցում է ինձ, որը կարծես ասում է՝ պատմեք իմ մասին ճշմարտությունը»,- ասում է նա: Ինչն էլ փորձեցինք անել սույն հոդվածով: Թող այն լինի գրավոր հուշարձան արժանավոր մտավորական Աղասի Սաֆարյանի հիշատակին:

**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ԽԱՂԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

*«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր լիարժեք զարգացում: Խաղը մի հսկայական լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգեկան աշխարհ է թափանցում կենդանի հասկացությունների, պատկերացումների համախումբ: Խաղը ջանասիրության և հետաքրքրության բոցավառող կայծ է»:*

**Վ.Ա. Սուխոմլինսկի**

Նախադպրոցական տարիքն ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, որը կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական մի-



ջավայրից՝ ընտանիք, պարտեզ, ընկերներ: Կարևոր է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան նախադպրոցականի դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, սովորելու հակում, հետաքրքրասիրություն…

Շփվելով նախադպրոցական տարիքի երեխաների հետ՝ մենք մեր առջև դնում ենք այսպիսի մանկավարժական խնդիրներ. երեխան խաղալով հասկանում է ինքն իրեն, ճանաչում է աշխարհը, գիտելիք է ձեռք բերում:



Խաղը երեխայի մտավոր զարգացման առաջնահերթ միջոցներից է: Այն երեխային մղում է անցնելու զարգացման մի աստիճանից մյուսը, այսինքն՝ նորածնի զգայական ընկալումներից դեպի նախադպրոցականի մինչգործնական, և ապա տարրական դպրոցը, երեխային հատուկ գործնական մտածողություն: Խաղը նպաստում է ճանաչողական ունակությունների զարգացմանը: Այն միաժամանակ ֆիզիկական, զգացմունքային և սոցիալական որակների ձևավորման կարևորագույն գործոն է:

Խաղի կարևոր նշանակությունն այն է, որ երեխան հանդես է գալիս այլ մարդու դերակատարմամբ ու աշխարհին նայում կարծես թե մեծահասակի տեսանկյունից: Երեխան խաղային իրավիճակ է տեղափոխում իր շրջապատի երևույթները: Նա ստեղծագործում, երևակայում և իր վերաբերմունքն է արտահայտում խաղի հերոսների նկատմամբ: Փոքրիկն ապրում է իր հերոսի հույզերով ու գործողություններով: Նրա մեջ ձևավորվում է ինքնուրույնություն դրսևորելու լայն հնարավորություն: Խաղերի մեջ են ձևավորվում երեխաների՝ դեռևս չգիտակցված նախնական պարտականություններն ու իրավունքները: Մանկական խաղերի մեծ մասը բնորոշվում է ուրախ, աշխույժ բովանդակությամբ և ավարտվում լավատեսորեն: Ընդօրինակելով սիրելի հերոսին՝ երեխան սկզբից վերարտադրում է նրա արտաքին, իսկ հետո՝ ներքին, բարոյական հատկությունները: Նա իրեն միաձուլում է սիրելի կերպարին՝ ապրելով նրա զգացմունքներով: Երեխային խաղի է դրդում ընդօրինակման հակումը:

Խաղը երեխաներին նախապատրաստում է դպրոցական ուսուցմանը, նպաստում անհրաժեշտ դիրքորոշման ձևավորմանը, օգնում կատարելու կամավոր ստանձնած պարտականությունները և ենթարկվելու կանոններին: Այն կարող է ծառայել երեխաների դաստիարակության և զարգացման բարդ խնդրի իրագործմանը միայն այն դեպքում, երբ ներառվում է կազմակերպվող և կառավարվող մանկավարժական գործընթացի մեջ: Խաղի մանկավարժական ղեկավարումն էականորեն տարբերվում է պարապմունքների ընթացքում դաստիարակին վերապահվող դերից: Ցանկացած տարիքի երեխա որևէ գործի մեջ ընդգրկվելու, որևէ բան հետազոտելու, իր ընտրությունը կատարելու կամ սկսած գործով հետևողականորեն զբաղվելու համար չընդմիջվող ժամանակի կարիք ունի:

Մեր մանկապարտեզում հետաքրքիր, խթանող զբաղմունքների դաշտ է նախապատրաստվում, և ընտրած գործը սկսելու առաջին պահը հնարավորինս դյուրին դարձվում: Դրական արդյունքի հասնելու համար ընտրվում են համապատասխան ճիշտ գործելակերպի եղանակներ: Երեխայի միայնակ կամ համատեղ խաղի նկատմամբ ցուցաբերվում է հարգալից վերաբերմունք: Դաստիարակները երեխաների հետ մասնակցում են տիկնիկներով, տարբեր առարկաներով խաղերին: Այդ ընթացքում երևակայական վարք է մշակվում: Օրինակ՝ երևակայական երեկույթի ժամանակ դաստիարակն ուտում է երևակայական ճաշը և հրճվում դրա համով: Օգնում է երեխաներին խաղի ընթացքում, ավելի երկար պահում հետաքրքրասիրության մթնոլորտում, այսինքն՝ իրապուրում որևէ առարկայով՝ հուշելով հետաքրքիր սյուժեներ:

Երեխաներն իրենց փոքրիկ մկանները խաղի մեջ մարզելու, նկարելու, կտրտելու և համանման գործողություններ կատարելու հնարավորություն են ունենում: Միայնակ կամ կողք կողքի խաղալու համար տրամադրվում են նույնատիպ խաղալիքներ: Խմբերում խաղալիքները դասավորված են բաց դարակներում, և փոքրիկները կարողանում են դրանք ինքնուրույնաբար վերցնել:

Կազմակերպվող խաղերը նպաստում են մանկական կոլեկտիվի համերաշխությանն ու համագործակցությանը, ընկերական առողջ, հանդուրժողական հարաբերությունների ձևավորմանը:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք նպաստել դրական հաղորդակցական հմտությունների արմատավորմանը, երեխաների համար առավել բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը:

**Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**
**«Ստեփանակերտի հ. 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն**

ՄԱՐԶԱԿԱՆ

# ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ



*Արցախում գործող մարզական առաջատար ֆեդերացիաների շարքն է համալրում «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիան, որի մարզիչներն ու մարզիկները չեն դադարում հաճելիորեն զարմացնել մեզ նորանոր ձեռքբերումներով՝ հարստացնելով մարզաշխարհը փայլուն հաղթանակներով ինչպես հայրենիքում, այնպես էլ երկրից դուրս: «Լուսարար»-ը հերթական հաճելի հանդիպումն ունեցավ ֆեդերացիայի մարզիչ, Եվրոպայի քառակի եւ աշխարհի կրկնակի չեմպիոն Արթուր ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ հետ: Կիոկուշինի աստղը ներկայացրեց վերջին ամիսներին ֆեդերացիայի արձանագրած հաջողությունները եւ կիսվեց առաջիկայում սպասվող մարզական իրադարձություններով:*

- ***Արթուր, պատմեք նախ ՀՀ-ում կայացած կիոկուշին կարատե դո միջազգային առաջնության մասին:***

- Ապրիլի 27-28-ը Հայաստանում կայացավ Կիոկուշինի միջազգային բաց առաջնություն, որին մասնակցեց 1250 մարզիկ ինչպես Հայաստանից, այնպես էլ Վրաստանից, Պարսկաստանից, ՌԴ-ից, Ուկրաինայից, Ղազախստանից, Իսրայելից, Գերմանիայից, Իրաքից: Արցախից մեկնեցինք 70 մարզիկ, 6 մարզիչ եւ 6 մրցավար: Առաջնությունն ընդգրկել էր 6-17 եւ 18+ տարիքային կարգերում պայքարող մարզիկներ: Մեզ հաջողվեց նման խոշոր մրցաշարում արձանագրել 14 առաջին տեղ, 13 երկրորդ տեղ, 13 երրորդ տեղ:

- ***Հավանաբար լարվածություն եւ ուժերի սպառում ունեցաք, ինչպե՞ս է դա անդրադառնում արդյունքի վրա:***



- Մրցաշար առ մրցաշար փորձի պաշարը հարստանում է, բայց նաեւ մրցաշարերն են սկսել ավելի լայն մասշտաբով անցնել, քան առաջ: Իհարկե, հյուծված էինք, բոլորս մոռացել էինք քնի, սննդի մասին: Բայց դա բնական է նման խոշոր մրցույթների անցկացման դեպքում: Այդքանով հանդերձ, ոգեւորված էինք բոլորս, իսկ արդյունքներն ավելի քան գոհացուցիչ էին: Մեր մարզիկների մոտ նկատվում է մասնագիտական որակական աճ: Ինչպես հայտնի է, Ռուսաստանի Դաշնությունն է առաջատարը կիոկուշինի ուժեղ մարզիկներ ունենալու հարցում, սակայն այս մրցաշարում փաստը փոխվեց. մեր մարզիկները ոչնչով չզիջեցին ռուս մրցակիցներին ու շնորհիվ մեր հատուկ կամքի ուժի կարողացան ավելի ուժեղ գտնվել ռուս մրցակիցների գենետիկորեն տրված ուժից:

- ***Ինչպես արդեն նշել էինք նախորդ համարներում, մայիսին տեղի ունեցավ աննախադեպ իրադարձություն. առաջին անգամ պատանիների Եվրոպայի չեմպիոն ունեցանք KWU վարկածով: Ի՞նչ զգացողություններ ունեիք, երբ Ձեր պարապած սանը փայլուն դրսեւորեց իրեն երեք մարտում եւ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:***

- Բուռն հույզեր ապրեցի, երբ առաջին անգամ իմ պարապած սանը հռչակվեց Եվրոպայի չեմպիոն՝ հանձին Արեն Կարապետյանի: Մարզչի համար աննկարագրելի ուրախություն է դա թերեւս: Բայց մենք դրանով չեզրափակվեցինք: Գերմանիայից վերադառնալուն պես սկսեցինք նախապատրաստվել հունիսի 1-2-ը Թբիլիսիում կայացած Կովկասի առաջնությանը ու նույնպես լավ արդյունք ունեցանք:

- ***Ի՞նչ բերեցիք Վրաստանում կայացած Կիոկուշին կարատեի Կովկասի առաջնությունից:***

- Բերեցինք 3 ոսկե, 4 արծաթե եւ 4 բրոնզե մեդալներ: Արցախից մասնակցելու էինք մեկնել 12 հոգով: Մեր սաներ Արտյոմ Մնացականյանը (-55 կգ, 14-15) եւ Վլադիմիր Ավագյանը (-50 կգ, 14-15) դարձան Կովկասի առաջնության հաղթողներ: Ինքս մասնակցեցի մեծահասակների (18+) տարիքային խմբում մինչեւ 65 կգ քաշային կարգում եւ հաղթեցի:

- ***Հուլիսը եւս հագեցած է իրադարձություններով: Ինչո՞վ նշանավորվեց հուլիսի սկիզբը ֆեդերացիայի համար:***



- Հուլիսի 1-7-ը մասնակցեցինք Բուլղարիայում կազմակերպված «Կամչիա» մեծագույն ուսումնամարզական հավաքին, որի ընթացքում, հուլիսի 2-ին Վառնայում Արցախից մեկնած 8 հոգանոց կազմով մասնակցեցինք պատանիների եւ երիտասարդների Կիոկուշին կարատեի աշխարհի գավաթի խաղարկությանը: Մեր մարզիկներ Արա Միքայելյանն ու Արեն Կարապետյանն զբաղեցրին 2-րդ եւ 3-րդ տեղեր: Չնայած ընդամենը երկու մեդալ ունեցանք, բայց ես գոհ եմ մարզիկների ինքնադրսեւորումից: Ամենամեծ հաղթանակը համարում եմ գավաթի խաղարկությանը մասնակցելը: Ճիշտ է, մրցավարներն այնքան էլ անկողմնակալ չէին, ծագեցին միավորներին վերաբերող վիճահարույց հարցեր, որոնց ամփոփումը կատարելով՝ մարզիկներին որպես պատգամ ասում եմ հետեւյալը. պետք է այնպես հաղթել, որ միավորները տրվեն հստակ, ոչ մի կասկած կամ վեճ չառաջանա մրցավարների մոտ: Ուրեմն, պետք է աշխատել եւ ձգտել բացարձակ հաղթանակների:

- ***Իսկ ինչպե՞ս անցավ հավաքը, ի՞նչ նորություններ կային ընդօրինակելու:***



- «Կամչիա» ուսումնամարզական հավաքն աշխարհում ամենամեծ հավաքն է, որին մասնակցում են 1800 մարզիկներ աշխարհի 40 պետություններից: Արցախից մասնակցեցինք 10 հոգով: Կազմակերպված էր բարձր մակարդակով: Լավ հնարավորություն է՝ ձեռք բերելու մարզական եւ մարզչական նոր հմտություններ: Շփվելով միեւնույն մարտարվեստը պարապող տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ՝ ձեռք ենք բերում նոր փորձ եւ զարգացածության նոր մակարդակ: Ընդօրինակելու, իհարկե, շատ բան ունեցանք: Փորձում ենք նորամուծություններ մտցնել մեր մարզաշխարհի մեջ եւ նոր տակտիկա կիրառել, շարժվել ժամանակի հետ համահունչ, միջազգային նորմերին համապատասխան՝ զարգացնելով սպորտը Արցախում: Պայքարում ենք հնացած կարծրատիպերը մեր մտածելակերպից դուրս մղելու համար եւ առաջին քայլը, որը փորձում ենք կատարել, մեծամասնությանը հասկացնելն է, որ սպորտը եւ ֆիզկուլտուրան պարտադիր են բոլորի համար՝ անկախ սեռից ու տարիքից:

- ***Ի՞նչ միջոցառումներ եւ մրցաշարեր են սպասվում առաջիկայում:***

- Ներկա պահին աշխատում ենք կիոկուշինով պարապող մարզիկների քանակն ավելացնել Արցախի շրջաններում: Ընդհանուր 350 մարզիկ ունենք ֆեդերացիայում: Հադրութի շրջանի համար արդեն նոր խմբակ ունենք, որտեղ, հույս ունենք, որ ավելի շատ մարզիկներ կներգրավենք: Հուլիսի վերջին նախատեսում ենք ֆեդերացիայի ողջ անձնակազմով գրավել Դիզափայտ լեռան բարձունքը եւ ամենաբարձր տեղում պարապմունք անել: Հոկտեմբերին նախատեսում ենք մասնակցել Պորտուգալիայի Պորտո քաղաքում կայանալիք Եվրոպայի մեծահասակների առաջնությանը: Նոյեմբերին կմասնակցենք ՀՀ կիոկուշինի գավաթի խաղարկությանը: Դեկտեմբերին Նորսուլտանում՝ Ղազախստանում կմասնակցենք կիոկուշինի աշխարհի առաջնությանը:

- ***Արթուր, ցանկանում ենք բարի կատարում ծավալուն իրադարձություններով հագեցած ձեր ծրագրի, նորանոր հաղթանակներ եւ հաջողություն:***

# ԱՐՑԱԽԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Արցախի բռնցքամարտի ֆեդերացիայում կոփվում են շուրջ 300 մարզիկներ: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ բռնցքամարտն Արցախում լայն տարածում ու մասսայականացում ունի եւ սիրված մարզաձեւ է արցախցիների համար: Ֆեդերացիայի մարզիչ Գեւորգ Թորոսյանից տեղեկացանք մեր բռնցքամարտիկների վերջին հաջողությունների եւ սպասվող մարզական լայնամասշտաբ միջոցառման մասին:

Գեւորգ Թորոսյանը հրավիրվել է Արցախ բռնցքամարտի ֆեդերացիայում մարզչական գործունեություն ծավալելու նպատակով: 2016-ից առ այսօր բռնցքամարտ է պարապում Ստեփանակերտի ՄՊՄԴ-ի մարզիկների հետ: Ներկայում ունի շուրջ 70 սան չորս տարիքային խմբերում:

Մարզիչ Գեւորգ Թորոսյանի գլխավորությամբ ֆեդերացիայի հինգ մարզիկ մասնակցել է հուլիսի 1-7-ը ՀՀ-ում կայացած կրտսեր տարիքի պատանիների բռնցքամարտի առաջնությանը: Մրցաշարին մասնակցում էին ՀՀ բոլոր շրջաններից շուրջ 220 բռնցքամարտիկներ՝ ծնված 2005 եւ 2006 թվականներին: Արցախը ներկայացնող բռնցքամարտիկներ Գոռ Բեգլարյանը 44,5 կգ քաշայանին կարգում զբաղեցրել է երկրորդ մրցանակային տեղ, Տարոն Սարգսյանը 65 կգ ք.կ.-ում եւ Արթուր Սարգսյանը 43 կգ ք.կ.-ում զբաղեցրել են երրորդ մրցանակային տեղեր:



Մարզիչը լավ է գնահատում այս արդյունքը եւ նշում, որ ՀՀ բռնցքամարտի առաջնություններն անցնում են բարձր մակարդակով, մասնակցում են ուժեղագույն բռնցքամարտիկներ, որոնց հաղթանակի դեպքում է միայն հնարավորություն ընձեռվում մասնակցել Եվրոպայի առաջնության: Ուստի թեժ մրցապայքարը ոչ միայն ՀՀ բռնցքամարտի չեմպիոն ճանաչվելու համար էր, այլեւ՝ ճանապարհ բացելու դեպի Եվրոպա:

Ինչպես բոլոր մարզաձեւերում, բռնցքամարտում եւս կարեւոր են սեմինար-մարզումների հաճախակի անցկացումը, ուսումնամարզական հավաքների կազմակերպումը, մրցաշարերի պարբերականությունը: Ելնելով այդ նկատառումներից եւ Արցախում բռնցքամարտն ավելի մասսայականացնելու նպատակով Արցախի բռնցքամարտի ֆեդերացիան նախատեսում է օգոստոսին հերթական անգամ կազմակերպել Աշոտ Ղուլյանի անվան հուշամրցաշար: Գ.Թորոսյանի խոսքով՝ հուշամրցաշարին մասնակցելու հայտ են ներկայացրել ՀՀ բոլոր մարզերից շուրջ 170 մարզիկներ: Հայտ են ստացել նաեւ Վրաստանի Հանրապետությունից: Հուշամրցաշարն անցնելու է Ստեփանակերտի «Վալեքս Գարդեն» խաղադաշտում օգոստոսի 20-24-ը:

Գեւորգ Թորոսյանը մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ առանձնանշեց, որ տարբերություն չպիտի լինի Արցախում գործող մարզաձեւերի միջեւ, քանի որ նպատակն ընդհանուր է բոլորի համար. ներգրավել շատ մարզիկներ տարբեր մարզաձեւերի մեջ եւ դաստիարակել առողջ, ուժեղ, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերունդ:

ԱՇԽԱՐՀ

# ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՄԱՐԶԻԿ ԱԼԲԵՐՏ ԱՄԻՐՋԱՆՅԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՍԵՄԻՆԱՐՆ ԱՆՑԿԱՑՐԵՑ ԱՐՑԱԽՈՒՄ



Արցախի մարտարվեստների ասոցիացիայի մարզիչներ Գարեգին եւ Ալեքսան Աղաբալյանների նախաձեռնությամբ մուայ թայ եւ K-1 մարզաձեւերով երկրորդ անգամ սեմինար-մարզում անցկացնելու նպատակով Արցախ է ժամանել Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոն, պրոֆեսիոնալ մարզիկ Ալբերտ Ամիրջանյանը: Հուլիսի 14-ին Ստեփանակերտի 8-րդ դպրոցի մարզադահլիճում մուայ թայով պարապող շուրջ 100 մարզիկներ մասնակցեցին աշխարհահռչակ մարզիկի սեմինար-մարզմանը, որին ներկա էին Արցախի բռնցքամարտի ֆեդերացիայի ներկայացուցիչներ, թայլանդական բռնցքամարտի երկրպագուներ, ծնողներ, հյուրեր ՌԴ-ից եւ մարզասերներ: Սեմինար մարզումը հագեցած էր տեսական եւ գործնական պարապմունքով:

Մոսկվաբնակ 27-ամյա մարզիկ Ալբերտ Ամիրջանյանն Արցախում արմատներ ունի: Արցախը նրա հայրենիքն է, եւ ինչպես ինքն է նշում` Արցախում սպորտով զբաղվողների թիվն ու պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելուն են միտված նրա թեկուզեւ կարճաժամկետ սեմինար-մարզումները:

Ալբերտ Ամիրջանյանն սկսել է պարապել K-1, մուայ թայ եւ քիք բոքսինգ մարզաձեւերով 18 տարեկանում: Մարզական կարիերան զարգացնելու համար պարապմունքների է գնացել եւ շարունակում է մարզվել ՀՀ-ում, ՌԴ-ում, Եվրոպական երկրներում, իսկ ավելի հաճախ` մուայ թայի հայրենիք Թայլանդում: Հպարտությամբ կարող ենք նշել մեր հայրենակցի մարզական ձեռքբերումների մասին, որը լավ օրինակ է պրոֆեսիոնալ պարապող յուրաքանչյուր մարզիկի համար: Ալբերտ Ամիրջանյանը ՀՀ մուայ թայի հավաքական ավագ խմբի մարզիկ է, ՌԴ "Львиное Сердце" մարտական ակումբի անդամ, 2016թ. Եվրոպայի եւ աշխարհի մուայ թայի չեմպիոն, MIX FIGHT 42 միջազգային պրոֆեսիոնալ վարկանշային մրցաշարի հաղթող, ISKA Interkontinental գոտու տիրակալ: Վերջին տիտղոսին արժանանալու համար աշխարհի մարզիկները պետք է մարտ ունենան նրա հետ: Մարզական կարիերայի ընթացքում 22 մենամարտ է ունեցել, որոնցից 19-ում հռչակվել է չեմպիոն: «Ձգտում եմ աշխարհի պրոֆեսիոնալ չեմպիոն դառնալ, անընդհատ սպորտով զբաղվել, ինքս չեմպիոններ պատրաստել եւ բարձր պահել հայրենիքիս դրոշը: Ուրախ եմ, որ փոքր քաղաքում այսքան շատ մարզիկներ են պարապում մուայ թայով: Սեմինարի ընթացքում մարզիկներին հնարավորին չափ կփոխանցեմ մեր մարզաձեւի հզորագույն հնարներն ու գաղտնիքները, որոնք վերցրել եմ եվրոպական եւ թայլանդական ուժեղագույն ակումբներից եւ ինքս օգտագործում ու հասնում եմ հաղթանակի: Հույս ունեմ, որ կարճաժամկետ, բայց հագեցած սեմինար մարզումը կնպաստի Արցախի մարզիկների հաջողության հասնելուն: Կցանկանայի, որ Արցախում սպորտով զբաղվելու պայմաններն ավելի լավ լինեին, իսկ պրոֆեսիոնալ





մրցաշարերը հաճախակի կազմակերպվեին, ինչը կնպաստեր ավելի մեծ արդյունքներ ունենալուն»,- ասել է Ալբերտ Ամիրջանյանը:

Մարզիչ Գարեգին Աղաբալյանի խոսքով` սեմինար մարզումներն աշխարհում հայտնի պրոֆեսիոնալ մարզիկների կողմից հաճախակի են անցկացվելու: Փոխանցվող տեսական եւ գործնական գիտելիքները բարձրացնում են մարզիկների մարզական մակարդակը, իսկ առհասարակ հանդիպումը եւ շփումը հռչակավոր մարզիկների հետ, որոնց երկրպագում են եւ որոնցից յուրաքանչյուրից սովորելու բան ունեն, միանշանակ դրական եւ նպատակային է ազդում մարզիկների վրա:

# ՊԱՐԾԵՆՈՒՄ ԵՆ ՀՈՐ ԱՐԱՐՔՈՎ



Երբ լսում կամ ականատես ենք լինում զինծառայողների, անվտանգության համակարգի կամ փրկարար ծառայության աշխատակիցների սխրագործություններին, որոնք պարբերաբար փրկում են մարդկային կյանքեր ամենասուր սթրեսային պայմաններում, կարծես թե վերաբերվում ենք դրան ինչպես սովորական երեւույթի, որն այդպես էլ պետք է լինի: Սակայն երբ հասարակ քաղաքացին է օգնության ձեռք մեկնում կյանքի ու մահվան միջեւ գտնվող մարդուն եւ փրկում նրան, արժանի ենք համարում, թերեւս, հերոս կոչել նրան: Խոստովանենք, որ մեզանից ոչ բոլորն են պատրաստ կատարել այսպիսի վեհանձն քայլ` վտանգելով սեփական կյանքը, ինչպիսին որ արեց մեր հերոսը:

Սասուն Ավետիսյանը Ստեփանակերտի բնակիչ է, երեք հրաշալի զավակների հայր: Նրա որդիներ` 9-ամյա Անդրեյ եւ 7-ամյա Արման Ավետիսյանները մուայ թայի ֆեդերացիայի մարզիկներ են, պարապում են մարզիչ Ալեքսան Աղաբալյանի մոտ: Իրենց հոր բարի արարքի մասին հպարտությամբ են պատմում շրջապատողներին, որը պարծենալու եւ դաս քաղելու, հնարամտության եւ համարձակության վառ օրինակ է ոչ միայն նրանց համար:

Սասուն Ավետիսյանը Ստեփանակերտ-Երեւան երթուղային տաքսու վարորդ է: Հուլիսի 14-ին հերթական անգամ Երեւանի «Կիլիկիա» ավտոկայանում սպասում էր իր ուղեւորներին: Ժամը 21:00-22:00-ը ընկած ժամանակահատվածում մոտակայքից արձակվող խուճապահար ձայներ լսեց եւ մոտեցավ պարզելու: Աղմուկի եւ մթության մեջ քիչ հետո հասկացավ, որ մոտակա կամրջից իրեն ցած է նետել ոմն կին եւ ընկել ջրանցքի մեջ, որի վարար հոսանքն արդեն հասցրել էր տանել նրան բավականին հեռու: Շրջապատող մարդիկ խուճապահար գոռում էին. «Հանեցեք, փրկեցեք», բայց ոչ մեկը չէր համարձակվում սուզվել խեղդվողի հետեւից: Ինչպես պատմում է Սասունը, առաջին միտքը, որ ծագեց իր մոտ, օգնության գնալն էր, չնայած գիտակցում էր, որ կարող է նաեւ չհասցնել կամ չկարողանալ: Այնուամենայնիվ նետվեց ջուրը եւ հասավ ու բռնեց այդ կնոջը, որն արդեն ջրի երեսին էր, անգիտակից վիճակում: Խուճապի ժամանակ չկար. պետք էր սթափեցնել տուժածին: Դժվարությունը ոչ միայն խավարի մեջ, սառը ջրում, գիտակցությունը կորցրած մարդուն ուշքի բերելն էր, այլեւ վարար հոսանքին դիմադրելը, որը կարող էր տանել երկուսի կյանքը... Որպես հենման օբյեկտ` Սասունի միակ տարբերակը բարակ ճյուղն էր, որից կառչելով` ստիպված էր մեկ ձեռքով շրջել կնոջը, միաժամանակ սթափեցնող հարվածներով կյանքի բերել ապրելու ցանկությունը կորցրած անծանոթին: Բարեբախտաբար կինն ուշքի եկավ, բայց խնդրում էր, որ իրեն բաց թողնեն, թույլ տան մահանալ: Շատ դժվար էր պահպանել դիրքը նման պայմաններում, իսկ միայնակ հանել տուժածին ջրից, այն էլ թեք եւ լպրծուն տեղանքում, վարար հոսանքի դեպքում եւ մեկ ձեռքով, անհնար էր: Շուտով օգնության հասավ Մանուկ անունով երեւանցի եւս մեկ վարորդ: Փրկարարներն արդեն հասնում էին, շտապ օգնությունը կանչված էր: Պետք էր դիմանալ եւս մի քիչ: Նման դեպքում «մի քիչ սպասել» հասկացությունը հավերժություն է թվում, անծայրածիր խավար եւ կյանքի ու մահվան պայքար... Սասունի խոսքով` բացասական հույզերի տարափը մի պահ համակեց նրան, մտահոգված էր կնոջ ճակատագրով, պահի վտանգավորությամբ: Բայց չնահանջեց: Դեռ ավելին` սկսեց քաջալերանքի խոսքեր ասել կնոջը, բարձրացնել ոգին եւ հուսադրել նրան: Երբ արդեն հասան փրկարարներն ու պարան ձգեցին, որի օգնությամբ տղաները միասնական ուժերով կապեցին ու դուրս հանեցին ջրից կնոջը, նա արդեն ապրել էր ուզում: Բժիշկների



հսկողությամբ շուտով տեղափոխվեց հիվանդանոց: Կյանքին վտանգ չի սպառնում: Թե ինչու էր նա դիմել այդ ծայրահեղ քայլին, դեռեւս հայտնի չէ: Դեպքի հանգամանքները պարզաբանվում են ոստիկանության կողմից:

Պատահարից հետո շուրջ երկու ժամ Սասուն Ավետիսյանը փորձում էր վերականգնել ուժերը, վերանայել եւ վերաիմաստավորել կատարվածը: Բարեբախտաբար լուրջ վնասվածքներ չկան, իսկ ողբերգությունը կանխված է: Ինչպես հատուկ է վեհ գործեր կատարող մարդկանց, իրեն հերոս չի համարում: Մեզ հետ զրույցում ասաց, որ առաջին անգամ է նման իրավիճակում հայտնվել: Անկեղծ խոստովանեց, որ փրկարարական հմտությունների կամ մարզական կարողությունների չի տիրապետում: Մանկուց սիրել է լողը եւ ինքնուսուցմամբ կատարելագործել է լողի իր ընդունակությունները: Գուցե ինքն իր ուժերին վստահ լինելը, իսկ ավելի կոնկրետ` համարձակությունն ու բարձրաստիճան մարդկայնությունը դրդեցին նրան նետվել ջուրը` կյանք փրկելու: Ուրախ է, որ իրեն հաջողվել է մարդկային կյանք փրկել, որի արժեքն ու իմաստն ավելի կարեւորվեց:

*Երկէջը`*
***Սոնյա ԱՎԱԳՅԱՆԻ***

ԳԵՂԱԴԻՏԱԿ

# ԹԵՎԱՎՈՐ ԽՈՀԵՐ

Վահան ՀԱԿՈԲՅԱՆ



## ԼՃԱԿԸ

Խորտակվել են լճակում
Անտառ, այգի, սար ու ձոր,
Այս լճակը մեր բակում
Ինչքա՞ն մեծ է, ինչքա՞ն խոր:
Արևը լուռ է այնտեղ,
Նա քնել է ամպի տակ,
Լուրթ երկինքն է մոլորվել
Այս լճակում կապուտակ:
Այս լճակում են ապրում
Թիթեռ, ծիծառ, ծիլ ու ծառ,
Այս լճակը մեր բակում
Լուռ պահում է մի աշխարհ:

* * *

Ալի՞ք-ալի՞ք խոհերիս հետ,
Երազիս մեջ ալի՞ք-ալի՞ք:
Անցած, անդարձ
Հուշերիս հետ, հույսերիս մեջ ալի՞ք-ալի՞ք:
Կյանքիս քաղցր
Օրորի հետ,
Օրերի հետ ալի՞ք-ալի՞ք:
Ժպիտներով հեզահամբույր
Կյանքի համար
Ես դող, ես բույր,
Երազելով, վռազելով, նվազելով ալի՞ք-ալի՞ք:

* * *

Ես ի՞նչ եմ, ի՞նչ եմ...
Պարզապես ջինջ եմ,
Եվ լռությունը
Ինձ դուր է գալիս,
Չնայած առվի շողոտ շրթին չեմ,
Իմ մեջ աշխարհն է բուրում ոնց մայիս,
Իմ մեջ խոսքեր կան դեռ չարտասանված,
Եվ հույսեր, հույսեր, որ չեն կատարվում,
Լավս՝ հազար մի անգամ վերծանված,
Բայց ցավս հին է ու չի խաթարվում:
Ես ի՞նչ եմ, ի՞նչ եմ, պարզապես ջինջ եմ,
Եվ լռությունը
Ինձ դուր է գալիս,
Չնայած առվի շողոտ շրթին չեմ,
Իմ մեջ աշխարհն է բուրում ոնց մայիս:

## ՔԱՐԸ

Քարը լռում
Ու չի խոսում,
Քարի մոտով
Ջուր է հոսում,
Քարի վրա քար է ընկնում,
Քարին հենված ծառ է տնկվում,
Քարն իր ցավն է տրտում սգում,
Բայց իր տեղը նա չի լքում,
Քարը դեմ է կանգնում չարին,
Հետո կյանքին ժպտում բարի,
Քարին անգամ օձն է խայթում,
Քարի վրա ռումբ է պայթում,
Քարն իր վրա սար է պահում,
Քարը հոգի ունի անհուն,
Քարին լույսի շողն է սահում,
Լռելով է քարը շահում,
Քարն իր թերին ինքն է շտկում,
Մի աշխարհ կա քարի սրտում:

* * *

Օրը կախվել է արևածագից,
Օրը թափվել է
Էության մեջ,
Օրն իմ հոգսերից
Առնում է թախիծ,
Օրվա ժխորում
Սիրտս է դառնում խեղճ…

* * *

Շանթը ամպի հետ
Կռիվ է տալիս
Ու հուր մտրակով
Ծեծում է նրան,
Եվ ուժեղ ցավից
Ամպը երկնքում
Գոռում է, լալիս,
Անձրև է գալիս
Աշխարհի վրա:

* * *

Երևի ծա՞ռն է
Բաղեղով տարվել,
Իսկ բաղեղն էլ, տե՞ս,
Նրան է փարվել:
Փարվել է ամուր
Ու կպել կաշվին
Ու ապրում է լուռ...
Բայց ծառի հաշվին:

* * *

Անձրևը մաղեց
Դեղնությունն աշնան,
Եվ պղնձագույն
Խաղերը գետնին
Հողմահարվեցին:
Աշնան դողացող
Սրունքները մերկ
Չյունին փարվեցին…

* * *

Արևը մաշեց
Ծանրությունն օրվա,
Հանդարտ կուտակեց
Իր շեկ վարսերը
Լեռան փեշերին:
Մութը դուրս քաշեց
Գլուխն իր ծրարված,
Եվ ծովը ժպտաց՝
Երկնքի խոհուն
Փայլը աչքերին:

* * *

Սարը արևն է
Շալակած տանում,
Վազող գետակի
Ցոլքերում ջինջ, ջինջ
Արևներ կան դեռ:
Ծառերը կանգնել,
Կանաչ շալերը
Գցած ուսերին,
Սգվոր կանանց պես
Արևն են թաղում:
Դեպի խաղաղ քուն
Արևն են ճամփում:

* * *

Ինձ տարեք մի տեղ,
Ինձ տարեք հեռու,
Այնտեղ, ուր չկա
Աղաղակ ու ճիչ,
Ուր բերկրանքն է շատ,
Տառապանքը քիչ,
Ուր չկա դրժում,
Կա վստահություն,
Ուր կա միայն սեր
Եվ իշխանություն,
Ուր չկա խանդող,
Ու չկա կավատ,
Ուր ոչինչ չկա,
Կա միայն հավատ:

# ՍԵՄԻՆԱՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Հուլիսի 2-ին Արցախի Հանրապետության կառավարության շենքում արցախցի երիտասարդ գրող Վովա Արզումանյանի նախաձեռնությամբ և «Երիտասարդական հանրային հետազոտությունների կենտրոն»-ի աջակցությամբ կազմակերպվել է «Արցախի գրական դարբնոց» երիտասարդ ստեղծագործողների սեմինար-քննարկում: Բացման խոսքով հանդես է եկել Վովա Արզումանյանը, որը մասնավորապես ասել է.

- Լավ մեղեդիներ կարելի է նվագել և՛ նոր ջութակով, և՛ հին... Իսկ շատերը այդ մեղեդին նվագում են գրչով... նոր, բայց տաղանդավոր:

Ողջունելով ներկաներին՝ Վ.Արզումանյանը ծանոթացրեց սեմինարի օրակարգին, այնուհետև խոսքը փոխանցեց «Երիտասարդական հանրային հետազոտությունների կենտրոն»-ի նախագահ Անի Առաքելյանին: Ա. Առաքելյանը իր հերթին շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար՝ կարևորելով նման հանդիպումները:

Օրհնության խոսքով հանդես է եկել Արցախի թեմի ՔԴԿ տնօրեն, Ասկերանի շրջանի հոգևոր հովիվ, ստեղծագործող Տեր Մեսրոպ քահանա Խունոյանը:

Նա հանդես է եկել նաև «Ստեղծագործությունը և մարդու հոգին» թեմայով:

«Ցանկացած ստեղծագործության մեջ մարդ ներդնում է իրեն, իր մտքերը, զգացմունքները, ցանկություններն ու երազանքները, իր հավատն ու խանդավառությունը»,- նշել է հոգևոր հովիվը:

Ելույթներով հանդես են եկել նաև Մարտունու Ա.Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի փոխտնօրեն, ստեղծագործող Սերգեյ Սաֆարյանը, «Աշխարհի հայեր» մշակութային ՀԿ նախագահ Անահիտ Դանիելյանը, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, երիտասարդ գրող Սոնա Համբարձումյանը, երիտասարդ գրականագետներ, ստեղծագործողներ և այլք:

Միջոցառմանը ներկա ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ծառայող, երիտասարդ գրող Նանար Պողոսյանն էլ իր ելույթում անդրադարձել է հեղինակային իրավունքների պաշտպանության հարցերին:

Նաև իրենց ստեղծագործություններով հանդես են եկել մի շարք երիտասարդ ստեղծագործողներ:

Սեմինարին իր գրքերն էր նվեր ուղարկել արմատներով Արցախից, երևանաբնակ Ալբինա Գրիգորյանը (գրական անունը՝ Տալիթա):

Տալիթայի գրքերի մասին խոսել է Վովա Արզումանյանը, այնուհետև Տալիթայի կողմից մակագրված գրքերը բաժանել ներկաներին:

Վերջում Վ.Արզումանյանը հանդես է եկել ելույթով՝ «Հայրենանդարձությունը գրական ստեղծագործությունների մեջ» թեմայով: Բոլոր մասնակիցները օգոստոս ամսին ՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք երիտասարդական հանդիպման ընթացքում կստանան հավաստագրեր:

**Երիտասարդական հանրային հետազոտությունների կենտրոնի Լրատվության բաժին**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Արցախի պետական համալսարանը ս.թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 12-ը կազմակերպում է 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի ընդունելության փաստաթղթերի ընդունումը հետևյալ մասնագիտությունների գծով.**

1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
2. Կենսաբանություն
3. Աշխարհագրություն
4. Ֆիզիկա
5. Մաթեմատիկա
6. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
7. Նախնական զինվորական պատրաստություն
8. Պատմություն
9. Հայոց լեզու և գրականություն
10. Ռուսաց լեզու և գրականություն
11. Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)
12. Իրավագիտություն
13. Դեղագործական քիմիա
14. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

*Դիմորդները պարտավոր են ներկայացնել.*

1. միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 6 լուսանկար (3X4 սմ չափսի)
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
4. զինվորական ծառայությանն առնչվող փաստաթղթեր (զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունն անցնելու մասին),
5. սոցիալական վիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում),
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում),
7. տվյալ և նախորդ տարվա միասնական քննությունների վկայագիր (առկայության դեպքում):

*Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել*
*047-95-17-24 հեռախոսահամարով:*

***ԿՈՐԵԼ Է***

*Հրաչիկ Լեւոնի Հակոբյանի 8-րդ դասարանի կրթության վկայականը (N Ա112665)՝ տրված 1997թ. Ստեփանակերտի հ. 10 միջնակարգ դպրոցի կողմից:*

*Համարել անվավեր:*

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 23 .07.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: